

ԱՄԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԳԼԻՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ



451 - ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏԱՐԻ - 1951

ԺԵ. ԴԱՐԱԳԱՐՋԻ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ՋՕՐԱՎԱՐԱՅՆ ՄԵՐՈՅ
ՀԱՋԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ

— Մ Ի Ո Ն —

ԻԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1951 .

≡ Մ Ա Ր Տ ≡

ԹԻԻ 3



ԳԼՈՐԳ ԵՍԹԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐԾՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒՄՈՑ
ԵՒ ԿԱՄՈՔ ԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՓՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ, ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵՄԱՐ
ԱԹՈՒՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՑ ՍՐՔՈՑ
ԷԶՄԻԱՆԻ:

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ,
ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐՔՈՑ ԷԶՄԻԱՆԻ,
ՈՂԱՌՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

«ԶԻ ԹԷՊԷՏ ԵՒ ԵՄԲ ԱՅՈՒ ՓՈՓՐ, ԵՒ ԹՈՒՈՎ ՑՈՑԺ ԸՆԴ ՓՈՐՈՒ ՍԱՀՄԱՆԵԱԼ,
ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՏԿԱՐ, ԵՒ ԸՆԴ ԱՅԼՈՎ ՑՈՂՈՎ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՀՆԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ՝
ՍԱԿԱՅՆ ԲԱԶՈՒՄ ԴՈՐԾՔ ԱՐՈՒԹԵԱՆ ԴՏԱՆԻՆ ԴՈՐԾԵԱԼ ԵՒ Ի ՄԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՍ,
ԵՒ ԱՐԺԱՆ ԴՐՈՑ ՅԻՇԱՏԱԿԻ»: Այսպէս է իմաստաբանել հայ ժողովրդի բազմադարեան
պատմութիւնը մեր երանելի եւ մեծահանճար Քերթովհայր՝ անմահ Խորենացիին:

Գրոյ յիշատակութեան եւ յաւէս յաւիժացման այդ հոգեզմայլ սխաղագործութիւն-
ները չեն եղել երբեք անիմաստ եւ արտաոյժ պատահականութիւններ: Բազմախորհուրդ,
բնածին եւ հոյակապ այդ մեծագործութիւնները բարոյական նշանակներն են եղել հայ
ժողովրդի եւ ցայսօն ապացոյցը նրա բարձր նկարագրի:

163-58

Բռնակալների մեծապես յարուցած դժման հալածանքների, վայրենի յորդանների և արինախում ենիչերիների ձեռնով բափած արեան հեղեղի, ազատնու հոյակապ պալատների և ազնիւ շինականաց համեմատ խնդիրների աւերածութեան և հրկիզման, հոգեւոր անմահան մեակոյքի անկրկնելի զանձերի կորստեան, յափեսակութեան և ոչնչացման անվերջ կրկնորդուած դառնագին օրերի, հոգեւոր առաքինութեան, բարոյական կորովի, ազգային մեակոյքի և հաւատական հերոսութեան այս զմայլիչ մեծագործութիւնները պատգամ ու աւանդ են հանդիսացել Հայկազեան հեճնորդ սերունդներին: Նոյա նախորոշել են ազգային առաջընթացի ուղեներները և կենսասու աղբիւր ծառայել ճանաչական նորանոր առաքինութեանց՝ հայրենասիրութեան, ազգաշինութեան, հոգեւոր վերածնութեան, նորահրաւ հերոսութեանց, համազգային սփոփանքի, միախառնութեան և լուսադրութեան:

Անքիւ ու անհամար է շարանը այդ սքանչելագործութեանց, որոնք խորհուրդ ու փայլ են տալիս մեր պատմական անցեալին, իմաստաւորում և առաքինազարդում բեռնաւորնաւապիս, բայց բազմախորհուրդ անցեալը և նորանոր առաքինութեանց ոգեկոչում հերոսածին ազգիս գալիք սերունդներին:

Այդ սքանչելագործութիւններից ու մեծագործութիւններից շատերն այժմ տարբեր ձեւով են ըմբռնուում հասարակական այս կամ այն խաւերի կողմից: Սակայն կայ մէկը այդ հրաշագործութիւններից, որ մեր ժողովրդի հոգում և հայրենական պատմութեան էջերում եղել է, կայ և կը մնայ յաւիտեան որպէս անմահ ու սրբանուէր կորով: Այդ՝ Աւարայրի հոգեցունց և հիաստանչ հակառակմարտն է, որի 1500-ամեակի անմեռ յիշատակն է տօնելու հայ հաւատացեալ ժողովուրդը 1951 թուի Բուն Բարեկենդանին:

«ՍՐԲՈՑ ՎՍՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐՍՅՆ ՄԵՐՈՑ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՑԻՑՆ. ՈՐԲ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ», և «ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՆԱՆԱՑԻՑ» հերոսական գործը՝ երախտապարտ ու երախտագէտ հայրենիքը, Ազգն ու եկեղեցին անվերապան միաբանութեամբ համարել են և այսօր եւս նմանապէս են որպէս մեծագոյն և սրբազնագոյն դրուագը հայ ժողովրդի անցեալի հերոսական պատմութեան իսկ հերոսամարտիկ նահատակներին՝ «նորահրաւ պատկաւոր»ներին արժանապէս դասել ազգային-եկեղեցական սրբոց դասը:

Ազատագրուած Հայրենիքիս շնորհիւ քաղաքներում քեզ գործարանային աւաններում, բանուորական արուարձաններում քեզ կուլտուրական շէնքերում, լուսաւորութեան ճանաչանքներում քեզ գիտութեան կառուներում, ամենուրեք նկարազարդուած են հիաստանչ գեղակերպարները բաշին Վարդանայ՝ շրջապատուած սովեստային յաղթանակակիր հերոսների պատկերներով:

Վեհիբաւ Հայրենեաց վաստակաւոր միապատեն ու բարեբաղուն, ալեգարդ աշուղդ քեզ երիտասարդ բանաստեղծը, բանդակագործը քեզ նկարիչը, երաժիշտը քեզ երգիչը, հրաշակեղծը, գեղեղեղ և ստեղծագործական մեծ աշխուժ անմահացրել են կորովի դէմքեր Վարդան-Ղեւոնդի:

Երբ այսօրն արտառուչ է պատմական արժեքաւորումն ու բարոյական գնահատականը Աւարայրի հերոսամարտի այսօր՝ Բնաշխարհի հարազատներս շարքերում, որոնք մեծագոյն եղանակութիւնն ունեն ապրելու, աշխատելու, ստեղծագործելու և մարտնչելու հայրենի հորիզոնների և Ազգային Պետութեան հովանու ներքո՝ ո՛չ ապաքեն աւելի են զգալու ի Սփիւռս ցրուեալ վաստախոս տարազիւ զաւակներս, որոնք տակաւին զուրկ են սիրեցեալ Հայրենիքի գեղատեսիլ երկնականարք, սիրեցեալ ազգիս ստեղծագործած կուլտուրական բարիքները և հայրենի ազգային իշխանութեան հզօր պաշտպանութիւնը վայելելու երանութիւնից, մեր տարաբախտ որդիները, որոնց համար ազգային հաւաքական գոյութեան բարոյական կենսասու կոռուները ազատ ու անկախ Հայրենիքին արժանանալու վառ յոյսերն են:

Աւարայրի հակառակմարտի Վարդանանց հերոսագործութեան և Ղեւոնդեանց նահատակութեան 1500-ամեակի համազգային և համաժողովրդական բազմախորհուրդ Մեծ Տօնի նախապատրաստման և հետագային կատարմանը այժմէն իսկ հաղորդակից է լինելու ամէն մի Հայ, ո՛րեւէ կը նա զսնուի, փառաբանուի ի՛նչ կարգերում էլ նա ապրի, կրօնա-

կան ի՛նչ դաւանանք էլ նա ունենայ, հասարակական ի՛նչ դիրք էլ նա վայելի եւ կուսակցական ի՛նչ համոզում էլ նա դաւանի:

Աւարայրը հայ ժողովրդի բազմադարեան անցեալի վեհագոյն ու պանծալի բարձունքն է հանդիսանում՝ հերոսական արապայտութիւնը Հայ Ազգի բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրութեան եւ ազգասիրութեան, եկեղեցական ուխտապահութեան, անձնուրաց հերոսութեան, հոգեւոր մշակոյթի, նուիրումութեան եւ մարտական կորովի:

Հայրենի իշխանութեան եւ Ազգային Եկեղեցու միասնական գլխաւորութեամբ սփռւած չեղաործուած Վարդանանց նակասամարտի եւ Ղեւոնդեանց նահապետութեան 1500-ամեակի տօնակատարութեան նախապատրաստութիւնը այժմէն իսկ պէ՛տ է մեծագոյն առիթը հանդիսանայ համայն Հայ ժողովրդին եւ առաւելապէս Սփիւռքի ողջ Հայութեան՝ վերլիւնելու այն յեղադրական անցեալը, որ հրաշալիքեղ եւ իմաստաւորեց Աւարայրի անմահ սխրագործութիւնը: Սակայն զլանալ դէպի այն հեռաւոր աշխարհը՝ ինքնակապակ չէ, այլ առիթ՝ ուսանելու Հայոց այդ մեծ ու սրբանուէր պատերազմի բոլոր ժառանգական դասը՝ որդեգրելու առաքինին ու հերոսականը մեր այսօրուայ հաւաքական գոյութեան հիմքերը կռել-կոփելու՝ անվերապան վճռականութեամբ դէն վանելով եւ արմատախիլ անելով այն ամէնը, ինչ վսանգում է Սփիւռքի գոյութեան, նաեւ՝ հայրենի աշխարհին եւ Ազգային Պետութեան անվսանգութեանը,

Աւարայրի հերոսամարտի 1500-ամեակի տօնակատարութեան նախօրեակին քէ հետագային հաւաքական իմաստութեամբ պատասխան է տրուելու այն հարցերին, քէ պատմական՝ արտաքին քէ ներքին ի՛նչ պատճառների արգասիք էր Աւարայրի նակասամարտը, ազգային-հաղափական եւ ազգային-կրօնական ի՛նչ ուժեր որոշեցին նակասամարտի ընթացքը եւ հաղափական քէ բարոյական իմաստութեան ի՛նչ ժառանգութիւն բողին Վարդանանք եւ Ղեւոնդեանք հետեւորդ սերունդին:

Հայաստանը աշխարհակալ անհրկու ուժերի անագորոյն բախումների մշտնջենական արիւնտ քաշերաբեմ լինելով, դարեւ շարունակ աւերածոււմ էր: Այդ արիւնտ անցեալում հայ ժողովուրդը կոտորոււմ էր, հայ հոգեւոր մշակոյթը հալածոււմ եւ հայ ազգային պետականութիւնը խախտոււմ:

Հայոց պատմութեան այդ հնագոյն շրջանում Հայաստանի նուանմանը ձգտող մրցակից պետութիւններն էին Բիւզանդիոն եւ Սասանեան Պարսկաստանը, որոնց բախումները ժամանակաւորապէս դադար առին այդ երկու բռնակալութիւնների միջեւ 387 թուի համաձայնութեամբ, որը կնքուեց ի հաշիւ Հայաստանի, որ մասնատուեց, ի հաշիւ հայ ժողովրդի, որ ծուռուեց. իսկ փոքր ինչ անց, նաեւ ազգային միասնական գերիշխան պետութեան, որ կործանուեց բիւզանդական զենքով եւ սասանեան մուրհի հարուածների ներքոյ:

Այս համաձայնութիւնը իրապէս ժամանակաւոր զինադադար էր միայն, որ չէր ապահովում եւ երբեք չէր կարող ապահովել տեւական խաղաղութիւն եւ տեղական բռնակալութեան բարեկեցութիւնը, այլ, ընդհակառակը, հայ ժողովրդին եւ հայ Հայրենիքը դատապարտում էր նորանոր եւ առաւելագոյն ծանր եւ դժման աղետների, քանի որ տարանջատել էր երբեմնի միասնական Հայաստանը, ջլատել նախկին անբաժան հայ ժողովուրդը եւ խորհակել երբեմնի հզօր ու միասնական ազգապետական իշխանութիւնը:

Թերեւ չէր բնաւին քրիստոնեայ հաւատակցի պատմութեանը հազար բիւզանդական միտ խորդախող բռնակալութեան լուծը, ցեղախտական Բիւզանդիոնի լուծը, որ ի սկզբանէ վարժուած էր գայրակեցուցիչ խոստումների եւ անպակաս ուխտադրժումների:

Սակայն առաւել ծանր էր վիճակը Սասանեան Պարսկաստանի լուծին տակ հեծող մարգագանական Հայաստանի եւ հայրենաբնակ Հայութեան. ծանր ու դժման՝ ո՛չ միայն հաղափականապէս, այլ եւ տնտեսապէս: Տնտեսական նեւումն ու հարստահարութեան ծանրագոյն բեռի տակ սնկում էր, առաջին հերթին եւ ամենից աւելի, հայ աշխատաւորը, հայ շինականը, որ մինչ այդ եւ հետագային էլ տառապում էր նաեւ հայրենի նախարարական աւատականութեան լուծի ներքոյ:

Սասանեան անողոք բռնապետութիւնը աշխատեց հայ ժողովրդին ամբողջապէս քայքայելու, փութաց Հայաստանում աշխարհագիր կազմակերպել, աւելի ծանրացնելու հա-

մար տեղից վերցուող հարկերը եւ տուրքերը: Հայոց մեծ պատերազմի անգուղակահան պատ. միջը՝ ոսկեծղիկն եղիւր, արամորմոք արանագրում է. «ՈՒՍՏԻ ԱՐԺԱՆ ԷՐ ԱՌՆՈՒՂ ՀԱՐԻՐ ԴԱՀԵԿԱՆ, ՆՈՅՆԶԱՓ ԿՐԿՆԷՐՆ ԵՒ ԱՌՆՈՒՐՆ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՍՑ ԵՐԻՑԱՆՑ. (ՀԱՐԿՍ) ԴՆԷՐՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՇԻՆԱՑ, ԱՅԼ ԵՒ ՍԻԵՐԱԿԱՑ, ՆԱ ԲՆԱԻ ՌՎ ԻՍԿ ԿԱՐԷ ՊԱՏՄԵԼ ՎԱՍՆ ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՄՏԻՑ ԵՒ ՍԱԿԻՑ, ԲՍԺԻՑ ԵՒ ՀԱՍԻՑ, ԼԵՐԱՆՑ ԵՒ ԴԱՀՏԱՑ ԵՒ ՄԱՅՐԵԱՑ. ՈՉ ԸՍՏ ԱՐՔՈՒՆԻ ԱՐԺԱՆԱԻՐՈՒԹԵԱՆ ԱՌՆՈՒՐՆ, ԱՅԼ ՀԻՆԱՐԱՐ ՅԱՓՇՏԱԿԵԼՈՎ, ՄԻՆԶԵԻ ԻՆՔԵԱՆՔ ԻՍԿ ՄԵԾԱՊԷՍ ԶԱՐՄԱՆԱՅԻՆ ԹԷ՛ ՈՒՍՏԻՐ ԱՅՍ ԱՄԵՆԱՅՆ ԴԱՆԶ ԵԼԱՆԷ, ԶԻՄՐԴ ՇԷՆ ԿԱՅՑԷ ԱՇԽԱՐՀՆ ՀԱՅՍՍՏԱՆԵԱՑ»:

Տնեսապէս արեւմտեւ Հայաստանը եւ կոստեւ հայ ժողովրդի գոյութեան պատուանդանը — ահա՛ քէ ի՛նչ անողոք քաղաքականութիւն էր ընդգրկել յազկերեան բռնապաշտութիւնը: Հարուածը ուժգին էր եւ աղէքը հարուածային: Աշխարհիկ քէ հոգեւորական, աւասակայ քէ շինական, արհեստաւոր քէ առեւտրական, կրում էին եւ զգում տնեսական հարուածի ծանրութիւնը: Համազգային աղէքը սեղծում էր միաժամանակ համազգային միասնական դիմադրութեան պահանջ ու կամք:

Աշխարհակալ զօրեղների ձեռքով Հայաստանը չնայած գրկուել էր իր ազգայնական միասնական իշխանութիւնից եւ վեհապետական իրաւունքներից, սակայն դեռ մնում էր Հայոց ազգային զօրք եւ մանաւանդ քաջամարտիկ այրուծին: Հեռացել Հայաստանից Հայրենիքի պաշտպան ազգային զօրք, գրկել հայ ժողովուրդը ազգային ինքնապաշտպանութեան եւ դիմադրութեան հիմնական ռազմական ուժից, օգտագործելով այն Պարսկաստանի սահմանների անձեռնմխելիութիւնը եւ պետականութեան անասանութիւնը պաշտպանելու, խնայելով պարսկական ազգային ռազմական ուժերը ի հաշիւ հայ զօրաբանակի եւ կուում ոչնչացնելով Հայոց ազգային բանակի պանծալի զօրական շարքերը — այս էր սասանեան բռնապաշտութեան նիւաղային ծրագիրը:

Վերացուել էին հայ աշխարհի ազգայնական միասնութիւնը, քաղաքական գերիշխանութիւնը եւ ընդհանրական ինքնօրէն կենտրոնը, սակայն կանգուն էին տակաւին նախարարական իշխանութիւնները աշխարհներում, երկրներում, մարզերում եւ ամրակուռ բերդերում: Աւաշիւսան նախարարների շարքում կային նաեւ այնպիսիները, որոնք իրենց տոնական իրաւանց շահերը զուգորդում էին ընդհանրական — համազգային իրաւանց ու շահերի հետ, իսկ ունեւ այդ նախարարներից, Մամիկոնեանց ղեկավարութեամբ, մեծապէս նախանձախնդիր էին համազգային միասնութեան, համերաշխութեան եւ զինակցութեան, ի փառս Հայրենիքի եւ ազգի, եւ ի փրկութիւն եւ վերականգնում Հայաստանեայց ազգային ինքնիշխան եւ գերիշխան պետութեան:

Վաղապէս նախասեւել ու սեղծել ռազմա-քաղաքական համազգային համերաշխութիւն ու գործակցութիւն դժուար էր, քանի որ գոյութիւն ունէր Սասանեան Պարսկաստանի դաժան եւ դաւադիր քաղաքականութիւնը Հայաստանի եւ հայ ժողովրդի նկատմամբ, որն ամեն կերպ հրահրում էր աւանդական միջնախարարական բռնամարտիկները, քաղաքական նախապիտիւնները, փառամոլ տրամադրութիւնները, կենտրոնախոյս տնտեսութիւնները, միշտ սպառնալիքներ կարգալով եւ մեր խոստումներ շուայելով:

Սակայն կային նաեւ մեծապէս ներողգեցիկ երկու բարոյական ուժեր, որոնք հոգեպէս շաղկապում եւ համազգայնօրէն կազմակերպում էին ողջ Հայութիւնը եւ պահպանում Հայ Հայրենիքը:

Այդ՝ հայ հոգեւոր մշակոյթն էր, հայեցի գիրն ու գրականութիւնը:

Այդ՝ Հայաստանեայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցին էր եւ իր նուիրական Մայր Աթոռը:

Սահակ Պարբեւի եւ Մեսրոպ Մաշտոցի սեղծած սփռնչեղազօր հայ գիրը եւ նրանց դաստիարակած քաղաքական սերունդի մեծագործութիւնը՝ հայ գրականութիւնը՝ հանդիսացան այն հոգեւոր անօրը, որ բարոյապէս վերածնեց հայ ժողովրդին եւ իմաստաւորեց նորա հանրային կեանքը:

Հայ գիրն ու գրականութիւնն էր, որ ազատագրեց հայ ժողովրդին եւ ներանոսա-

կան խաւարի վերապրումներից, եւ ասորանելեանկան օտարացնող ազդեցութիւններից: Հայաստանեայց եկեղեցու եւ հայկական մշակոյթի շնորհիւ եր, որ երկրայնօրէն անջատեալ եւ քաղաքականօրէն անիրաւացեալ հայ ժողովուրդը, Սասանեան Պարսկաստանում քե բիւզանդական կայսրութեան լուծի տակ, ինչպէս եւ բնաւարհից ի Սփիւռս տարագրեալ, պահպանեց իր գոյութիւնը եւ մնաց անբաժան - միասնական:

Հայ հոգեւոր դասն եր, որ գիտակ իր վեհ կոչման ու խորհուրդին, նախաձեռնողը, շարունակողն ու զլիաւորողը, կազմակերպողը, ոգեշնչողն ու իմաստաւորողը հանդիսացաւ ազգային-կրօնական մշակոյթի եւ ազգային-ժողովրդական միասնականութեան: Սահակ Պարբեւ եւ Մեսրոպ Մաշտոց, Յովսէփ Հոգոցիմցի քե Ղեւոնդ Նրեց, Գիւս Կարողիկոս քե Յովնանէս Մանգակունի, Մովսէս Խորենացի քե Նզնիկ Կողբացի, Նդիշեկ Վարդապետ քե Ղազար Փարպեցի եւ ամբողջ երկար շարանը ա՛յլ երանելիների ու վասակաւորների, ծնունդ էին հայ ժողովրդի եւ Հայ եկեղեցու, կրողներն էին ոչ միայն հոգեւոր կոչման, այլ եւ դաստիարակիչը Հայութեան, արքուն պահակողն ու պաշտպանը Ազգի ու Հայրենիքի, կրողն ու կենսագործողը ազգային հոգեւոր մշակոյթի եւ միաժամանակ մխիթարիչն ու յուսադրիչը ժողովրդին վիճակուած յարատեւ հալածանաց եւ աղէտից պահին եւ աւանդապահն ու հրահրողը, կրողն ու կազմակերպողը միացեալ եւ անկախ Հայաստանի, ազգային եւ ինքնիշխան պետութեան գաղափարների: Հայ հոգեւոր դասը խաղաղութեան քե պատերազմի ժամին, ռազմաճակատում քե քիկունքում, անձնուրաց արիւթեամբ իր ուսերին կրեց տանջանաց խաչը, բարձրացաւ հայկական Գողգոթան եւ Խաչելութեան իսկ բարձունքից՝ Հայրենիքի ազատութեան եւ Ազգի փրկութեան կոչն արեց հայ ժողովրդին:

Կրօնափոխել հայ ժողովրդին, ձուլել հայ բրիտանեութիւնը մազդեականութեան մեջ եւ դրանով իսկ վերացնել Հայաստանեայց Ազգային Առաքելական Սուրբ եկեղեցին, որ արտայայտիչն էր ո՛չ միայն բրիտանեական անարատ հաւատի, այլ եւ աղբիւր հայ ժողովրդի հոգեւոր առաքնութեան, ազգաբար ազգային-քաղաքական ազատութեան եւ միասնական Հայրենիքի — անա քե ի՛նչ չարանենգ ու դաժան որոշում է արձակում Սասանեան Պարսկաստանի գազազած բռնակալութիւնը Շապուհների եւ Յազկերտների, Դենեապունների եւ Մեհրենքսների բերնով: Սասանեան Պարսկաստանը ձգտում էր զրկել Հայ եկեղեցին եւ հայ հոգեւոր դասը ա՛յն դարաւոր իրաւունքներից եւ առանձնաւորութիւններից, որոնք վերապահուած էին հայրենի իշխանութեան օրօք ու ձեռօք, ա՛յն իրաւունքներից եւ առանձնաւորութիւններից, որոնք ի սպաս են դրուած եղել հայ գիր ու գրականութեան, դպրոցների ու հիւանդանոցների, աղբասների ու անկարների: — Խարխուլե ճեմեական եւ իրաւական հիմքերը եկեղեցու, հոգեւոր դասի, զրկել հոգեւորականութիւնը ժողովրդին խնամատարելու, լուսաւորելու, մխիթարելու կոչումից եւ հնարաւորութիւնից, ջլատել Հայաստանեայց Ազգային Առաքելական Սուրբ եկեղեցու միասնութիւնը, ստեղծելով հակաքրոնք, խրախուսելով կենսորոշախոյս տարրեր, անարժանքներին մեծարելով եւ արժանաւորներին հալածելով, սերմանելով որում գոտութեան, բորբոքելով հաստաւամու ու տեղաւորական շահերն ու տրամադրութիւնները, կասեցնել ու խաղաղ վերացնել հայ բրիտանեական կրօնի-հաւատի համագաղային յօդակապիչ եւութիւնը, բնութիւնն ու գործունեութիւնը:

Յազկերտ-Մեհրենքսները լաւ էին գիտակ, որ բիւզանդական կայսերական իշխանութիւնն էա, իր հերքին, բրիտանեայ կրօնակից Հայութեան դաւանափոխութեան ծրագիրն ու քաղաքականութիւնն էր առաջ քաշում եւ երբեք չէր գալ օգնութեան հայ ժողովրդին ու Հայ Ազգային եկեղեցուն:

Սակայն սասանեան դաժան ինքնակալութիւնն անտեսել էր, քե ո՛րքան է արմատաւորուել եւ արգասաւորուել բրիտանեական կրօնը հայ ժողովրդի հոգում, ո՛րքան է նա դարձել հոգեհարազատ եւ համագաղային հայ ժողովրդի համար: Նա հաշուի չէր առել նաեւ, քե ո՛րպիսի անխզելի կապերով է յօդակապուել Հայ եկեղեցին ու հայ հոգեւորականութիւնը հայ ժողովրդի հետ:

Եւ երբ յազկերտեան բռնակալութիւնը անցաւ իր ծրագրի կենսագործմանը ու կրօնափոխութեան հրամանը արձակեց, հայ ժողովրդը իր երանելի Հայրապետի՝ Յովսէփ Հոգոցիմցու զլիաւորութեամբ, Արտաշէսի Ազգային-եկեղեցական մեծ ժողովում տուեց իր

հոգեզմայլ պատասխանը. «**ՅԱՅՍՄ ՀԱՒԱՏՈՅ ԶՄԵԶ ՈՉ ՌՔ ԿԱՐԷ ԽԱԽՏԵԼ՝ Ո՛Չ ՀՐԵՇ-
ՏԱԿՔ ԵՒ Ո՛Չ ՄԱՐԴԻԿ, Ո՛Չ ՍՈՒՐ ԵՒ Ո՛Չ ՀՈՒՐ, Ո՛Չ ԶՈՒՐ, Ո՛Չ ԱՄԵՆԱՅՆ ԶԻՆՉ
ԵՒ ԴԱՌՆ ՀԱՐՈՒԱԾՔ»**»:

Հայ ազգային պետականությունը վերացուել էր, սակայն կենդանի էր եւ հոգեպէս
բաշարի հայ ժողովուրդը: Աւախիւսան քաղաւոր չկար, բայց հայ ժողովուրդին պահա-
կում էր Հայ Ազգային Եկեղեցին եւ հովուում իր.արքուն Հովապետը, որ ազգային-բա-
ղաւական իշխանութեան վերացմամբ դարձել էր ո՛չ միայն կրօնապետ Հայաստանայց
Առաքելական Եկեղեցու, այլ եւ միաժամանակ ազգապետ համայն Հայութեան:

Յուսադրուած Տիգրան, հրաւիրեալ հայ նախարարների ուրացութեամբ եւ կրօնա-
փոխութեան սին խոսմամբ, հաւատացած ժողովրդի խոնարհ հնազանդութեան, Սասան-
եան Պարսկաստանը, զինուած բանակով, զրադաշտական մոգերի հետ միասին ոտ կոխեց
մեր հայրենի սրբազան հողը եւ յանդգնեց աւերել քրիստոնէական տաճարները ու փոխա-
րենը հեքսանոսական ասրուսաններ կանգնել:

Եւ ահա այսեղ էր, որ հայ ժողովուրդը զգալ տուեց մոյի ու զոռ Յազկերտին, որ
Հայը մկրտուել է Տրդատ-Լուսաւորչեան աւագանու եւ վերամկրտուել Սահակ-Մեսրոպ-
եան հոգեւոր նոր տաճարում: Հայ ժողովուրդը միակամ եւ միահամուռ ծառացաւ եկտր
բռնակալի դէմ: «**ԺՈՂՈՎԵՑԻՆ ԶԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ՇԻՆՍԿԱՆԱՆ ԵՒ
ՍԶՍԱՆ, ԶԲԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ԶՄԵՆԱԿԵՑԱՆ, — պատմում է Եղիշեան, — ԵՐԵՒԵՑԱՆ
ԱՄԵՆԵՔԵԱՆ ԶԻՆԵԱԼՔ ԵՒ ՍԱՀԱՒԱՐՏԵԱԼՔ, ՍՈՒՐ ԸՆԴ ՄԷՋ ԵՒ ՎԱՀԱՆ Ի ԶԵՌՈՒՆ
ՈՉ ՄԻԱՅՆ ԱՐԱՆՑ ՔԱԶՍ, ԱՅԼ ՆԱԵՒ ԿԱՆԱՆՑ ԱՌՆԱԿԱՆԱՆ, ՊԱՏՐԱՍ Ի ՍՊԱՆԱ-
ՆԵԼ ԵՒ Ի ՄԵՌԱՆԵԼ»**»:

Այսպէս զիմաւորեց հենց ինքը՝ հայ շինական ժողովուրդը, որի շարքերում այդ
ժամանակ չկային հայ նախարարներ եւ իշխաններ, որոնք մոգերի ուղեկցութեամբ եւ
Պարսից զօրերի հետ գալիս էին Հայաստան, ազգուրացի եւ ուխտադրուծի զիմակով սե-
ւաւորում: Իր իշխանաւոր տէրերի կեղծուրացութեան անգիտակ, հայ շինական ժողո-
վուրդը սկիզբը դրեց Բագրեւանդում ազգային-ժողովրդական զիմաւորութեան, ազգային-
ազատագրական մեծ պատերազմին, որ սկզբնաւորուեց Բագրեւանդի Անգղ զիւղաւանում,
փառապատկուեց Աւարայրում եւ յաղթանակեց Նուարակի դաշնագրութեամբ: Բագրե-
ւանդը հերոսական մարտակոչ էր: Բագրեւանդը միաժամանակ բարոյական մեծախորհուրդ
նշանակեց եւ հայ ժողովրդի եւ Հայ Ազգային Եկեղեցու հոգեւոր-բաղաւական միասնակա-
նութեան: Բագրեւանդում հանդէս եկաւ ինքը, բուն ժողովուրդը, որին զլիսաւորում եւ
առաջնորդում էր ո՛չ քաղաւոր, ո՛չ նախարար եւ ո՛չ իշխան, այլ այդ իսկ ժողովրդի
հարազատ եւ անդաւանան հոգեւոր հովիւր՝ Ղեւոնդ Նեքը:

Բագրեւանդի ազգային-ժողովրդական այս հոյակապ ընդլնամբն սկիզբ էր առ-
նում այն հոգեզմայլ հերոսամարտը, որ առաքինութեան դափնիներով առյաւեւ փառա-
զարդեց ու յաչս համայն աշխարհի անմահացրեց Հայաստանայց Առաքելական Եկեղե-
ցուն, որի ծոցից դուրս են եկել ազգային ազատագրական պայքարի պանծալի հոգեւոր
դէմքեր՝ Սահակ ու Թաքիկ Եպիսկոպոսներ, Արշէն ու Մուշէ Երեցներ, Սամուէլ ու Աբ-
րահամ Բահաններ, Քաջաջ սարկաւազներ եւ ա՛յլ առաքինազարդ կրօնաւորներ, որոնց
սուրբ յիշատակը յաւերժ խնկելի է հաւատացեալ հայ ժողովրդի հոգում:

Համաժողովրդական այս խանդավառութիւնը եւ բաշարի վնասկանութիւնը անվե-
րապահօրէն ոգեւորել էր անյաղարհարելի նշանաբան-պատգամներ. «**ՊԱՏՐԱՍ ԵՄՔ Ի
ՍՊԱՆԱՆԵԼ ԵՒ Ի ՄԵՌԱՆԵԼ, Ի ՀԱԼԱԾԱՆՍ ԵՒ Ի ՄԱՀ»**, «**ՔԱԶՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՅՆ
ՄԵՌՏՈՒՔ, ԶԱՆՈՒՆ ԵՒ ԶՈԴԻՍ ԵՒԵԹ ԺԱՌԱՆԴԵՍՏՈՒՔ»**, «**ՄԱՀ ՈՉ ԻՄԱՏԵԱԼ ՄԱՀ
Է, ՄԱՀ ԻՄԱՏԵԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ»**»:

Անձնուէր հայրենասիրութեան եւ ուխտապահութեան այս նուիրական դրօշակի
ներոյ ալեկոծուեց ու ծառացաւ ժողովրդական տարերային ալիքը, ի տես որոյ կեղծու-
րացութեան ֆոյր պատառեցին նաեւ բաշամարտիկ նախարար Հայոց, փութանակի ձեռ-
նամուխ լինելով կազմակերպել ու ռազմականօրէն ղեկավարել վերահաս օրհասական գո-
տնարար սասանեան գոռոզ բռնակալի հետ:

451 բուլի վաղ զարնան, Արսազ գաւառի սահմաններում, Տղմուս գետի ափին, Աւարայր զիւղի մօտ տեղի ունեցաւ հակասամարտը:

«ԵՐԿԻՒՂ ԹԵՐԱՀԱՄԱՏՈՒԹԵԱՆ Է ՆՇԱՆԱԿ, ՉԹԵՐԱՀԱՄԱՏՈՒԹԻՒՆ ՄԵՔ Ի ՄԷՆՉ ՎԱՂ ՄԵՐԺԵՑԱՔ, ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ԵՐԿԻՒՂ ՓԱԽԻՑԷ Ի ՄՏԱՅ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ ՄԵՐՈՑ» — այսպէս է մարտակոչում ֆաշարի հայ զօրաֆաշաց լաղր սպարապետն Հայոց, անմահ Վարդանն Մամիկոնեան՝ հակասամարտի նախօրեակին:

Ըստ Աւարայրի հերոսամարտի պատմիչի վկայութեան, «ՈՉ ԵՐԵՒԷՐ ԱՅՆՈՒՀԵՏԵՒ ԱՌԱՒԵԼ ՏԷՐՆ ՔԱՆ ՉԾԱՌԱՅ, ԵՒ ՈՉ ԱՉԱՏ ՓԱՓԿԱՅԵԱԼ ՔԱՆ ՉԳԵՂՋՈՒԿ ՎՇՏԱՆԵԱԼ, ԵՒ ՈՉ ՈՔ ՔԱՆ ՉՈՔ ՆՈՒԱԶԵՏԵԱԼ ՀԱՅՈՒԹԵՆԷ, ՄԻ ՍԻՐՏ ՅՕԺԱՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԵՏՈՒՆ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ԾԵՐՈՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ»:

Սկսում է հակասամարտը: Ականատես պատմիչը հետեւեալ ձեւով է նկարագրում այն. «ԵՐԿՈՔԵԱՆ ԿՈՂՄԱՆՔՆ ԼԻ ՍՐՏՄՏՈՒԹԵԱՄԲ, ԵՒ ԴԱՀԱՆԱՅԵԱԼ ՉՕՐՈՒԹԵԱՄԲ ՅԻՐԵԱՐՍ ՅՐԱԶԱԿԷՐՆ ԵՐԿՈՔԵԱՆ ԵՒ ՍՄԲՈՒ ԱՂԱՂԱԿԷՆ ԵՐԿՈՑՈՒՆՑ ԿՈՂՄԱՆՑ, ԻՐԲԵՒ Ի ՄԷՉ ԱՄՊՈՑ ՇՓՈՔԵԼՈՑ, ՃԱՅԹՄՈՒՆՍ ԴՈՐԾԷՐ, ԵՒ ՀՆՉՈՒՄՆ ՉԱՅՆԻՑ ՉՔԱՐԱՆՉԱԻՍ ԼԵՐԱՆՑ ՇԱՐԺԷՐ: Ի ԲԱԶՄՈՒԹԵՆԷ ՍԱՀԱՒԱՐՏԻՑՆ ԵՒ Ի ՓԱՅԼՈՒՆ ՊԱՏԵՆԱԶԷՆ ՎԱՌԵԼՈՅՆ ԻՐԲԵՒ ՆՇՈՅԼՔ ՃԱՌԱԴԱՅԹԻՑ ԱՐԵԴԱԿԱՆ ՀՍԱՆԷՐՆ, ՆԱԵՒ Ի ԲԱԶՈՒՄ ՍՈՒՍԵՐՈՅՆ ՇՈՂԱԼ, ԵՒ Ի ՃՕՃԵԼ ԲԱԶՄԱՌՈՒՐՆ ՆԻԶԱԿԱՆ ԻՐԲԵՒ ՅԵՐԿԵՆՈՒՍ ԱՀԱԿԷՆ ՀՐԱԶԴՈՒԹԻՒՆԸ ԵՌԱՅԻՆ, ՔԱՆՉԻ Ո՞Վ ԻՍԿ Է ԲԱԻԱԿԱՆ ԱՍԵԼ ՉՄԵԾԱՄԵԾ ՏԱԴԷԱՊ ԱՀԱՒՈՐ ՉԱՅՆԻՑՆ, ՈՐՊԷՍ ԿՈՓԻՆԸՔ ՎԱՀԱՆԱՒՐԱՅՆ ԵՒ ՃԱՅԹՄՈՒՆԸ ԼԱՐԻՑ ԱՂԵՂԱՅՆ ՉԼՍԵԼԻՍ ԱՄԵՆԵՏՈՒՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԽԼԱՑՈՒՑԱՆԷՐՆ...», «ԵՒ ՔԱՆՉԻ ԴԱՐԱՆԱՅԻՆ ԷՐ ԺԱՄԱՆԱԿՆ, ԾԱՂԱԿԱԼԻՑ ԴԱՇՏՔՆ ԴԱՌՆԱՅԻՆ ՅՈՐԴԱՀՈՍԱՆՍ ԱՐԵԱՆՑ ԲԱԶՄԱՆ»:

Ժողովրդական հիաստանչ ու հոգեզմայլ հերոսամարտի օրհասական ժամին, ուխտագրում մարզպան՝ Վասակ Սիւնեցին դաւադրաբար նեղֆեց Հայոց բանակի միասնական հակառ իւ դաւաճանական հարուած հասցրեց հայ ֆաշարի հայրենասերների բիկունքին:

Դարեր անցան Աւարայրի մեծ հակասամարտից, սակայն երախտապարտ ու երախտագէտ հայ ժողովուրդն ու Հայաստանայց եկեղեցին չմոռացան երբեք «նորահաւա պաւկաւոր» Վարդանանց ու Ղեւոնդեանց սխանչելագործութիւնը, իրենց սրբածին հերոսների ֆաշագործութիւնը եւ հերոսածին սրբերի նահատակութիւնը:

Անյիշալար, բայց արդարամիտ ժողովուրդն Հայոց չմոռացաւ երբեք նաեւ ուխտագրում եւ ազգադաւ գործը Վասակ Սիւնեցու: Դարեր անց, ուման հայազն պատմաբաններից իզուր փորձեր կատարեցին «ֆաղափական իմաստութեան եւ դիւանագիտական օրջահայեցողութեան» դափնիներով պսակել Վասակեանց անարժան զուլիւր եւ արդարացնել նրանց, սակայն ունայն անցան այդ ջանքերը: Վարդանների եւ Ղեւոնդների դէմք մնաց պայծառ եւ յիշատակը՝ խնկելի, իսկ Վասակ անունը՝ հայ ժողովրդի յիշողութեան մէջ դրօշմուեց որպէս նշանակ ազգային դաւաճանութեան:

Ազգի եւ Հայրենիքի վարած կեանքի եւ մահուան հերոսական պայքարի ժամին, ո՞վ ոնրագործ յանդգնութիւնն ունի նեղֆելու ազգային միասնութեան հակառ, առաւել եւս դաւաճանօրէն հարուածելու՝ իրաւունքի, ազատութեան եւ արդարութեան անձնուէր մարտիկների բիկունքից, ժողովրդի անյիշալար հոգում անգամ կարեկցութեան զգացմունք չի վաւսակի եւ դաւաճանի սեւ կնիքը կ'ընդունի իր հակաին:

Թե՛ Բագրեւանդի համաժողովրդական ընդվզումի եւ քե՛ Աւարայրի նուիրական հակասամարտի հերոսական օրերին, ո՞չ միայն բարոյական արտառուչ առաքինութեան, այլ եւ մարտական հրաշագործ անվեհերութեան կատարեալ ու անկրկնելի տպար հանդիսացաւ հայ կիներ, որպէս որդեսէր գորովագուր մայր, անձնուէր ու անդաւաճան ամուսին, հայրենասէր ու ռազմիկ հարազատ պայքարի ոգեւորող անմահ ֆոյր, անգամ՝ զենք ձեռքին իր հեծեսակային կեանքը ողջակիզող ազգանուէր մարտիկ:

Ոսկեծղիկն եղիւ իր հերոսական պատմութեան էջերում, մի անօրինակ գորովայից ու հոգեզմայլ սիրոյ խանդաղասնով գեղանկարելու հրաշակներով եւ հայ առաքինազարդ հերոսածին ու ինքնին հերոսասենչ «Տիկնայփ փափկասունք»ը: Համաշխարհային գրական-

նուրբան գոհարն են կազմում ազգը սիրող եւ ազգից սիրուած բանաստեղծ պատմագրի մարգարտաւոր էջերը, որ գորովայից ցնեւորեալով ոգուած մի սմանչելի օրհներգ է առա-
փինի կանանց:

Շուրջ 1500 տարի է անցել այդ յաւերժայուց սրբազան օրերից, սակայն երախտա-
գէտ Հայը չի մոռացել տակաւին եւ չի էլ մոռանայ երբեք Վարդանանց եւ Ղեւոնդեանց
դարաւերջանի հրաւազոր՝ հերոսունիների անմահ սխաւագործութիւնները, որ դեգերել են
միտք քանդաւառէ հայ քնարերգուները:

Օտար բռնակալի անագորոյն հալածանաց եւ աղէտաբեր արշաւին՝ հայ առնակներ
քէ առաքինուհին անա քէ ի՛նչպիսի անձնուէր առաքինութեամբ պատասխանեցին:

Աւարայրի դաւեսում հերոսական մահով ընկաւ ինքը՝ քաջամարտիկ սպարապետ
Հայոց իր անմահ զինակիցներով, իսկ հերոսամարտ հայ բանակը նախընտրեց նահանջել,
շարունակելու համար ազատագրական պայքար՝ նակասային պատերազմը վերածելով աւ-
խարհագորայինի, կազմակերպելով համաժողովրդական դիմադրութիւն: Ռազմա- քաղա-
քական պարտութիւն չէր այդ, այլ մարտական ուժերի վերադասաւորում՝ ուժաբափելու
եւ արմատամշելու սասանեան բռնակալութիւնը:

Եւ այդ լաւ զգաց յազկերեան քաղաքականութիւնը, փորձելով Բագրեւանդի ու
Աւարայրի հերոսականը ոգեւեշող Ղեւոնդեանց դաժան գերեվարութեամբ ու նահատակու-
թեամբ կոտորել հայ ժողովրդի բարոյական արիւթիւնը, ռազմական կորովն ու համաժո-
ղովրդական դիմադրութիւնը, որը ժամանակ անց, զլխաւորեց Մամիկոնեան տոմի մի
այլ քաջամարտիկ եւ իմաստուն զօրավար՝ Վահան Մամիկոնեանը:

Սակայն Սրբոց Ղեւոնդեանց նահատակութիւնը հանդիսացաւ հզօրագոյն աղբիւր եւ
խրան համաժողովրդական դիմադրութեան ծաւալման եւ հզօրացման:

Եւ սասանեան անուշի բռնապետութիւնը, անկարող լինելով յաղթահարել հայ ժո-
ղովրդի ընդհանրական անդուլ դիմադրութիւնը, հարկադրուած եղաւ քաղաքականապէս
նահանջել եւ Նուարսակի դաւանագրութեամբ նանայել Հայաստան աշխարհի ազգային ինք-
նօրէն վարչութեան իրաւունքը եւ խղճի, բխտոնեական կրօնի ազատութիւնը:

Բագրեւանդի դիմադրութիւնը, Աւարայրի նակասամարտը, Ղեւոնդեանց նահատա-
կութիւնը եւ Վահանեանց մահառումը պատկազարդուեցին հայ ժողովրդի բարոյական-
քաղաքական յաղթանակով:

Աւարայրի հերոսամարտը հոգեզմայլ-անհասանելի բարձունքն էր ազատագրական
մահառման — անա քէ ինչո՞ւ նա եղել է, կայ եւ կը մնայ առշուէտ ազգապանծ էջը
Հայ պատմութեան, հոգեզմայլ մի էջ, որ դարեւ անընդհատ ոգեւեշել եւ մխթարել է
հայազն սերունդներին եւ ազգային-քաղաքական առաքինութեան ուղիներն է պատգամել
Հայրենիքին, Ազգին եւ Նկեղեցուն:

✱

✱ ✱

Այսօր աշխարհիս ընդհանուր եւ խռովայոյզ արդի վիճակում, այլ եւ ազատա-
գրուած մեր Հայրենիքի եւ ազգանուէր հայ սերունդի հերոսական աշխատանքի, սեղծա-
գործութեան եւ մահառման այս պատմական վայրկեանին, Մենք բարոյական պարտք ու
պահանջ ենք զգում անսահման սիրոյ եւ երախտագիտութեան յիշատակը յաւերժացնել եւ
համազգայնօրէն տօնել ազգային-ժողովրդական եւ կրօնա-մշակութային մեծ ու նուիրա-
կան հերոսամարտի 1500-ամեակը:

Սրբանուէր այդ հերոսամարտի 1500-ամեակը պէտք է ազգովին նուիրագործել եւ
տօնակատարել յանուն վերջնական յաղթանակի այն անձնուէր զաղափարների, որոնց յաղ-
թանակի համար իրենց առաքինի կեանքը զոհեցին Վարդանանք եւ նահատակուեցան Ղե-
ւոնդեանք:

Միաձմեռ Սուրբ Տաճարս, Լուսաւորչանիմն Մայր Աթոռս եւ Ամենայն Հայոց
ազգրնի Հայրապետներն են մեր օրերում եւս բարոյապէս խորհրդանշում այս անհետա-

նելի աստուածային ուժը, որ աշխարհի սիրով եւ սաղանդով երգել է ազգանուէր ու կրօնասէր բանաստեղծը.

«Գարեւ եկան, դարեւ անցան, էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան, էջմիածին.
Չես ձեռակէտք դու մարդկեղէն ու առօրեայ,
Դու շողակաք լուսոյ խորան, էջմիածին»:

Հաւասարիմ վարդանանց ու Ղեւոնդեանց քաջագործութեամբ եւ նահատակութեամբ նուիրագործուած սրբազան աւանդների, Միաձնաեջ Տանարիս ամբիոնից եւ Մայր Աթոռիս զանի բարձունքներից՝ Մենք յայտարարում ենք ի լուր եւ ի մխիթարութիւն բնաւ խարհում երջանկացած եւ Սփիւռնում տարագիր համայն հայ ժողովրդին, որ 1951 բուրբուն Բարեկենդանը յայտարարում է Աւարայրի հերոսական նակասամարտի եւ Ղեւոնդեանց նահատակութեան 1500-ամեակի համազգային-եկեղեցական տօն:

Համաժողովրդական կրօնական այդ մեծ օրը հանդիսանալու է անսահման երախտագիտութեան եւ ազնիւ զգացումների արտայայտութեան օր՝ վարդանանց ու Ղեւոնդեանց սուրբ յիշատակին:

Փա՛ռք հայրենական, ազգային եւ վեհիշխան Պետութեան, որը հաւաստագոր եւ ինքնիշխան անդամն է նուիրական եւ անպարտելի Սովետական Մեծ Նղբայրութեան:

Թող հաստատ մնայ հայ ժողովրդի հոգեհարազատ միասնութիւնը եւ ամբողջական միաձոյլ համակեցութիւնը հայ Բնաշխարհի հիւրընկալ ծոցում, որ նուիրական բաղձանքն է հայրենաբնակ երջանիկների եւ խարիսխը փրկութեան ու երջանկութեան Սփիւռնի վաստակաւ տարագիրների:

Մաղբենք, որ աւելի ծաղկի եւ բարգաւանի հայ ազգային-հոգեւոր մեծարժեք մշակոյթը Մայր Հայրենիքում եւ Սփիւռնում, որ հարազատ արտայայտիչն է հայ սեղծագործող հոգու եւ անսպառ զանձն ու բարոյական շողկապը ողջ Հայութեան:

Յաւեհ անշարժ ու անսասան մնայ լուսոյ խորան Ս. էջմիածինը, որի ալեգարդ Գահակալը ի տուեջեան եւ ի գիշերի ձնկաշոք եւ ջերմեռանդ աղօթում է ամենաբարձրեան լին՝ աշխարհի խաղաղութեան եւ մարդկանց երջանկութեան համար:

Դ Է Ո Ր Դ Ջ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գրեցաւ Կոնդակա Հայրապետական
Ի 1-ին Յունիսի 1950 ամի Փրկչական
Եւ ըստ տոմարիս Հայոց ՌՅՂԹ
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

(ԷՋՄԻԱԾԻՆ, ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ, 1950)



ԻՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 1500-ԱՄԵԱԿԸ

Տօնը որուն 1500 դարադարձին առջև կը կենանք այսօր, մեր պատմութեան լոյսին և սերունդներու զիտակցութեան մէջ դադրած է այլևս սրբոց պարզ տօնակատարութիւն մը ըլլալէ, և դարձած աշխարհայեացք մը, զոյութեան պայքարի ուղեղի մը նետուած մեր պատմութեան արիւնոտ էջերուն:

1500 տարիներ առաջ հայ աշխարհը լինել թէ չլինելու անհուն սարսափէ մը բռնուած էր նորէն, ու խորունկ բնագոյով կը զգար թէ՛ իր աշխարհի հորիզոնէն աւելի իր հոգիի հորիզոնին վրայ կուտակուած ամպերը չարագուշակ ու ճակատադրական էին քան երբեք:

Պարսկաստան, հեռաւոր ցեղակիցը հայուն, հայակուլ ախորժակներով տոգորուած կ'ուզէր ձուլել մեր ցեղը, որ հակառակ իր փոքր քանակին, բարձր որակ էր ինքնին, իր ձեռքին մէջ բռնելուն չափ շատ յաճախ, արեւելքի գերիշխանութեան նժարին մէտը, ստէպ Իրանի և յաճախ Հռովմի ի հեճուկս: Սակայն կարծուածին չափ դիւրին չէր ընկուղել զայն Իրանի մեծ ծովուն մէջ, վասնզի այդ փոքր բայց տեսլապաշտ ժողովուրդը իր ֆիզիքական զոյութեան նեցուկ ունէր այլևս մեծ և ներգոր զաղափար մը, քրիստոնէութիւն:

Ռազմագիրտական տեսակէտով չէ որ մեծ կը մնայ այս մարտնչումը: Բիրտ ուժին դէմ իրաւունքին և խղճի ազատութեան զուպարն է ան, այս պատճառաւ, պատերազմէ աւելի դիւցազնամարտ մըն է անիկա: Ազգերը բարձրագոյն ոգևորութեան, ինքնամոռացութեան մէջ միայն այս վիճակին կուզան, ամէն ինչ ի սպաս դնելու արդար դատի մը և զաղափարի մը սիրոյն:

Այդ զգացումը ազգային և համայնական կիրք մըն է, որ իր հնոցին մէջ կը համաձուլէ բոլոր սիրտերը, բոլոր կամքերը, բոլոր նպատակները: Եկեղեցին, բանակ, քաղքենին, շինական, սեպուհն ու ռամիկը կրներն ու մանուկները: Բոլոր հասակները, բոլոր դասակարգերը, կը շարժին կարծես նոյն հասարակաց զսպանակէն:

Երկու ժամանակակից մատենագիրները, Եղիշէն և Փարպեցին կը խօսին այդ զգացումով և ճնորհալին որ այդ դիւցազնութեան տռամին երգը կը հիւսէ, տպաւորուած է նոյն կերպով: Մարմնական կռիւ մը չէ ան, այլ հոգևոր առաքելութեան մեծագործութիւն մը:

Վարդանանց պատերազմը իրագործումն էր այն մեծ խտէալին, որ դարեր առաջ իր երկնային լոյսն ու կրակը բերաւ խառնելու հայուն տեսլապաշտ հոգիին: Այդ զօրոյթը որ քրիստոնեայ հայութիւնն է ինքնին, արտայայտուած է մեր պատմութեան մէջ երեք երեսներով՝ գաղափարապաշտութեան, ազասափութեան և զոհողութեան երբեակ դիմագծերով, չըսելու համար խորհուրդով: Վարդանանցը այդ երեք խտէալներու նուիրագործումն է մեր պատմութեան մէջ:



Վարդան, քաջ նահապետ, որ վանեցեր զքեզման,
 Վարդապետն արեամբդ քո պատկեցեր զեկեղեցի:
 Երկ. Ն. Ե.

Նորահաջ պատկառար եւ զօրապետն առաքինեաց,
 Վանեցար զինոս հոգւոյն արիաբար քնդդեմ մահու.



Գաղափարապաշտ եղած է հայը՝ շատ անգամ նախընտրելով տառապիլ բարոյական մտապատկերի մը առջև, քան ընդարմանալ նիւթական զոհացումներու վայելքին մէջ։ Այս ճշմարտութեան իբր ապացոյց կը բաւէ թերթի մեր պատմութիւնը, լուսաբարձ թիթեռի մը նման միշտ լոյսին, մեր ներքին երազին վազած ենք, յաճախ անոր սիրոյն այրելով մեր զախրախրուն թևերը։ Հակառակ արեւելքի մէջ ապրելուն, արեւմուտքը, այսինքն քաղաքակրթութեան լոյսին կեդրոնը եղած է չուկէտը մեր միտքին։

Երկրորդ՝ երեսը հայ հոգիին իր ազատասիրտութիւնն է։ մենք սփռուքի մշուշներուն մէջ ստորանկեալներս, հազիւ կրնանք զգալ զեղեցկութիւնը ազատութեան։ Անիկա մեզմէ շատերուս համար բառ մըն է լոկ քաղաքա-բարոյական իմաստ հաղած։

Պահ մը սակայն նետեցէք ձեր ուսերէն տարիներու գերութեան քղամիթը, ցնցոտին, եղէք նման ձեր պապերուն իրենց լեռներուն վրայ, իրենց ամբողջներուն մէջ, բոլորապիսի փաթթուած իրենց զրօշին ու փառքին, ու դուք կը հասկնաք թէ ինչ է ազատութիւնը, և թէ կ'արժէ զայն ունենալ և մեռնիլ ի հարկին անոր համար։

Երրորդ յատկանիշը հայուն՝ որ իրագործումն է առաջին երկուքին, գաղափարի մը համար մեռնիլ զիտնալու իր յօժարամտութիւնն է։ Մեր ամբողջ պատմութիւնը մարտիրոսարան մը եղած է, և մեր բոլոր մեռելները ըլլան անոնք եկեղեցւոյ սուրբեր կամ ազգային նահատակներ, գաղափարի զոհեր եղած են։ Մահը չէ անշուշտ որ կը սրբացնէ ու կը հերոսացնէ զանոնք, այլ այն գաղափարը յանուն որուն անոնք մեռան։

Պատմութիւնը ոլբերդական պայքարն է նիւթին և ճոգիին, գաղափարին և եսին և պատմութիւնը ցարդ չէ կրցեր լուծել կամ հաշտեցնել զանոնք իրարու։ Աւարայրները այդ ողբէնքը փրկող պայքարներ են։ Ինչ փոյթ թէ կեանքը յաճախ անողոր է վերին, բարձրագոյն արժէքներուն։

Նիւթականն ու հոգեկանը միշտ հակադիր մարդեր մնացին հայ հոգիին, թէ իր զրականութեան և թէ իր պատմութեան մէջ։ Աւարայրը հոգեկանին յալթանակն է մարմնականին վրայ։ Հոգեղէն տարրին գերազանցութիւնը անոր պաշտամունքն է որ վեր բռնած է միշտ մեր ժողովուրդը։ Իզուր չէ որ մենք առաջին բրիտանական ժողովուրդներէն մին եղած ենք և առաջին անգամ զէնք վերցուցած քրիստոնէութիւնը պաշտպանելու համար։

Հարցուի թերևս թէ հայը իր դարաւոր կեանքին մէջ, առաջին անգամ չէր որ կը պատերազմէր, երբ զիտենք թէ մեր ամբողջ պատմութիւնը տեւական պայքարն է եղած ընդդէմ Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի, յիշելով զլիաւորները միայն։ Մեր պատմական եսը նոր չէ որ ինքզինքը կ'իրագործէր, իր գոյութեան պայքարը կը մղէր։ Սակայն Վարդանանց զոյամարտը գիտակից մահով մեռնելու կոխն էր։

Ժողովուրդները կրնան ապրիլ դարերով, առանց այդ սրբազան զիտակցութեան հասնելու։ Կրօնք մը կամ գաղափարական մը նոր զիմագծով և նկարագրով կը հանդերձէ զանգուածը, ծնունդ տալով անոր մշակոյթին, ոգիին, յարգարելով այսկերպ ապագայի ճամբան։ Քրիստոնէութիւնը մեր մէջ այս գարձակէտն է, իսկ անոր ամենէն սրտառուչ արտայայտութիւնը Վարդանանց

պատերազմը: Դառասուն տարիներ սորվեցաւ հայ Սահակ-Մեսրոպեան դպրոցներու մէջ և քառասուն տարիներ պաշտպանեց իր ստացածը արիւնով:

Ոչ մէկ ժողովուրդ մեզի պէս մղած է այսօրինակ կռիւ իր հոգեկան ու մտաւոր երջանկութեան ի խնդիր: Արեւելքի և արեւմուտքի պայքարը, առանց չափազանցութեան, հոգիի ու նիւթի իրերամարտ կռիւը ոչ մէկ տեղ այսչափով ընդլայնած է սահմանները պատմութեան արիւնոտ տառամային:

Արեւելքի նիւթապաշտ ժողովուրդները որոնք նիւթականը վեր բռնելու ժամանակաւոր հակամիտութիւնը ունեցան, կորսուեցան: Մնալած չէին Վարդանանք, և սխալած չէ հայը երբ մեռած է ապրելու համար: Ոմանք կը կարծեն թէ այդ իտէացումը, կեանքը ըմբռնելու այդ կերպը, պատճառ եղած է մեր քաղաքական և նիւթական աշխարհները տնտեսող զգայարանքի բթացման: Եթէ ապրելու արուեստը հաց մը ճարելու մէջն է, մենք ապրած ենք դարերով, առանց ծախելու մեր ազատութիւնը փոր մը հացի:

Հայ ժողովուրդին պայքարը սրտազին ոգորումն է իր ազատութեան, իր ոգիին, իր արժէքներու զիտակցութեան ի խնդիր: Ի՞նչ բան կ'արդիւնէր մեզի միանալ պարսիկներուն, յոյներուն, թուրքին: Մեր ժողովուրդը կը զանազանուի ուրիշ ժողովուրդներէն ոչ միայն իր բնութեամբ, այլ նաև զայն իրակա՛նացնելու իր կերպովը, իր կամքովը, իր խորհուրդով: Ան իր ինքնութիւնը տեւականացնելու մէջ ունի կատարելութեան զաղափարը, հայուն արժէքը այդ զաղափարի և ինքնութեան յարաբերութեան մէջ է, զայն կատարելութեան տանող կամքին մէջ է: Վարդանանքը սեմալուն է այդ սխրագործութեան: Ասոր համար է որ Աւարայրը ռազմավայր մը ըլլալէ աւելի, աւազանն է հայ հոգիին, արիւնը չէ անոր զաղտնիքը. անիկա սրբազան և անանուն ինչով մը խառնուած է:

Ճիշդ է թէ պատմական մեր բոլոր ոգորումները պոռթկումներ եղած են ի խնդիր մեր ազատութեան: Թ. դարու երկունքը, Բագրատունեաց և Ռուբինեանց զէնքերու շփոխումն ու յաղթանակը, Ղարապաղի մելիքներու սխրագործութիւնները և մեր օրերու շարժումները մեր ցեղին յաւիտենական ձայնին կանչերն են, պոռթկումներ անարդարութեանց դէմ, ի խնդիր ազատութեան և հայրենիքի:

Մեր աւանդավէպերը բիւրեղացումներ են այս իտէալին: Ժողովուրդ մը որ Արտաւազդին ու Մհերին դիւցազնավէպերը ունի, որ Հաւլունի թուրին կը հաւատայ ու կը սպասէ առանց յուսահատելու անոնցմէ զալիք յաղթանակին, չի կրնար ընդարմանալ նիւթական գոհացումներու մէջ և մեռնիլ: Դարերով հայ զիւղացին աղօթք է մըմնջած Մհերի դրան առջև, Նազիկ լճին տակ թաղուած հերոսին համար, ապրելու և յաւերժանալ ուզելու ուխտի մը նման: Դարբինները իզուր կ'ամրացնեն Արտաւազդի շղթաները. ան կը պայքարի իր դերութեան դէմ, և հայ ժողովուրդը կը հաւատայ այդ հերոսին և կը սպասէ անոր:

Վարդանանց պատերազմը կը նկատուի առհասարակ մեր ժողովուրդի զինուորական առաքինութեանց հանդէսը. սակայն անիկա զործն է առաւելարար հոգիի մարդերու, հայ կղերին, որոնք մեր ազգին հոգեկան կեանքը իրենց երակներուն մէջ հոսեցուցին և եղան պաշտպանն ու խորհուրդը անոր, ինչպէս հոգեկան այնպէս ալ ֆիզիքական գոյութեան:

Ե. դարու կղերը բացառիկ համաստեղութիւն մը չէ, հակառակ իր արդիւնաւորած մեծ գործին. անիկա շարունակութիւնն է այն ողիին և գործին որ մեր Եկեղեցիինն է եղած: Հայ կղերին գոհարեութեան դերը փաստերու չի կարօտիր, անոնք մեր պատմութեան երազը, իմաստութիւնը և զոհաբերութիւնը կը խորհրդանշեն: Լուսաւորչի տունը, ռակեղարու սերունդը, Պահլաւունիք և անոնց յաջորդները մեր ժողովուրդին փառքն ու խղճմտանքը կը կազմեն:

Աւարայրի ճակատամարտը Ղեւոնդեանց հոգեմարտն է նոյնպէս և զուգէ առաւելաբար: Ղեւոնդ ողին ու սլաքն է այդ շարժումին: Աշտիշատի ժողովէն սկսեալ մինչև մոզեբու ջարդը, մինչև Աւարայրի նախընթացը և դատաստանն ու կատարածը, անիկա ծրագրող, յառաջ մղող և փաստարկող ողին է, իր լեզուն կեղծիքի գործիք չէ իր բերնին մէջ: Մի դարմանաք որ ամբողջ երկիր մը երէցի մը հմայքին ու կամքին համաձայն կը շարժի, վասնզի անիկա ողին ու ձայնն է իր ժամանակին:

Հայրենիքին սէրը և կրօնքին հրայրքը. այս երկու նուիրական կիրքերը երբ կը լծուին իրարու հետ ազգի մը հոգւոյն մէջ, ա՛լ դիւցադնութիւնն է որ կը սկսի հոն: Այսպէս եղաւ Վարդանանց պատերազմի պարագային: «Հայր մեր զԱւետարանն ճանաչեմք, և մայր՝ զԱռաքելական Եկեղեցիս Հայաստանեայց». այս է բանակին կարգախօսը. ո՞վ կրնայ կեցնել այսպիսի ոգևորութեամբ շարժող ոյժը:

Վարդանանց կռիւը Աւետարանով լուսաւորուած ազգի մը խղճմտանքին հանդիսաւորագոյն պայթումն է: Ու այս պայթումը այնքան ահարկու է որքան մաքուր է գիտակցութիւնը իրաւունքին: Ամբողջ ազգին վրայ կը շահապետեն իր պատմութեան ողին և Աւետարանի շունչը: Բանակին առջևէն մէկ զծի վրայ կը տարուին խաչը և զինուորական դրօշը, Աւետարանը և Լուսաւորչի Ա՛յր: Ամէն ինչ հողիի գէնք է. «զինու հոգւոյն վառեալ», ինչպէս կ'ըսէ Շնորհալին Վարդանանց յիշատակի պանծացումին նուիրուած իր երգին մէջ:

Եթէ Սահակի և Մեսրոպի սերունդը Ե. դարուն չկարենար Վարդանանց պատերազմ մը կազմակերպել, զուցէ տաանհնինդ դար առաջ արդէն կորսնցուցած պիտի ըլլար իր գոյութեան իրաւունքը: Առանց չափազանցութեան, առանց հայրենամոլ նախապաշարումի վարկածներուն անձնատուր ըլլալու, պարտաւոր ենք ընդունիլ թէ այդ պատերազմին, այսինքն անով շահուած բարոյական յաղթանակին կը պարտինք մեր ազգային և կրօնական կեանքը, մեր բարոյական գոյութիւնը:

Սխալ է կարծել թէ Աւետարանի հաւատքը կորովազրկեց զմեզ, ընդհակառակն ոյժի նոր զսպանակներ գրաւ մեր մէջ, և յետանը եղաւ մեր բուժընազդներուն: Վարդանանց ետև կեցած են Ղեւոնդեանք Աւարայրի դաշտին վրայ, ազգն ու Եկեղեցին քով քովի և անբաժան կը մղեն պայքարը Տղմուտի ամբերուն: Ժողովուրդ մը այնքան աւելի իրապէս տէր է իր ապագային և տընտրէնը իր ճակատագրին, որքան աւելի խոր է իր մէջ ընկերային բարոյականին զգացումը: Բոլոր կրօնքներու մէջ ամենէն աւելի քրիստոնէութիւնն է որ այդ զգացումը կը բազմեցնէ և կը լուսաւորէ մարդոց և ազգերու գիտակցութեան մէջ: Ամէն ինչ, որ կրնայ հպարտութիւն պատճառել մեզի, իբրև զրականութիւն, իբրև մտաւորական յառաջդիմութեան միջոց և գործիք, իբրև կեղ-

ընդհանուր քաղաքական իշխանութեան, և իրեն կազմաւորումը կրօնական կեանքին, կը պարտինք քրիստոնէական գաղափարին մեր մէջ յառաջ բերած շարժումին:

Մեր ժողովուրդը պատմական ազգ եղաւ, ներուի մեզ պահ մը ըսել այսպէս, այն օրէն՝ երբ սկսաւ և կըցաւ իր լեզուովը, իր հոգեկան արտայայտութեամբը, այսինքն իր զգացումներուն պատկերացումովը, իր ձևովը զրել և կարգալ իր պատմութիւնը: Մենք մեր ազգային զիտակցութիւնը կը պարտինք բացարձակապէս քրիստոնէութեան:

Քրիստոնէական համոզումներով ուժաւորուած ազգային զիտակցութեան և բարոյական կեանքի մղումովն է որ մեր նախնիք 451ին խիզախեցին Աւարայրի անհաւասար պատերազմին, որ եղաւ այն ճակատամարտներէն, որոնց մէջ յաղթող կողմն է որ կը կորսնցնէ միշտ:

Արդարև, այդ դիւցազնական նահատակութենէն ետքն էր որ Տիգրանի արքունիքը առաջին անգամ սկսաւ խորհիլ թէ անկարելի պիտի ըլլար իր քաղաքականութիւնը զործադրել Հայաստանի մէջ: Յազկերտի յաջորդները թէև շարունակեցին կրօնական ճնշումի մահափորձը կամ անափորձը, սակայն անիկա այլևս կորսնցնել սկսած էր իր թափը, և երեսնամեակ մը վերջ պիտի հանգէր Նուարսակի դաշնադրութեան, որ թէև ուշացած բայց իրական արգասիքն էր Վարդանանց դիւցազնամարտին:

Սխալած չէին Վարդանանք, և սխալած չէ հայը երբ մեռած է ապրելու համար: Խոհեմութիւն և դիւանագիտութիւն յանուն որուն կը խօսին բոլոր մետասաներորդ ժամու իմաստունները, քիչ անգամ փրկարար է: Ամէն դար իր Վասակը ունի, համակերպութեան, հաշուի, ժամանակի մարդը, տեսանելիի և շօշափելիի մարդը, սակայն հերոսներն ու իրենց զործերը վեր են իրենց՝ և բոլոր ժամանակներէն: Ու կը շարունակենք ապրիլ իբրև ԱԶԳ, վասնզի Վարդանանց պատերազմը աւելի կամ նուազ զեղեցկութեամբ և սաստկութեամբ շարունակուած է միշտ, և կը շարունակուի տակաւին մեր ազգային կեանքին մէջ:

Լուսաւորչի մշտավառը և Մեսրոպի թաթը, մեր ժողովուրդի հոգին լուսաւորող ու կենսաւորող սրբութիւններ են, և Հայ Եկեղեցին այդ կանթեղին լուսարարը և այդ լուսաւոր թաթին սպասարկուն է եղած միշտ:

Ամէն կողմ, և ամէն օր, ինչպէս երէկ այնպէս ալ այսօր, Վարդանանց ողին է որ սքանչելիքներ կը զործէ մեր ազգային կեանքի բոլոր ճակատներուն վրայ: Սփիւռքի մէկ ծայրէն միւս մեր ժողովուրդը համանման նոյն խաչաձևով է որ կը մղէ կեանքի իր կռիւը. ու աշխարհը կը խոստովանի թէ մղուածը մարմնական կռիւէ աւելի հոգևոր առաքինութեան պայքար մըն է ինքնին:

Թող միշտ կենդանի մնայ այդ ողին, որ միայն կրնայ ապրեցնել այս ժողովուրդը: Թող մեր պատմութեան մէջ յաւիտեան պայծառ և ոգևորեալ մնայ Վարդանանց պատկերը և անոր արթնցուցած գաղափարը: Հաւատքն է հոգիին խարխիւր, ժողովուրդները որոնք հաւատքով կը տօնեն իրենց դարերը անմահ են:

ԿԱՐՄԻՐ ՇԱՐԱՆԸ

«Ոչինչ կայ այնքան բեղմնավոր
որքան արիւնք՝ սերունդներու եւ
դարերու համար»:

Երբ կը խօսինք Վարդանանց ոգիի և
դերի մասին, Հերոսամարտի 1500ամեակի
առիթով, չենք կրնար չհիանալ մարդերու
վրայ, որոնք ոգին եղան այդ սխաղագոր-
ծութեան:

Սրտառուչ ըլլալէ աւելի՝ գեղեցիկ է
կարմիր շարանը Աւարայրի նահատակնե-
րուն, կարմիրն Վարդանի առաջնորդու-
թեամբ: Մամիկոնեան տունը հինգ դարեր
շարունակ, քրիստոնեայ Հայաստանի զին-
ուորական կորովի մարմնացումը եղաւ,
արեան ուղիներէն տանելով Հայուն սըր-
բութեան և ազատութեան կարմիր դրօշը:

Դիւրին չէ գտնել ուրիշ ազգերու պատ-
մութեան մէջ իշխանական տուն մը, նման
Մամիկոնեաններու, որոնց ասպետական
զէնքի շփոթով լեցուած ըլլայ Պատմու-
թիւնը: Մամիկոնեանները կանխած են մեր
մէջ Միջին դարու արեւմտեան ասպետա-
կանութիւնը, համադրելով իրենց վրայ հե-
րոսութիւնն ու սրբութիւնը, սուրի և խաչի
խորհրդանշաններուն ներքեւ:

Տուն մը իշխանական, որ հինգ դարեր
շարունակ մնար հաւատարիմ իր տոհմին
մտայնութեան և աւանդներուն: Ութերորդ
դարու Մուշեղը յար և նման է չորրորդ
դարու Մուշեղին: Արեան հետ Մամիկոնե-
ան պայազատները կը ժառանգէին նոյն-
պէս ընտանիքի հերոսական ոգին: «Սուրի
երկիւղը անձանցով է մեր տոհմին», կ'ըսէ
Վարդան:

Արշակունեաց գահին կործանումէն յե-
տոյ, նախարարական դասը հետամուտ ե-
ղաւ վերականգնելու կորսուած թագը:
Վարդանանց և Վահանանց կոիւնները անդ-
րանիկ փորձեր էին այս նպատակին ի խն-
դիր մղուած: Անոնց քաղաքական բնոյթը
որոշ է, թէ և ծածկուած եկեղեցական շփեղ
շուրջառի ներքեւ:

Պարսիկները, առանձին փափկանկա-
տութեամբ, գահազուրկ Հայոց մարզպա-
նութիւնը յանձնեցին Սիւնեաց Վասակ իշ-
խանին: Ապստամբութեան նախաձեռնողը
Վասակին էր, ներշնչուած գուցէ Բիւզան-

դիոնէն: Սակայն թէոգոս կայսեր մահով
(451), ծրագիրը կը մնար առկախուած,
քանի որ նոր կայսրը Հայերու պատճա-
ռաւ չէր ուզեր վրդովել խաղաղութիւնը
արեւելքի. մանաւանդ որ Քաղկեդոնական
վէճերը կը սպառնային արդէն տակն ու
վրայ ընել ամբողջ պետութիւնը:

Այս պայմաններու ներքեւ և իրողու-
թեան ի հաշիւ, երկու տրամադրութիւններ
կը տիրապետէին առաջնորդող ուժերուն
մէջ. ըմբոստութեան արիւնտ ուղին՝ զէպի-
քաղաքական ազատութիւնը, և խոհեմու-
թեան զգուշաւոր դիրքը: Առաջին ուղ-
ութեան դրօշակիրներն էին Մամիկոնեան-
ները, երկրորդին՝ ծանրախոհ Բագրատու-
նիք: Նախարարական շրջանի պատմու-
թիւնը արգասիքն է այս գոյգ Տուններուն:

Բագրատունիք և Սիւնիք խոհեմու-
թիւն նկատեցին նահանջի, երբ Բիւզան-
դիոն չուզեց միջամուխ ըլլալ, որպէսզի
սուրբ գործը չվիժի անխորհուրդ արկածա-
խնդրութեամբ: Դժբախտաբար ուշ էր.
յուզուած ամբոխը դիւրին պիտի չըլլար
զսպել, կրակը բռնկած էր արդէն:

Ուխտապահներու գլուխը կը գտնուէր
Մամիկոնեան կտրիճ Տունը, Արծրունեաց
հետ միասին, խոհեմներուն՝ Բագրատունիք
և Սիւնիք: «Ամենայն իրք այսպիսի գոր-
ծոց, ի բնէ յոյժով Մամիկոնէիցն ազգաւ և
նոցա միաբանութեամբ ելեալ էին ի գլուխ»
կ'ըսէ պատմիչը, և «Առանց առաջնորդու-
թեան ազգին այնօրիկ և ոչ մի ինչ իրք և
գործք աշխարհիս Հայոց երթեալ էին ի
գլուխ»:

Այս կերպով ապստամբութեան և պա-
տերազմի սկսուած ձեռնարկը եւ ուխտը
խնդրոյ առարկայ կը դառնար, նախարար-
ները երկու բանակներու կը բաժնուէին.
մէկ կողմը՝ որ կ'ուզէր շարունակել սկըս-
ուած գործը, և միւսը՝ որ ձախորդ հան-
գամանքներ նախատեսելով՝ կ'ուզէր ետ
կենալ և մոռացութեան տալ ամէն ինչ:

Տեսականօրէն երկու հոսանքները զի-
րար չէին հերքեր, սակայն գործնական
գետնի վրայ կը ստեղծէին հակամարտու-
թիւններ, աղէտալի հետեանքներով:

Եթէ մեզի եկած պատմութիւններուն
վրայէն հանենք պատրանքին քօղը, ար-
դիւնք՝ առաւելաբար պատմիչներու անձ-
նական տեսութեան, իբրեւ հետեանք անց-

քերու յաջորդական ելևէջներուն, պիտի տեսնենք որ այս հակամարտութեանց խորը կայ քաղաքական երկու ներհակ մտածողութիւններ, գործելու կերպեր, ուղղութիւններ, ձգուած ամբողջ դարեւրջանի երկայնքով: Հայրենասէրներ և դաւաճաններ չէին, ոչ ալ բարեմիտ և չարագործ ուժեր, գէժ առ գէժ կանգնած: Երկու խոշոր հոսանքներ էին, նոյն նպատակին համար, տարբեր միջոցներով ընթացող, միևնոյն մարմնի հարազատ հատուածներ, բռնուած նոյն քաղաքական տենդէն:

Հայրենիքի և ազգի սէրը ինքնեկ ըզգացում է, կապուած նաև անհատական ինքնասիրութեան. միայն արատաւոր մարդիկ կրնան թափուր մնալ այդ սրբազան զգացումէն: Ինքնաճանաչ հասարակութիւններու համար վէճը հայրենասիրական սկզբունքի շուրջ չէ, այլ այն միջոցներու և արարքներու՝ որոնց շնորհիւ կ'արտայայտուի սկզբունքը:

Հայ նախարարութիւնը, անտարակոյս, հետամուտ էր քաղաքական անկախութեան, անկաշկանդ բարգաւաճելու ամենակարեւոր հանգամանքին: Ո՛չ մէկ ատեն մեր պատմութեան մէջ այնքան ճիգ ի գործ դրուած է և արիւն թափուած, օտար լուծը թափելու, որքան նախարարական շրջանին: Անշուշտ հայ իշխանական Տուներուն մէջ եղած են և կային մարդեր, որոնց համար հայրենիքի սահմանները կը վերջանային հոն՝ ուր կը վերջանար իրենց կալուածը: Սակայն մեծամասնութիւնը ո՛չ միայն հայրենասիրութիւն և ազգային բարձր ձգտումներ ունէր, այլ մանաւանդ զանոնք հետապնդելու անձնուիրութիւն և կորով:

Հետևաբար, ուրացութեան և դաւաճանութեան հարցը, այն հասկացողութեամբ զոր ըմբռնելի է, հազիւ թէ գոյութիւն ունէր: Ուխտապահներու զիրքը այնքան ալ նպաստաւոր չէր, մեծ պետութեան մը գէժ իրենց խիզախումին մէջ: Միև կողմէն՝ ուխտանենդները երբ սթափեցան իրենց եւրազներէն, զգացին թէ շատ ուշ էին մընացեր. չարիքը կատարած էր իր գործը, և ինչ որ իրենք կրնային ընել՝ անդառնալիօրէն վրիպած էր իրենցմէ: Աւարայրը արիւնի և մկրտութեան աւազանը եղած էր երկրի մէկ մասին. ուխտապահները զի-

տակցօրէն զիմաւորելով մահը, մարտիրոսացան, անմահութեան օրինակ ծառայելով սերունդներու, և խրատ՝ բռնաւորներուն, թէ զիրին չէր Հայ ցեղը անճիտել, անկէ խլելով իր հոգեկան ու բարոյական սրբութիւնները: Պայքարը վերջացաւ նահատակութեամբ, սակայն մին այն նահատակութիւններէն և պարտութիւններէն՝ որոնք յաղթանակներու են համազօր: Պայքարը անհաւասար էր, սկիզբը, ինչպէս կը յիշատակէ պատմիչը. քաջութեամբ ետ մղեցին թշնամիին դրոշը, բայց յետոյ ընկճուեցան բազմութեան գէժ, մանաւանդ որ ռամիկ ուժերը շուտով պիտի լքէին իրենց զիրքերը: Կը մնար իշխանական որեարը, որ Մամիկոնեան զօրավարի խրախոյսով զօտեպնդուած, գլխակցօրէն նետուեցան մահուան զիրկը, սա սրբազան մրմունջը իրենց շրթունքներուն. «Քաջութեամբ մեռուք ի վերայ աշխարհիս մեր, և մի՛ տեսցին աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբաբանս մեր»: Երկիրը հռաչեց և ողբաց ինքնուրաց քաջերու մահը, առանց սակայն թշնամիին ոտքերուն կոխան նետելու իր ազատութեան և հաւատքին դրօշը:

Մամիկոնեան Տան դրօշը, հինգ դարեր շարունակ, արեան ուղիներով վազեց գէպի քաղաքական ազատութիւնը: Բռնութեան գէժ՝ բռնութիւն, ոյժին դում՝ ոյժ, արեան փոխարէն՝ արիւն, ահա՛ դրօշին նշանաբանը: Ով որ կը կոխէր հայ հողին և անով պայմանաւոր մեր սրբութիւններուն վրայ, թշնամի էր Մամիկոնեաններու: Նախնիք Աւարայրի հերոսին տուեր են Կարմիր տիտղոսը, և անոր սերունդը, որ նոյն վեհութեամբ և նուիրումով շարունակեց անոր գործը, իրաւունք ունի նոյն այդ կոչման, իր այնքան պանծալի և յառաջամարտիկ անուններով:

Մամիկոնեանները անստգիւտ հայեր էին, հայ երկրի և ժողովուրդի արժանապատուութեան ուխտուած զինուորներ, որ անհաւասար կոիւններու մէջ ուժասպառ եղան և այրուեցան անձնագոհութեան հրդեհներուն մէջ: Իրաւ էր Կարմիրն Վարդանի տրտուեցը, ուղղուած նախարարներուն. «Ծանկ ձեր միսեալ է զմեզ ի նեղ և զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց և մահուաց»:

Վերջիններս ու մահերը սաստկացան, մահաւանդ Վարդանի մահէն յետոյ, և Մամիկոնեան պայագատներու սերունդը տակաւ քաշուեցաւ ասպարէզէն, երբ իրենց բախտաւոր մրցակիցը՝ Բագրատունիք, պիտի յաջողէին բարձրանալ արքայական սանդուխներէն: Բագրատունեաց տոհմին յաջթանակը պիտի ապահովուէր յետոյ նորէն Մամիկոնեաններու արիւնով: Աչոտ Մամիկոնեան, Կուրդիկ իշխանի գլուխը կըտարած՝ խալիֆային ղրկեց, Մամիկոնեան Տան վերջին շառաւիղի արեան գինով ըստանալու իր թագաւորութիւնը:

Ուրիշ էր Բագրատունեաց նկարագիրը և ընտրած ուղին. անոնք աւելի խոհեմ էին և համբերատար: Սկիզբները Բագրատունի Սմբատներ ևս, Մամիկոնեաններու նման, կը նախընտրէին իրենց ձեռքը պահել իրենց զաւոյններուն վրայ, բայց յետոյ, Աչոտներու օրով, անոնք ստիպուած էին շատ յաճախ ձեռքը տանիլ ճակատին, իրբն նշան խոնարհութեան: Մամիկոնեանները հայ խաչելութեան չողջողուն քարերն են, բարախուն սիրտը մեր ցեղին. իսկ Բագրատունիք՝ մեր իմաստութեան սիւնները:

Հակառակ այս իրողութեան սակայն, Մամիկոնեաններու արիւնով է գծուած կարմիր ակօսը մեր պատմութեան: Խոհուն գլուխ և իմացականութիւն, եթէ նոյնիսկ այս եղած ըլլայ նկարագիրը Բագրատունեաց, անօգուտ ոյժ է՝ առանց սրտի ներշնչումներուն: Նոյնիսկ դորձնական ասպարէզի մէջ՝ զգացական զեղումներն են մտքի իրական թէն ու թափը: Մամիկոնեաններու արեան սերմերէն պիտի ծլէր ու ծաղկէր յետոյ Բագրատունեաց և Ռուբինեանց փառքը:

Ի՞նչ էր որ կը խօսէր այս տոհմին մէջէն, այսքան ուժգին և յորդ: Հողին ձայնը. մի՛ մոռնաք որ Տարօնը Հայ երկրին սիրտն է, պանդէոնը մեր աստուածներուն, Քրիստոսէ առաջ և վերջ:

Հէքեաթ է Տարօնը, Մշոյ դաշտը, Սասնոյ լեռները, Սահակ-Մեսրոպի գերեզմանները կը կազմեն իր Ֆիզիոնոմիան: Մեր ստեղծագործութեան օրրանը, ռազմական կորովի կեդրոնը, ամբողջ Հայաստանը կայ մանրանկարուած Տարօնի մէջ:

Հողին ձայնը՝ տակաւին ձայնն է մեր

հնձաններուն, տուներուն, եկեղեցիներուն, աղբիւրներուն, մեր աշխատանքին, մեր երգին, մեր քրտինքին: Ոչ մէկ տոհմ այնքան ամուր, խորունկ և իրաւ լսած է այդ ձայնը, որքան Մամիկոնեան Տոհմը: Այս հողին, այս ձայններուն և ազգեցութիւններուն ծնունդն են Վարդան և Մեսրոպ:

Ի՞նչ բեկում սակայն, մեր օրերու տրտմութեան մէջէն նայիլ այս կարմիր շաւանին և անոնցմով խորհրդաւորուած գաղափարականներուն: Աւարայրի յիշատակը մեզի կը վերբերէ ճշմարիտ հերոսներ և հոգիի արժէքներ. բայց մեր դարը ոսկիի, անգթութեան և խաբէութեան դարն է:

Տակաւին երէկ, Վարդանանց տօնը ուրիշ զգացումներով կը խօսէր մեզի: Իր արօրը քշող գիւղացիէն մինչև մտաւորականն ու քաղքենին, ուրիշ զգացումներով կը դիմաւորէին զայն: Անիկա անցեալ մեծագործութիւնն էր և ապագայ տեսիլքը, աւելին՝ մեր ժողովուրդին մեծ խոյանքը: Այսօր հերոսներ և սուրբեր չեն խօսիր մեզի. արժէքներ՝ որոնցմով բան մը արժած ենք մենք մեր պատմութեան մէջ:

Եկան դարեր մութ ու արիւնոտ. հայ քաղաքական ազատութեան ծիրանին յաճախ պատառ պատառ ինկաւ բռնակալներու ոտքերուն կոխան, իր ծալքերուն մէջ ծրարած երբեմն արցունք և երբեմն արիւն: Սակայն Վարդանանց ոգիին բոցը միշտ բեկեկեցաւ դարերու և սերունդներու դիմաց, լուսաւորելով մեր հերոսական յուշերը և գալիք վաղորդայնները:

Անոր համար Վարդան և Վարդանանք Հայ ժողովուրդին համար անհատներ չեն, որոշ ժամանակով պայմանաւոր, այլ մարմնացումը հզօր ու անանուն գաղափարի: Ժողովուրդը պաշտամունք ունի անոնց նըկատմամբ որոնք իրեն համար մեռնիլ գիտեն: Վասնզի ինչ որ արիւնով կը գրուի, դարերու համար է:

Ե. Վ. Տ.



Վ. Ա. Բ. Դ. Ա. Ն. Ի Ս Ի Ր Տ Ը (*)

Գ.

Լուսաբաց էր,
Հորիզոնին կարմիր մը լայն
Կը փրժուէր ու կ'իյնար վար.
Հովն էր հանգչած արիւնէն վերջ.
Դէտի ափին ֆաջեր հազար,
Կը ննչէին անգերեզման:

Յօղն առջւան, արցունք, արցունք,
Կը դալկանար, սարսուռին դէմ այդ ֆարացած.
Երկիրն հայոց աչք էր սառած:

Հոն են բոլոր, հիւսուած իրար,
Դաշին վըրայ հայրենական.
Մահուան մէջն իսկ դեռ անբաժան:
Սուրերն իրենց արեւին մէջ,
Փայլակնացայս,
Ծիծաղ մ'ինչպէս սառ ու անգուր:

Մութ շեղջին դէմ մարմիններուն,
Հազար վերով
Ինկած է ֆաջն Աւարայրին,
Լեռ մը ինչպէս լեռներուն ֆով,
Ակռաներուն մէջ բըռնած դեռ
Նեւն ոտիսին:
Սաղաւարտն իր նետուած հեռուն,
Կըսոր կըսոր դէզն ու աշէն,
Մաղ է դարձեր մահուան պարիսպ
Վահանն իր ձող.
Արիւնաներկ բայց կը մընայ
Դեռ իր ափին, ըսպառնագին,
Սուրն անխորհակ մեր պատմութեան:

(*) Մաս մը Աւարայրի հերոսին նուիրուած ընդարձակ խերուածէն:

Կ'իջնէ երկինքն անոնց վրայ
Առանց ամպի ու գորովի:
Գետէն անդին խուլ ձայներով
Շընագայլեր ու բորենին:
Ու անոնց հետ սարսափը մութ,
Ինքզինք հիսած լայն շրջուկին
Գետին Տղմուս,
Որ զերթ վիշապ, օղակ, օղակ,
Ինքն իր վրայ կը քաւալի,
Ըսես փախուս մ'ըլլար անհուն:

Խորհին վրայ հորիզոնին,
Թեւեր մըքին,
Տարմն է մըռայլ թռչուններուն,
Որոնք կուգան բաժին առնել
Խրախնանքէն այդ արիւնոս:

*

Բայց ո՞վ հըրաւք, երկինքներու խորութենէն
Կ'իջնէ յանկարծ արծիւ մ'հօր,
Երազ մ'ինչպէս լուսացնոր,
Մագիլներովն իր պողպատէ,
Ապշուպելու սիրեն հերոսին
Ու սանելու ծոցը լեռան
Հայրենական,
Որ կըսպասեն հազար ամէ մինչ հազար ամ
Յեղին անմեռ փաշերը մեր:

Շընագայլերն կըրնան խրմել արիւնն անոր,
Սիրքը որուն արիւնբոլոք վրէժի ձայն
Կը հանգչի հոն՝
Խորն ընդերքին մեր սուրբ լեռան,
Իբրեւ կըսակ յաւերժական:
Այսպէս կ'ըսէ զրոյցն անսոս,
Եւ անանուն,
Մեր պատմութեան:

Ամէն անգամ երբ մըքազնի
 Պայծառ կամարն մեր աշխարհին,
 Անօրէններն երբ գան պըղծել
 Սըրբարաններն հայրենաւանդ,
 Կամ երբ ծըլին որոմ, դըժնիկ,
 Արտերուն մէջ մեր հոգիին,
 Համայնական ցուն ահաւոր,
 Մեզի բաժնող մեզ կործանող,
 Մասիս լեւան բարձունքներուն,
 Կը սաւառնի վարազաթել
 Թըռչուն մը սել,
 Իր կըսուցին ջահ մը ինչպէս,
 Սիրսն հերոսին, աստեղածել :
 Պողոտայէն արիւններուն
 Անոր լոյսին միտք կը նային
 Աչերն անուշ մեր զարմերուն,
 Զվախնալու փոքորիկէն ու գուպարէն,
 Աշխարհային յոյզերուն խուժ,
 Մընալ յառած լոյս պատգամին,
 Յաւերժափառ,
 Որ կ'արձակուի անհուն լեւան
 Բարձունքներէն,
 Հազար ամէ մինչ հազար ամ :

ԵՂԻՎԱՐԴ



ԽՕՍՔ ԸՆԴ ՎԱՐԴԱՆԱՅ



Հայրենիքս, որոտագոյ ձայնն ալեփառ հայրապետիս,
 — Դեռնոյ Երէցն օրերուն մեր —
 — Քեզի ընկեր, ոգեւորող այդ Երէցին ընկերն իրաւ, —
 Դարադարձրդ կուտայ պատգամ
 Զերդ կաղանդչէք համասփիւռ իմ ժողովուրդին,
 Լեցընելու մեր մէջ կրկին
 Դասարկացած սէրն ու հաւասքն
 Հայրենիքին եւ կըրօնքին:

Քու արիւնէդ ծընունդ առած,
 Ու քու շունչով վերաստեղծուած
 Մարմինս բերած եմ արգադիր սուրբ խորանիդ,
 Հակասով վէս, կեցած եմ տես, ամենախոր ըզմայլանով
 Ու կը դիտեմ այդ յաղթապանծ հասակըդ սէգ,
 Որ գիտցաւ դեռ դարեր առաջ
 Ի սպաս դրնել ժողովուրդին իր փրկութեան
 Ա.փ մը կտրին քաջերու հետ,
 Եղբայրացած կրօնի անվախ ուխտեալներուն:

Կուգամ քեզմէ առնելու դասն
 Ու իմ կարգին աւանդելու զայն իմ ազգին,
 Քու արիւնովդ շաղախուած բեկորներուն:
 Սակարկողը չեղար կեանքիդ,
 Ոտնակոխած շրջացուցիչ սին խոստումներ,
 Շրջազարդերն ականակուռ, փառքը որոնց,
 Աւխարհական եւ վաղանցիկ,
 Գիտցար զոհել ի շնորհուկըս այն մեկալին,
 Որ խոստացուած էր Արքայէն Սուրբ Հայրերուդ,
 Անկէ՜ որ քեզ, ազգիդ համար,
 Եւ ազգերուն տեղերին,
 Ըրաւ մասադ Աստուածորդին իր միամայր:

Քեզ հետ այսօր, կուեսիդ կեցած,
 Կախուած եմ, տես, պերն Երթերէդ:
 Խօսէ նառըդ հայրենաւունջ, կըրօնազգած,
 Անգամ մըն ալ,
 Ու լեցուր զիս, եւ ինծի հետ
 Եղբայրներն իմ ծառաւսեանջ
 Ու քոյրերքս փափկասընունդ,
 Որ քեզմէ վերջ,
 Քու մեզ ժառանգ արգած միակ
 Ամենասուրբ աւանդն արդար,
 — Կը դաւանիմ ամօրաբար, —
 Մենք չենք կրցած պահել մահուր,
 Ոչ ալ ունինք կարողութիւն զայն արգելու
 Մեզ յաջորդող սերունդներուն:

Հակասագրի դժնէ ժամուն մենք գիտցանք լոկ նայիլ քեզի,
 Առնել նահանջն այն անքեղուած անւէջ հուրէդ:
 Բայց անկէ դուրս...: Հարց մի տար ինձ:
 Դուն լաւ գիտես
 Ամէն մէկուն սրտին ետին
 Խանձարուրուած արասը սեւ իրարու դէմ,
 Քու պաշտպանած հայրենիքիդ
 Ու կըրօնիդ իսկ սըրբազան...:

Թոյն է դարձած մայրակորոյս զաւկըներուդ
 Աւիւն համակ,
 Ու սառնացած ուղեղն ու ջիղը ամենուն:
 Աւարայրէն առաջ եւ վերջ
 Մեզ կըրտակած խորհուրդիդ դէմ,
 Եղանք անգութ, խոստումնադրութ:
 Ներէ յանցանքն աններելի,
 Խուժանացած, եղբայրասեաց
 Քու սերունդին սա ուժացած,
 Բարձրանալէ առաջ քեզի
 Անգամ մըն ալ տասըն եւ հինգ դարերէ վերջ:

2/3/1951
 Երուսաղէմ

Գ. ՄՈՒՇԵՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆԻ ՃԱՌԸ

(8. Սեպտեմբերի «Երբ մեռնիլ գիտեմք» դասերախաղով)

Զինուորյան, ձեզմե շատեր արդեն կուրի մտած են զօրավարներուն և սպարապետին հետ: Աստուած աւելի շատ յաղթանակ շնորհած է մեզի որոնցմէ պիտի չխօսիմ հիմա, թէ և ատիկա անհրաժեշտ ալ է աս բոլորին: Դուք բոլորդ, մեծ ճակատամարտներու մէջ ապացոյցը տուիք ձեր քաջութեան, հաւատարմութեան, մահուան հանդէպ արհամարհանքին: Զեզմէ ոչ ոք մերժեց իր արիւնը երբ ուզուեցաւ ատիկա իրմէ:

Այսօր պիտի չմեռնիք սակայն Հայոց Սպարապետին համար: Շատ աւելի մեծ մէկն է որ ձեզմէ ձեր արիւնը կ'ուզէ: Ու այդ աւելի մեծը Հայոց Հայրենիքն է, սա սքանչելի երկիրը, ով իմ ազնուական զինուորներս: Այդ աւելի մեծը՝ Հայաստանն է, Հաւատքն է ձեր ու ձեր պապերուն: Խղճմտանքն է, Պատիւն է մեր ժողովուրդին որ սա տաղնապի զիններին կոչ կ'ընէ ձեր ամենուն առնութեան ու արիւնին:

Սա պահուն, ես վստահ եմ, ձեր բոլորին հոգիին մէջ տեղ չկայ երկու բանի: Հոն կը թաղաւորէ մէկ զգացում և Մահուան պապակն է ատիկա:

Ես վստահ եմ որ սա տասնեակով հազարներու մէջ մէկ հատիկ սիրտ չկայ որ մտածէ իր ձգածներուն, — զաւակ, քոյր, հայր, մայր, կին, կալուած, հարստութիւն և երկրաւոր ամենազգի բարիքներ, որոնք մեր խորագոյն յուզումները թէ և, կը տըժգունին, կ'ոչնչանան երբ զրուին մօտիկը վայելքներու վայելքին, երկնքին: Զինուորներ, բոլոր բարիքները երկնքէն կու գան. և մենք հոն կ'երթանք:

Նախ՝ իմ անսահման ուրախութիւնը զոհողութեան, քաջութեան, մահուան յօժար ընդառաջացող սա տեսարանին առջև որ մեր բանակն է սա պահուն, բոլոր առողջ գրոհի նշանին սպասող: Յետոյ, անոր միահամուռ գիտակցութիւնը թէ չէ եկած այս կամ այն նախարարին փառքին, այլ Հայոց Հայրենիքին համար որուն մկրտու-

թիւնը սա զաւտէն է որ սկիզբ կ'առնէ զաւիք զարեւուն վրայ: Հայ Հայրենիքին անգրանիկ բանակն է ատիկա: Մեզք որ այս հսկայ խանդին խառնուած ըլլայնաւ տըրտմութեան զգացում մը: Կը խորհիմ թէ ինչ անդիմադրելի խոյանքով, մէկ կտոր, մենք պիտի անցնէինք գետը, եթէ երբեք մեր զիմաց ունենայինք միայն ու միայն մեր ժառանգական թշնամին:

Բայց բախտը կ'ուզէ ուրիշ կերպ: Մեզի դէմ սուր պիտի չարժեն մեր համարիւն եղբայրները. քանի մը շաբաթ առաջ մեր կողքին, այսօր մեր զիմացը, զաւելով իրենց երդումին ու Հաւատքին:

Դիւրին է խօսիլը, բայց դժուար սուրբ եղբոր սրտին ուղղելը: Վասնզի ի՞նչ է մեզքը մեր այդ եղբայրներուն որոնք խառնուած են քանի մը փառասէր անօրէններէ: Բայց ժամանակը անցած է ալ, այդ բաներուն անդրադառնալու: Սա բոլորին, պատերազմին վախճանը կը մնայ Աստուծոյ ձեռքին մէջ: Ինչ ձեռով ալ մեր Աստուծոյ զայն ըլլայ տնօրինած, իմ խրատս է զգոյշ ըլլալ եղբոր արիւնին առջև: Լուսդէմ, կը սկսի ճակատամարտը: Դիտենք որ ուրացեալ նախարարները իրենց գունդերը համախմբած են մեր ձախ թեւին դէմ: Ուրեմն մեր այդ թեւը պիտի մնայ պաշտպանողականի, չանցնելով գետը, որքան ատեն որ իր զօրավարէն հրաման չունի այդ բանը ընելու:

Զինուորը իր մեծերը մօտիկ ընելով է որ լաւագոյն կը ծառայէ իր Հայրենիքին: Ամէն բան չէ քաջութիւնը: Ծակատամարտ մը բախտախաղ չէ: Թափող արիւնը պէտք է պաշտպանէ ամբողջ երկիր մը: Ասոր համար է որ կը հրամայեմ Արծրունի քաջերուն, վերցնել ամենէն դժուար բեռը՝ — պահեստը:

Դիտեմ նաև թէ որքան դժնդակ է անգործ սպասել երբ ջուրէն անդին կ'իջնան իր եղբայրները: Բայց բանակին շահը գերազանց է քան մեր բոլոր զգացումները: Խորհեցէք թէ ձեր եռանդին անզուսպ վատնումը կրնայ վտանգել մեր դատը: Այն ատեն, Մեռնիլ: Այո: Բայց յաղթելու ատեն, յաղթելու մէջ, յաղթելէ վերջ: Այս է պատճառը որ Արծրունին պիտի պահէ պահեստը: Իսկ աջ թեւը, զանգուածով, արշալոյսէն առաջ անցնի պիտի գետը ու

իյնայ ամբողջ թափովը, թշնամիին վրայ: Պիտի իյնանք մէկ կտոր, երկաթի պէս, այդ աւազակներուն վրայ, որոնք ձգած իրենց ընդարձակ հողերը եկեր են մեր արդար վաստակը, մեր պատիւը ոտքի կոխան ընելու: Մահ մեր ցեղին յաւիտենական թշնամիին:

Բացարձակ, միակտուր մահ: Զինուորներ: Դուք կը հասկնաք ահաւոր այն ատելութիւնը որ կրակի պէս, արիւնիս հետ կը պտըտի իմ մէջ: Ողջ ողջ, գալարուող հրգեհ մըն է ուղեղը ամէն Մամիկոնեանի: Մեր ուժերը, մեր արիւնը դարեր դարերով մենք չխնայեցինք այդ անօրէններուն փառքին ու բարիքին, որպէսզի յարձակման ենթարկուի այսպէս մեր պատիւը, մեր հաւատքը: Որպէսզի մեր զաւակները գերի տարուին Պարսկաստանի խորերը: Որպէսզի մեր Աստուածը անարգուի հրապարակային ծաղրածութիւններով: Ոչ մէկ մեղմացում, տկարացում ատելութեան սա զգացումին մէջ:

Մի վախնաք թիւէն: Պատմութենէն գիտենք: Միլիոններ էին ու փախան ափ մը Հելլեններուն առջեւէն:

Այո՛, Գանի քանի անգամներ մեր հայրերը փշուր փշուր աղացին անոնց հսկայաթիւ բանակները: Ու ըրին ատիկա, զինուորներ, իրենց երկաթ բազուկներովը: Այսօր: Այսօր նոյն թշնամին է մեր դէմ: Նոյնն են զայն ուռեցնող ախորժակները կողոպուտի, վայրագ սպանդի նոյն ծարաւը այդ մարդոց սրտերուն մէջ: Հայոց գեղեցիկ աշխարհին մէջ չկայ կարեւոր դաշտ մը ուր չըլլայ տրուած փաստը այդ բարբարոսութեանց: Մենէ իւրաքանչիւրի երակին մէջէն դարերուն վրէժն է որ կը թաւալի, զինուորներ...:

Մի մոռնաք թէ ինչ անգթութեամբ անոնք կը վարուին պարտուածներուն հետ:

Դարերով մեր պապերը գիտցան պաշտպանել մեր երկիրը մէկ ու նոյն ոգիով: Ու նոյնն են այսօր նորէն, այդ անարգ աւազակներուն դէմ ճակատի վազող հոգիները սա բոլոր կորիւններուն, ամէն մէկը կրակի կտոր, ամէն մէկը բանակ մը լեցնելու չափ վրէժով բռնկած, քաջաբազուկ, արդար, որոնք մտիկ ըրած ատեն իսկ կ'եփին իրենց եռանդէն: Պիտի կռուինք, ինչպէս կռուեցան մեր հայրերը, պիտի կռուինք և այս-

օր, ինչպէս կռուեցանք ամիս առաջ Վրաց և Ադուանից սահմաններուն վրայ ու ջախջախեցինք զիրենք սակաւածնն թիւով:

Ըսի քիչ առաջ ինչ կ'արժէ անոնց թիւը: Թիւը միւթարանքն է տկարներուն, երկրաւորով տոգորուածներուն: Մեզի՛ հաւատքը, մեր Աստուծոյն և մեր հոգեղէն արժէքներուն վրայ: Մեզի՛ վայրագ ու արդար համոզումը մեր դատին սրբութեան, կա՛յ աւելի վսեմ ճակատագիր քան մահ ուան վրայ սա յարձակողականը, պաշտպանելու համար ամենէն նուիրական բաները երկրին ու երկնքին: Մեզի՛ առնուածութեան, յարձակման մէջ սա կատաղութիւնը: Ով կը մեռնի իր պապերուն հողին վրայ, զայն օտարէն փրկելու ինքնամոռացման, գինովութեան մէջ, կատարած կ'ըլլայ գերագոյն պատգամը գերագոյն առաքինութեան:

Պիտի հետեւիք ձեր Սպարապետին, զօրավարներուն, որոնք ձեր առջեւէն պիտի անցնին ջուրը: Ահա իմ սաղաւարտը: Ահա անոր պլոււած ապարօշը: Դուք զիս պիտի տեսնէք ամենէն ամբոխուած կէտերուն: Ու կ'ըսեմ ձեզի. երկու անգամ չի մեռնիր մարդ: Ով կը նահատակուի, արդէն արժանաւոր զաւակն է երկինքին: Ով կը մնայ ողջ, հալածելու թշնամին, դիմադրելու կրկին՝ դարձեալ կը ծառայէ Հայրենիքին ու անոր Աստուծոյն: Հայոց աշխարհին արիարանց ու առիւծ տղաք, ձեզի ակնկառոյց կը սպասեն. պսակ ի ձեռին, հոգիները մեր երջանիկ նախնիքներուն, երկինքին խորերէն: Ձեզի են սեւեռուած, սա ըոպէին, հարիւր հազարաւոր սրտերը ձեր մայրերուն, հայրերուն, քոյրերուն, կիներուն, մանուկներուն: Ինչ թանկագին, աստուածային զարհուրելի բախտ է յանձնուած ձեր բազուկներուն: Ամէն իջնող դանակ փրկուած աղջիկ մըն է անօրէնին ճիրաններէն: Ամէն նիգակ մանուկ մը կ'ազատէ ձիուն սմբակներէն: Ձեր բազուկն է որ պիտի պաշտպանէ մեծ պատիւը համայն Հայաստան աշխարհին: Պիտի արգիլէ կոտորածը, գերեզման անարգուիլը մեր հարսներուն ու պարմաններուն: Ձեր զաւակները կախուած են ձեր սուրերուն երախէն: Զինուորներ, ձեր մարմինները՝ կենդանի բերդեր են, ձեր քաղաքները, ամրոցները, սրբարանները պաշտպանող: Ու

ԷՋ ՄԸ ԵՂԻՇԷԷՆ

... Իսկ երանելի առաքինիներուն, կապուածներուն, պատերազմի մէջ խնկողներուն կիները ես չեմ կրնար բոլորն ալ թուել հոս. վասնզի ինծի անծանօթները աւելի չատ են քան ճանչցածներս: Մինակ հինգ հարիւրը յականէ յանուանէ կը ճանչնամ: Անոնք միայն աւագներէն չէին, այլ կրտսերներէն ալ: Ամէնքն ալ՝ վառուած երկինքով՝ վար չմնացին, ճգնութեան մէջ, անոնցմէ՝ որոնք աշխարհին համը չառին: Աւագ թէ կրտսեր, անոնք հաւատքի նոյն առաքինութիւնները հագան: Ամենին չի յիշեցին իրենց տոհմիկ ազատութիւնը, այլ այն մարդոց նման որոնք գեղջուկ կեանքի տաժանքներուն վարժուած են իրենց ծրնունդէն իսկ, յանձն առին վիշտերու համբերել, այս վերջիններէն առաւել աստիճանով մը:

Ոչ միայն իրենց ներսէն միսիթարեցին զիրենք յաւիտենական յոյսին անբեռնով գործութեամբը, այլ մարմնական չարչարանքներով կեանքին ծանր բեռը տարին աւելի չափով մը: Թէպէտեւ ամէն մէկը իր ձեռնասուռն սպասաւորները ունէր, կարելի չէր որոշել թէ ո՞րն էր Տիկինը, ո՞րը՝ Նաժիշտը: Նոյն էր անոնց զգեստը, ու գետնախշտի կը պառկէին: Մէկը միւսին անկողին չէր ձգեր, վասնզի խոտերն անգամ չէին զատեր իրարմէ: Փսրաները նոյն թուիս

կը հարցնեմ, — Ի՞նչ է աւելի վսեմ ու գեղեցիկ, քան այս ամենուն համար պատերազմը, դարձեալ պատերազմը, միշտ պատերազմը: Կա՞յ աւելի թանկ զոհաբերութեան ինչ որ հայրենեաց Աստուածը սա բռնապետ կ'ուզէ իմ բերանով ձեր բոլորէն: Յաղթել ու մեռնիլ, եթէ ատ է կամքը երկրի ու երկնի արարչին: Ահա իմ վերջին խօսքը:

Տէ՛ր, լսէ բոլոր այս ձայներուն: Զինուորներ, պահն է Հաղորդուելու մեր Փրկչին մարմնովն ու արիւնովը:

Հիմա լրացած է ամէն բան: Տէր Հայր, օրհնէ մեր բոլորին բազուկները:

Կուռի՛. ժամն է արդէն:

գոյնով էին և սնարի բարձերուն նոյն էր սեռութիւնը:

Անոնց համար առանձին համադամ եւ փող չկար ու աղնուականներու օրէնքներուն համեմատ, որոշուած հացարարներ չունէին անոնք: Շարաթամուտը ընդհանուր էր անապատականներուն մէջ եղածին նման: Մէկը միւսին ջուր չէր թափեր ձեռքերուն, ոչ ալ պղտիկները մեծերուն դաստառակներ կը մատուցանէին: Փափկասուն կիներուն ձեռքը օշնան չինկաւ, ու չունեցան անոնք ուրախարար իւզը օծումին: Անոնց առջև մաքրափայլ սկուտեղներ չի դրուեցան և ուրախութեան օրերու բաժակակալներ չբերուեցան: Մէկը նուիրակ չի սպասեց անոնց դուռներուն առջև և անոնց հարկինքներուն չհրաւիրուեցան աղնուականներ: Ոչ մէկը յիշեց թէ բնակասնունդ դայեակներ կամ սիրելի հարազատներ ունէր:

Նորեկ հարսերու սրահակները և սրբակապանները փռուեցան և ծխոտեցան. ու անոնց առագաստի սնեակներուն մէջ սարդի ոստայններ հիւսուեցան. անոնց տաճարներուն բարձրագահները կործանեցան ու անոնց կոչունքներուն (երախսանք) սպասները խանգարուեցան: Ինկան անոնց ապարանքները և անոնց ապաստան ծառայող ամբողջները աւերակի վերածուեցան: Անոնց ծաղկանոցներուն բուրաստանները ազաղեցան ու չորցան. տաշտախիլ եղան որթերը անոնց զինեքեր այգիներուն: Իրենց աչքերով տեսան իրենց ինչքերուն յափշտակումը, և իրենց ականջներով լսեցին իրենց սիրականներուն չարչարանքները: Անոնց զանձերը արքունիքէն զրաւուեցան: Ու իրենց զարդերն իսկ չմնացին իրենց երեսին:

Հայոց աշխարհին փափկասուն տիկիները որոնք զրգացած ու փայփայուած կ'ապրէին, իւրաքանչիւրը իր դեսպակին կամ գահաւորակին մէջ, հիմա միշտ հետի ու բռնակ կ'երթային աղօթատուն, անձանձըրոյթ պաղատելով, ուխտեր ընելով, որպէսզի կարողանան զիմանալ այդ մեծ նեղութեան: Անոնք որ իրենց մանկութենէն իսկ զուարակներու ուղեղով և երէններու ամիճներով սնած էին, մեծ ուրախութեամբ կ'ընդունուէին, վայրենիներու նման, խոտակեր կեանքի մը կերակուրները և ամե-

ներին չէին յիշեր իրենց վարժուած փափկութիւնները։ Սենալով ներկուեցան անոնց մարմիններուն մօրթերը, վասնզի ցորեկները կ'այրէին արեւէն, ու զիշերները կը խորտակուէին զետինէն։ Մշտամրմունջ սաղմոսներ կային անոնց բերանը. ու մարգարէներուն ընթերցումը լիակատար մխիթարութիւն էր անոնց համար։ Զոյգ զոյգ միաբանեցան, համահաճ ու հաւասար ամօլներու նման, արքայութեան ակօսքը ու զիղ վարելով, որպէսզի առանց վրէպի հասնին խաղաղութեան նաւահանգիստը։

Մոռցան կանացի տկարութիւնները, և առաքինի աշրեր եղան հոգեւոր պատերազմին մէջ. մարտնչեցան կարեւոր մեղքերու դէմ, ու կտրեցին հանեցին անոնց մահաբեր արմատները։ Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և նախանձին կապուտ ներկուած քները լուացին սուրբ սիրով։ Կտրեցին ազահութեան արմատները, և անոնց ճիւղերուն մահաօրիթ պտուղները չորցան։ Ռոնարհութեամբ կոփեցին ամբարտաւանութիւնը, ու նոյն խոնարհութեամբ հասան երկնաւոր բարձրութեան։ Աղօթքներով բացին երկինքին փակուած դուռները, ու իրենց փրկութեանը համար, սուրբ խնդրուածքներով, հրեշտակներ իջուցին երկինքէն։ Հեռուներէն աւետիսը լսեցին և փառաբանեցին Աստուածը բարձունքներու մէջ։

Անոնց մէջէն այրինները վերստին հարս եղան առաքինութեան, և իրենց անձէն վերցուցին այրիութեան նախատինքը։

Կապեալներու կիները իրենց կամքովը կապեցին մարմնաւոր ցանկութիւնները, ու սուրբ կապուածներու չարչարանքներուն մասնակից եղան։ Իրենց կեանքին մէջ մեռնող քաջ նահատակներուն նմանեցան, և հեռուէն մխիթարող վարդապետներ եղան

բանտարկեալներուն։ Իրենց վաստակովը կերակրուեցան ու արքունիքէն իրենց յատկացուած ոոճիկը տարեկան թոշակի ձեռով կ'առնէին ու կը զրկէին (տարագիրներուն), մխիթարելու համար զանոնք։ Անարիւն ճպուռներու նմանեցան, որոնք իրենց երգին քաղցրութեամբ կ'ապրին առանց ուտելու, և կենդանի կը մնան, օգ միայն ծծելով, նմանելով անմարմին հրեշտակներուն։

Շատ ձմեռներու սառնամանիքներ հալեցան։ Գարունը հասաւ։ Նոր ծիծառները եկան։ Տեսան և ուրախացան կենցաղասէր մարդիկ։ Ու կիները չկրցան իրենց անձկալինները տեսնել։ Գարնան ծաղիկները անոնց յիշեցուցին իրենց պսակասէր ամուսինները, բայց անոնց աչքերը կարօտ մընացին անոնց երեսներուն գեղեցկութիւնը տեսնելու։ Որսի բարակները սպառեցան և որսորդներու արշաւանքները կուրացան խցուելով։ Իրենց գիրերովը յիշատակուեցան անոնք, և ոչ մէկ տարեգարծի տօն զանոնք ետ չբերաւ հեռուներէն։ Նայեցան անոնց ճաշատեղերուն և արտասուեցին. ու ամէն ատեններու մէջ անոնց անունները յիշեցին։ Անոնց անունով շատ մը արձաններ կանգնուած էին ու իւրաքանչիւրին անունը գրուած էր վրան։

Ու երբ իրենց միտքը ամէն կողմէ անկոծ էր այսպէս, բնաւ չթուլցան երկնաւոր առաքինութենէն։ Դուրսէն սգաւոր ու չարչարուած այրիներու կը նմանէին, ու իրենց ներսը զարդարուն էր և մխիթարուած՝ երկնային սիրով։ Ա՛յ մոռցան հեռուէն եկողներուն հարցնել թէ, ե՞րբ պիտի տեսնին իրենց սիրելիները։ Ու Աստուծոյ մէկ բան միայն կը փափաքէին — աւարտել, երկնաւոր սիրով, ինչ որ սկսած էին այնքան քաջութեամբ։

ՀԻՆ ԷՋԵՐ

ՔԱՐՈՁ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՅՈՑ

Մեծասքանչ ճոխութեամբ ճըշմարիտ սիրով զաւրացեալք երջանիկ դասք զինուորութեան, համագումար միաբանութեամբ ճըշմարտապէս յաւէտ վառեալք սիրով Հոգոյն, թագաւորին Քրիստոսի քաջ զաւրականք և նահատակք յաղթաւդք ի պատերազմի, անքակ միութեամբ՝ անզով անձկութեամբ՝ միահոմեալ ի մարտ քաջութեան, լի հաւատով զաւրացեալք և զաւրացուցչին զանձինքս յանձն արարեալ, զառաջնասաղապ կրրիցըն կայտիս խորասուզելով, ըզմահ քան ըզկեանս ընտրելով անձամբ զանձին ըզսպիս ջընջելով. կենդանիք ճըշմարտապէս մահուամբ յանմահ թագաւորին զինուորութիւն վերակարգեցայք, բարեխաւսեցէք առ թագաւորն երկնաւոր վասըն տաւնողացըն ըզյիշատակըն ձեր, աղաչեմք:

Ով երջանիկ դասք զինուորութեան՝ քաջամարտիկք և արինահատակք, տունկք տենչալիք և բարունակք բարիք, շառակիք սիրունք և ստեղունք իմաստունք, ակունք պատուականք յեռեալք ի պըսակ թագին Քրիստոսի, բոյսք գովելիք և ծաղիկք սըխրալիք, ի սառնաստոռոյց լեռանց հիւսիսոյ հարաւային հողմով տապացեալք. բողբոջք բարիք արգասաւորեալք, ձայնեալք տիրապէս միաբանութեամբ ըստ հարսնական երգաբանութեան, երթ հիւսիսի տըխուր տեսութիւն, և զաւրացիք թեման բարեբեր ճըշմարտապէս կենդանասերեալ, որով ծաղկեն ուռք ալգեստանեաց արգասաւոր պտղաբերութեամբ, զոր ընկալեալ ճըշմարտապէս քաջ զաւրականք արդեամբք կատարեալ. բարեխաւսեցէք . . . :

Ղըկայք պանծալիք և նահատակք բաղձալիք, գունդք գովելիք և զինուորք քաջամարտիկք. զաւրեղք ահաւորք և ստուարք մեծութեամբ, ճոխք ճըշմարտապէս և խոնարհք հոգով, հաւանք հաւատով և ուխտապահք պատուիրանաւ, հնազանդք

հեղութեամբ և հրամանակատարք տէրութեան, կամայորդոր քաջալերութեամբ հաճոյական պատարագք զըտայք, մարմնով յերկրի զաւրաւորք զըտեալք՝ հաւատով յերկինքս պայծառացեալք, որով յամաթ արարեալ տիրապէս ըզկըրկնակի գունդըն թըշնամեաց, ստացեալ ճշմարտապէս առնուն գովելի և փառըս յաւէտ ցանկալի. բարեխաւսեցէք . . . :

Սիրալիր բերկրանաւք բարգաւաճեալ միաբան ճըշմարիտ դասք զինուորութեան, քաջ սպարապետն և արին Վարդան ճըշմարտապէս շառակ սըրբութեան, ըզվեցբիւրեան գունդըն բանակին ի քառասաջ կարգըս յաւրինէր, պայծառագեցեստ լուսափայլութեամբ՝ ի յառազաստըն սուրբ հրաւիրեալք, կենդանարար խորհրդով ըզմայլեալք անքակ սիրով ի Տէր միացեալք, յուսով ի սպանդ ստուգապէս զիմեալք՝ աղաթելով հաճոյ զըտանել, պատարագք ընդունելի կամացն Աստուծոյ. բարեխաւսեցէք . . . :

Եւ տիրապէս սքանչելի միաբանութիւն գնդին գովելի, միահամուռ մաքսումամբ մարտուցեալ ի թշնամեացըն զիմադրութիւն, քաջապէս կացեալ յատենի և կարգաւորեալք ի պատերազմի, ընդ բաղմախուս[ն] գունդըն զազանացն աներկեւան հրպմամբ խիզախեալք, ի յանցս ուղխիցն յառաջացեալք՝ զհեղեղ մեղաց կոխեալ ծանուցին, ի սաստկագին բախման բարկութեանըն տազնապ յերկրի մեծ երեւելին, ի զանազան զինուց սաստկութեան՝ բաղմապատիկ հնչմունք ձայնէին, որով յաւէտ արիքն ընտրէին և զաւրաւորքըն խիզախէին. բարեխաւսեցէք . . . :

Ստացեալ անուն քաջութեան յասպարիսի նահատակութեան՝ մեծ սպարապետըն քաջարանց Վարդան, վտանգելոցն յաղհականութիւն արիաբար ձեռնը կարկառէր, զտրկարացեալսն զաւրացուցեալ և զթըշնամեաց գունդն յաղթահարեալ, մեծ մաքսումամբ յերկրի կատարեալ՝ սիրով յերկինս պըսակաւորեալ, ընդ որս և թիւ զոյ նահատակացն մի հաղարաւ և եռատասամբք ի վեցեկի թիւ բովանդակեալ, պարծանք տիրապէս տանըս թորգովեան և բարեխաւսք տաւնախմբողաց, հայցողաց բանիս հայցեցէք յամենառատ Տեսունէն զքաւութիւն, որ ունիք համարձակութիւն առ Տէր

դաւրական քարայրէք . բարեխաւսեցէք . . .

Ի յերկրի նահատակեալք և ի յերկինքս պըսակաւորեալք, երանելի դասք զինուորութեան համադումար միաբանութեամբ, զչար թընամին ամաչեցուցեալ՝ արձան սիրոյ առ Աստուած կանգնեալ, զհրեշտակաց դասս ուրախացուցեալ բերկրանալք յինքեանս ըզձեզ ընդունելով, այսօր տաւնէ մեծաւ ցընծութեամբ Հայաստանեայց սուրբ եկեղեցի՝ ըզմեծահրաշ աւր ձեր յիշատակի, յորս աղաչեմք զերանելի դասք զաւրականաց քարեխաւս լերուք առ Տէր վան ամենայն աշխարհի, պահել պարագայց ամալք ըզդիտապետըն մեր . . . ամենայն լրութեամբ եկեղեցւոյ սրբոյ, ըզթագաւորն քրիստոսասէր՝ ամենայն զինուորական դասուքն յաղթաւզ լինել ի պատեւազմի, աւգոց քարեխաւսութիւն և պըտղոց առատութիւն, հիւանդաց առողջութիւն և ամենայն պիտոյից լիութիւն։ Ահա յիշեսցես . . .

Եւ եւս առաւել . . .

Ձոնձինքս մեր . . .

Գոհարանութեամբ փառատրութիւն ի բարձունս ամենասուրբ երրորդութեանդ մատուցանեմք, որ զամենայն յամենայնի լընուս առատապէս, բարեխաւսութեամբ սուրբ և փառաւորեալ իսկուհւոյն և միշտ կուսին Մարիամու, մարգարէականացըն լըման և շնորհի սկիզբն եղելոյ կարապետին և մըկըրտէին Յովհաննու, կըրկին բացաւղին զերկինս ի մարտի Ստեփաննոսի՝ սկզբնեզ վկային, խաչաչարչար նահատակութեամբ մեր համայնիցըս Լուսաւորչին, մըշտամըսունչ աղաւթիւք հայցմամբ արտասուածորըն ճըգնաւորաց, և ամենայն հաճոյացելոց քոց աղօթիւք և խընդըրուածովք, Ողորմեաց . . .

Ձեռ. Թ. 231

Հրատ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ա.

Հայաստանի ցեղին կացութիւնը Ե. Գարուց. — Ե. գարը որ Հայկական Մատենագրութեան մէջ Ոսկեդար անունով ծանօթ է, երկու մեծ եղելութիւններով նշանաւոր եղած է։ Այդ եղելութիւններէն առաջինն է Հայ Գրերու Գիւտը, իսկ երկրորդն է Վարդանանց Պատերազմը։ Հայ Գրերու Գիւտը տեղի ունեցաւ 404ին, Մեծն Մեսրոպի ձեռամբ (405 – 408 ?)։ Վարդանանց Պատերազմը՝ 451 Մայիս 26, Շաքաթ օր, ստոյգ հաշիւներու համաձայն։

Գարազուլիս կազմող այս երկու իրողութիւնները, անմահացած են Հայկական մեր Ազգային Մատենագրութեան մէջ։

Հայաստան, երկու մեծ և իրարու հակառակորդ պետութեանց, Յոյներու և Պարսիկներու միջև բաժնուած էր (386)։

Հայաստանի արեւելեան մեծ մասը Պարսից, իսկ արեւմտեան մասը Յունաց կը պատկանէր։ Ըլլայ Յունա – Հայաստանը, ըլլայ Պարսկա – Հայաստանը իրենց սեպական և առանձինն թագաւորները ունէին, որոնք ընդհանրապէս տիրապետող կառավարութեանց արքունիքէն կախում ունէին։ Պարսկա – Հայաստանի վերջին թագաւորն եղաւ, Հայ – Արշակունի թագաւորներէն Արտաշէս կամ Արտաշիւրը, որ թագաւորեց 422 թուականին։

Հայ նախարարները տեսնելով որ, Արտաշէս մօլի, անկարգ և անբարոյական կեանք մը կ'անցնէ, իրենց մէջ կը համաձայնին և Պարսից Վաւմ Ե. թագաւորին նամակ մը գրելով՝ Արտաշէսի զահազըրկումը կը պահանջեն։

Թագաւորին զահազըրկումը պահանջող նամակը խմբագրելէն առաջ, Սահակ Պարթև կաթողիկոսին կարծիքն ալ առնել կ'ուզեն, հայոց խոհմ կաթողիկոսը, անոնց տեսութեան համակարծիք չըլլար և բողո-

քող նախարարները իր քովը կանչելով հայ-
րաբար կը յորդորէ որ ետ կենան այդպիսի
արարքէ մը, անոնց յայտնելէ յետոյ անկէ
յառաջ գալիք փնտններն ու դժուարութիւն-
ները, ի զուր կ'անցնին հայրապետական
խրատն ու յորդորը, հայ նախարարները
անդրդուելի կը մնան իրենց ազգամիտ
խորհուրդէն ու որոշումէն: Աւելի ծայրա-
յեղութեան երթալով, իրենց նամակին մէջ
Սահակ Պարթեւ կաթողիկոսն ալ կ'ամբաս-
տանեն, անոնց երկուքին փոխարէն մարգ-
պանի մը և կաթողիկոսի մը ընտրութիւնը
խնդրելով Պարսից արքայէն: Պարսից Վառ-
թապաւորը սիրով և հաճոյակատարութեամբ
ընդ առաջ կ'երթայ անոնց խնդրանքին,
Արտաշէս թագաւորին տեղ Վեհաճիւնի
Պարսիկ մարգպանը, իսկ Սահակ կաթողի-
կոսին տեղն ալ Սուրմակ անունով Մանազ-
կերտացի Ասորի եպիսկոպոս մը ընտրելով
զանոնք Պարսկա-Հայաստան կը ղրկէ,
յատուկ թագաւորական հրովարտելով մը:
Այսպէսով, հայ նախարարները, առանց
անսալու Հայոց փորձառու կաթողիկոսի
խորհուրդներուն, ինքնին Հայ-Արշակու-
նեաց թագաւորութեան վերջ տրուելուն
պատճառ եղան: Այն անկէջ վերջ, Պարսկա-
Հայաստանը Պարսից թագաւորներէն նշա-
նակուած մարգպաններով սկսաւ կառա-
վարուիլ:

Բ.

Եղիեկ. — Ուրիշ Եղիեկներու գոյու-
րիւնը. — Իրարու հետ շփոթուրիւնը. —
Ո՞վ է այն Եղիեկ փարգապետը, որ հեղինակ
կը ներկայանայ «Ոսկեմատեան»-ին կամ «Ոս-
կեգրգոյի»-ին:

— Քննադատական, պատմական և բա-
նասիրական արդի տուեալներու համաձայն
չորս «Եղիշէ»ներ հեղինակ կը ներկայանան
Եղիշէի Պատմութեան, «Վասն Վարդանայ
և Հայոց Պատերազմին»: Այս չքնաղ գիր-
քը Հայ Ժողովուրդին «Ոսկեմատեան»ը կոչ-
ուած է: Հին գրչագրական և ձեռագրական
պրպտումներ և խուզարկութիւններն ու քն-
նութիւններ կատարուելով, դիտուած է
թէ, կարգ մը ձեռագիրներու, մասնաւորաբ
Անձեւացեաց Օրինակ կոչուած ձեռագիրնե-
րուն մէջ հեղինակին (Եղիշէ ?) անունը կը
պակսի: Ըսողներ եղան թէ՛ «Եղիեկ» ա-
նունուն և անծանօթ հեղինակի մը գործն

է: Մեր ցեղային աւանդութիւնը, վերջին
դարերուն մէջ գրի առնուած ձեռագիրնե-
րը, Հայ պատմագիրները, Եղիեկ, Եղիեւ,
Եղիեայ (Elisée) անունով վարդապետի մը
կ'ընծայեն այդ չքնաղ «Ոսկեմատեան»ը:
Պէտք է խոստովանիլ թէ, մեր Ոսկեդար-
եան հայ հեղինակներուն — ըլլայ թարգ-
մանիչ ըլլայ ո՛չ-թարգմանիչ — մասին
կենսագրական որոշ եւ ստուգապատմ
տեղեկութիւններ կը պակսին մեզի: Տըր-
ուածներն ալ, կցկտուր, անկատար տեղե-
կութիւններ են ընդհանրապէս: Այս պատ-
ճառաւ, անոնց վրայ յենելով կարելի չէ
եղած իւրաքանչիւրին նկարագիրը, դերը
հասկնալ ու բացատրել:

Մեր պատմիչներէն, Յովհ. կաթողիկոս,
որ Պատմաբան կոչուած է (Թ. դար) շատ
համառօտ կերպով կ'անցնի Վարդանաց
Պատերազմին վրայէն և գլուխ մը միայն կը
նուիրէ անոր, «Յազազս նահատակութեան
Սրբոց Վարդանանց և Ղեւոնդեանց քահա-
նայից» (Կ. ԺԵ.): Իսկ Արծրունեաց տոհ-
մին պատմիչ Թովմա Արծրունին (Թ. դար)
խօսելով Պարսից կրօնքին, երկարատեան
Վարդապետութեան, Զրուանի, Զրադաշտի
չուրջ, հետեւալ կերպով կը խօսի Եղիշէի
մասին. «Եւ զայսոսիկ ոչ վայրապար ինչ
եհաս մեզ գրել, այլ զի բազում նեղու-
թիւն և սուր. ի ձեռն այսր սատանայական
ուսման՝ սպառեալ կործանեաց զերկիրս
հայոց, որպէս և ցուցանէ քեզ պատմու-
թիւնք Սրբոց Վարդանանց, զոր գրեաց ե-
րանելի քահանան Եղիշէ» (Պատմութիւն
Տանն Արծրունեաց, տպ. 1887, ի Ս. Պե-
տերպուրի, էջ 27):

Ուրեմն, Արծրունեաց տոհմին պատմիչ՝
Թովմա Արծրունին համաձայն, Եղիշէն,
վարդապետ մըն էր, այսինքն կուսակրօն
քահանայ մը (*):

Քննադատներէն ոմանք, ընդ որ մե-
ծապատիւ Միքայէլ Փորթուզալ փաշա,
Վարդանանց Պատմութեան մէջ յիշատակ-
ուող, Արտաշատի Ժողովին (450) մասնակ-

(*) Նախնիք, «քահանայ» ըսելով, ամուրի,
կուսակրօն եկեղեցական, իսկ «երէց» ըսելով ա-
մուսնացեալ կրօնականներ կը հասկնային: Զոր
օրինակ Դրիգոր Նարեկացին, իր Նարեկի ողբեր-
գութեան յիշատակարանին մէջ այսպէս կ'ըսէ իր
մասին «Եւ Դրիգոր կրօնաւոր քահանայ...»
այսինքն՝ այժմու իմաստով վարդապետ կամ կու-
սակրօն եկեղեցական:

ցողներէն եղիշէ եպիսկոպոս Ամատունեայի վերագրեցին այդ հեղինակութիւնը: Իսկ ուրիշ բանասէրներ, Շահապիվանի Ա. Ժողովին մասնակցողներէն «եղիշէի գրան երիցու» անունով կոչուած եղիշէ երէցի մը — համանուն — վերագրեցին: Աւանդական պատմութեան, ինչպէս նաև ուշ ժամանակ գրուած յիշատակարաններուն համաձայն, եղիշէն, քաջն Վարդան Մամիկոնեանին, Հայոց զօրավարին զինակիր, սպասաւոր, դպրապետը (քարտուղար) եղած է, նոյնիսկ ըսուեցաւ թէ, ան քաջն Վարդան զօրավարին մերձաւոր ազգականը եղած էր^(*):

Ուրեմն, ըստ վերի տեսութեան, եղիշէն, վերոյիշեալ երեք եղիշէներէն ոչ մէկը չէր կրնար ըլլալ:

Ազգային աւանդութեան համաձայն, եղիշէ, Վարդանանց պատերազմէն վերջն է որ կրօնաւորուած ըլլալը կը շնչուի. «Եւ յետ կատարման նոցա (Վարդանանց) կրօնաւորեալ բնակէր եղիշէ առանձինն մեծաւ ճշնութեամբ ի լերինս և ի յայրս»:

Ամփոփելով մեր տեսութիւնը «Սսկեմատեանին» հեղինակ ներկայացող եղիշէներու մասին, ներկայացնենք զանոնք: Ասոնցմէ առաջինը՝ վարդապետ մըն է (քահանայ հին իմաստով), երկրորդը՝ եղիշէի Վարդանանց Պատերազմին զրքին մէջ յիշատակուած Արտաշատի Ժողովին մասնակցող 18 եպիսկոպոսներէն՝ եղիշէ Ամատունեայ եպիսկոպոսը, երրորդը՝ Պարսից Դրան երէց մը (արքունիքին) «եղիշէի գրան երիցու», չորրորդը, սուրբ հռչակուած եղիշէ անունով վարդապետ մը որ ապրած է Հայաստանի Ռշտունեայ գաւառին մէջ: Ինչպէս կը տեսնուի Թարգմանիչ եղիշէն և Ռշտունեայ գաւառին մէջ ապրած Ս. Ե.

զիշէ մը իրարու հետ շփոթուած են: Ընդհանուր առմամբ, Հայ մատենագրութեան մէջ, համանուն անուններով անձերու շփոթութիւն մը կը տիրէ, այսպէս ալ, մէկէ աւելի եղիշէներ իրարու հետ շփոթուած, նոյնացած են:

Խնդիրը, այն է թէ, ո՞րն է այն եղիշէն որ գրեց Վարդանանց Պատերազմին Պատմութիւնը: Հ. Ն. Ակինեան իր կողմէն հրատարակուած «եղիշէ վարդապետ և իւր Պատմութիւն Հայոց Պատերազմին», հատոր Ա. 1932, հատոր Բ. 1936, հատոր Գ. քարոյ լոյս տեսած է, վերտառութեամբ գործին մէջ, որ ընդարձակ մատենագրական-պատմական ուսումնասիրութիւն մըն է, հինգերորդ եղիշէ մըն ալ կ'աւելցնէ, եղիշէի Վարդանանց Պատերազմին զրքին իրեւ նոր հեղինակ մը ցոյց տալով տարբեր եղիշէ վարդապետ մը, Սինա պատմական լեռան վրայ ճշնող Ս. եղիշէ մը, որ տարբեր է Ռշտունեայ գաւառին մէջ բնակող իր սրբութեամբ համբաւովը հանրածանօթ Սուրբն եղիշէն:

Հ. Ն. Ակինեան, իր գործը դեռ չէ աւարտած, այսուամենայնիւ իր կատարած ուսումնասիրութիւնը եղիշէի Պատմութեան մասին, հետաքրքրական ըլլալով հանդերձ, հիմնական փաստեր մը չունի ինքնին, իր կողմէն ցոյց տրուած ապացոյցները վարկածներ են և չեն կրնար դիմանալ պատմական քննադատութեանց: Հ. Ն. Ակինեան ինչ որ աւանդութիւն է կը ջրէ զանոնք:

Իր այս ուսումնասիրութեան մէջ, նըպատակ ունեցած է ցոյց տալ թէ, եղիշէի Պատմութիւնը գրուած է Զ. դարուն իրրեւ 572 թուականին տեղի ունեցած ապստամբութեան պատմութիւն: Սակայն դար մը վերջը, մոլեռանդ և Յունատեայ եղիշէ վարդապետ մը խարդախած է այդ պատմութիւնը: Ան՝ Ղազար Փարպեցիի պատմութեան Բ. գրուադը օգտագործելով, հոն փոփոխութիւններ ներմուծած է, փոփոխած է եղիշէի Պատմութեան մէջ գործող անձերու անունները, յապաւած կամ աւելցուցած է ինչ ինչ մասեր անոր մէջ, ասով կերպով մը նոր գիրք մը կազմած է, որով 572 թուականին ապստամբութեան պատմութիւնը եղած է 451 թուականին կրօնական պատերազմի պատմութիւն: Հ. Ն. Ա.

(*) «Եղիշէ էր զինուորեալ Վարդանայ զօրավարին, և էր զպրապետ. և տեսող լեալ ամենայն անցիցն որ անցին ընդ զօրն Հայոց ի Յազկերտէ Պարսից արքայէ. և յետ նահատակութեան զօրացն Հայոց՝ թողեալ զզինուորութիւնն կրօնաւորեցաւ, և բնակէր ճշնութեամբ և խրատակրօն վարուք յանապատի. պահոց և աղօթից պարապեալ, խոտաբուծ և գետնախալ լեալ յաշխարհին Մոկաց և ի ծովեզերն: Եւ անդ զըրեայ զպատմութիւն որոց Վարդանանց և զգիրս կանոնականս. և զմեկնութիւն խաչելութեանն Քրիստոսի և այլ գիրս օգտակարս»: Այսպէս նշանակուած կը տեսնենք կ'ըսէ Հ. Գ. Զարրհանէլեան ի հին ձառնորտիւր, իր «Պատմութիւն Հայ Դպրութեան» մէջ, էջ 334:

կրնեանին յայտնած՝ բանասիրական յայտնութիւնները թէ և նորութիւններ, սակայն անոնք իրենց խորքին մէջ հեռու են գիտական և պատմա-քննական արժէք մը ներկայացնելէ։

Ենթադրութիւններով կարելի չէ եզրակացութեան մը հասնիլ։ Ենթոտազուրկ է և առանց մեթոտի կարելի չէ շէնքի մը հիմը բարձրացնել։

Այս բոլոր ենթադրութիւններէն դուրս, աւելի ստույգ, աւելի համոզիչ և տրամաբանական իրողութիւն մը կայ մէջտեղ։ Եզիշէն, որ բուն և իսկական հեղինակը կը ներկայանայ «Ոսկեմատեանին» Երկրորդ կամ Կրսսեր թարգմանիչներու խումբէն էր, իրեն ընկերակից ունենալով Մովսէս, Դաւիթ, Մամբրէ և ուրիշ վարդապետներ, միասին Աղեքսանդրիա, Աթէնք և Բիւզանդիոն (Կ. Պոլիս) գացած են, հոն բարձրագոյն ուսմանց, գիտութեանց և կրթութեանց հետեւելու համար (Մովսէս Խորենացի Գ. Գիրք պրակ 62)։ Ուրեմն, Եզիշէն, Երկրորդ թարգմանիչներու կամ Կրսսեր թարգմանիչներու խումբէն էր, ո՛չ թէ Վարդան Մամիկոնեանին ատենադպիրը կամ քարտուղարը, ո՛չ ալ դրան երէց մը կամ Ամատունեաց Եզիշէ կալսկոպոսը և ոչ ալ սուրբ հոգակուած Ռշտունեաց գաւառին Եզիշէ վարդապետը և ոչ ալ Հ. Ն. Ակինեանէն հնարուած Սինա լեւան Ս. Եզիշէն։ Եզիշէ թարգմանիչներու խումբէն էր և իրեն ընծայուած գործերէն կարելի է ինչ ինչ տեղեկութիւններ ստանալ իր և իրենց մասին, որոնք ուսմանց նուիրուելու համար երկար ճամբորդութիւններու տաժանքը յանձն առած են։ Երկրորդ կամ Կրսսեր թարգմանիչներու զէպի Պաղեստին այցելութեան մասին շատ արժէքաւոր յիշատակութիւն մը կայ, Մովսէս Խորենացիին Պատմութեան մէջ. «Անցաք ի Սուրբ Տեղիսն Երկրպագել և Մնալ Վայրկեան ի Պաղեստինացւոց Հրահանգս»։ Պաղեստին գալով, Եզիշէ և իր ընկերակից վարդապետները ուխտադնացութեան համար զէպի Թաբոր լեռը կը բարձրանան։

Իր Թաբոր լեւան նկարագրութեան մէջ, թարգմանիչ Եզիշէն կարգ մը հետաքրքրական և արժէքաւոր տեղեկութիւններ կուտայ իր և իրենց մասին։ «Ձայս Հաւատ Յանձին Պահելով, Դեգերէին Յուսումնասիր-

ութեան Ուխտաւոր Մանկունք Հայոց Մեծաց, Զանձինս Պարապեցուցեալ ի Վաճառաշահ Օգոց»։ (Յայլակերպութիւնն Քրիստոսի)։ Նոյն նկարագրութեան մէջ ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «Ասելով Յաւետարանէն Դիտէք Ամենեքեան Զտեղին, Բայց Մեր Եւ Անձամբ Իսկ Հասեալ Եւ Աչօք Տեսեալ, Ոչ Յատուկ Միայն Առանձինն, Այլ Բազում Ընկերակցօք»։

«Բազում Ընկերակցօք» բացատրութիւնը ցոյց կուտայ թէ, Երկրորդ կամ Կրսսեր թարգմանիչ վարդապետներու խումբէն էր այս, որոնց մէջ էր նաև Վարդանանց Պատերազմին պատմութիւնը գրող անմահաւուն Եզիշէն, Աւարայրի պապուլը, որոնք երուսաղէմ ալ ուխտի, երկրպագութեան եղած պէտք է որ ըլլան։ Եզրակացնելով ըսենք թէ, Եզիշէ վարդապետ, Վարդանանց Պատերազմին գրքին հեղինակը, Երկրորդ կամ Կրսսեր թարգմանիչներու խումբէն էր և ան անոնց հետ միասին Բիւզանդիոն (Կ. Պոլիս) կը գտնուէին, 451 թուականին։ Երկրորդ կամ Կրսսեր թարգմանիչ վարդապետներու խումբը, Վարդանանց Պատերազմէն վերջն է որ Հայաստան վերադարձան և Եզիշէն գրեց իր Վարդանանց Պատերազմին պատմութիւնը և անմահացաւ հայկական ազգային և կրօնական մատենագրութեան մէջ և անոր փայլուն աստղերէն մին եղաւ։

Գ.

Ղազար Փարպեցի եւ Եղիշէ. — Ղազար Փարպեցի երրորդ պատիւ Հայոց. — Եղիշէի՞ն, եթէ ոչ Ղազարու Պատմութիւնը առաջ գրուած է. — Երկուեքն անկախ ու արբեր աղբիւրի մը գոյութիւնը։

— Վարդանանց Պատերազմը, մեր առաջին կրօնական մեծ պատերազմը եղած է, որուն զլիսաւոր հերոսներն եղած են Կարմիր Վարդան Մամիկոնեան, հայ հոգեւորական և աշխարհական դասակարգը իսկ երկրորդ կրօնական մեծ պատերազմը եղած է Վահան Մամիկոնեանին մղած ապստամբական շարժումը ընդդէմ Պարսից։ Եթէ Վարդանանց պատերազմին հոգին, ղեկավարը և պարագլուխը հանդիսացաւ Աւարայրի հերոս Վարդան Մամիկոնեան զօրավարը, ապահովաբար Վահանեանց պատե-

բաղմին հերոսը և ղեկավարը եղած էր Վահան Մամիկոնեան զորավարը, հայոց քաջասիրտ ու անվահեր և մեծ սպարապետը։ Ղազար Փարպեցին և եղիշեն, սոյն տղւոյն պատմիչներն ալ, նոյն նիւթին շուրջ ալն է Վարդանանց Պատերազմին Պատմութիւնը գրած են։ Ղազար Փարպեցին, Սահան Արծրունիին աչակերտած էր և գովեստով կը խօսի իր ուսուցչին մասին։ Ան, իր պատմութիւնը գրած է Վահան Մամիկոնեան սպարապետին և հայոց մարդպանին խնդրանքովը։ «Արարեալ ի խնդրոյ զօրավարին հայոց և մարդպանին տեսնելու Վահանայ Մամիկոնոյ», Ղազար Փարպեցին, իր պատմութիւնը, Հայաստանի բաժանումէն (390) կը սկսի և կը հասցնէ մինչև Վահան Մամիկոնեան զօրավարին մարդպանութեան տարին (485)։ Փարպեցին պատմութիւնը կը վերջանայ Յովհան Մանգակունի հայրապետին նշանակալից ատենախօսութեամբը։ Ըլլայ եղիշեն, ըլլայ Փարպեցին, երկու պատմիչներն ալ Մամիկոնեաններէն հրաւէր կը ստանան գրելու և պատմելու Վարդանանց ազգային և կրօ-

նական մեծ պատերազմը։ Եղիշեն, իր պատմութիւնը կը գրէ Դաւիթ Մամիկոնեան երէցին խնդրանքովը։ «Դաւիթ երիցու Մամիկոնի հայցեալ», իսկ Փարպեցին ալ Վահան Մամիկոնեան զօրավարին և հայոց մարդպանին խնդրանքովը կը գրէ «Արարեալ ի խնդրոյ զօրավարին հայոց և մարդպանին տեսնելու Վահանայ Մամիկոնոյ»։ Մամիկոնեաններն են որ կ'ուզեն որ իրենց ցոյց տուած զիւցազնական քաջագործութիւններն ու հերոսութիւնները գրուին, որպէսզի՝ ապագայ սերունդներ ճանչնան։ Մամիկոնեան նախարարական տունը, մեր ցեղին ռազմաշունչ և ազատական շարժման գլխաւոր դերակատարները և ղեկավարները եղած են, հայոց զինուորական ուժին կրօնասէր և կորովի ու զիւցազն առաջնորդներն եղան, որոնք հինգ դարեր շարունակ վարեցին և կազմակերպեցին մեր ազատագրական և անկախութեան շարժումը, ազգի և կրօնքի անընկճելի և անխորտակելի երկու մեծագոյն ուժերով գոտեպընդուած և զօրացած։

ՊԱՐԳԵԻ ՎՐԴ. ՎԹԱՆԷՍԵԱՆ

(Նառնակիլի՝ 1)

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Ե Ղ Ա Ն Ա Կ

ՀԱՅՈՑ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԴԷՄ

(Ազատ քաղաքացիական կուսակցութեան «Վասն Վարդանանց եւ Հայոց Պատերազմին» հաստէն Աւարայրի ձախաւարսի դրուազը)։

Երբ Պարսից գունդին հրամանատարը տեսաւ թէ, զանոնք խաբելու համար պատգամաւորները սպառեցան, և իրենց անքակտելի միաբանութենէն ցրուելու յոյսը հատաւ, այն ատեն կը կանչէր անօրէն Վասակը և բոլոր ուրացեալ իշխանները որ անոր հետ էին Հայոց աշխարհէն։ Կը հարցընէր անոնց և կը հասկնար անոնցմէ յաղթութիւնը վատակելու հնարագիտութեան մասին։ Եւ երբոր տեղեկացաւ իւրաքանչիւր մարդու քաջութիւնները, իր տրամադրութեան տակ եղող զօրապետներէն շա-

տերը կը կանչէր, և կը հրամայէր բերել փիղերու երամակներ, և գազանները գունդերու կը բաժնէր և իւրաքանչիւր փիղի աջ ու ձախ կողմերը 3000-ական զինուոր կը զետեղէր, չհաշուելով տակաւին մընացեալ զօրքերը։

Մեծամեծներուն հետ կը խօսէր արքունի հրամանով և կ'ըսէր. — «Անձնիւր ոք թող յիշէ մեծ թագաւորին պատուէրը, և թող նախընտրէ մահը քան թէ վատութեամբ շահուած կեանքը։ Մի մոռնաք պըսակները և առատաձեռն պարգևները որոնք

պիտի շնորհունին ձեզի արքունիքէն: Տէր էք գաւառներու և ունիք բազում իշխանութիւն: Դուք զիտէք Հայոց աշխարհին քաջութիւնը և իւրաքանչիւր Հայու արիւնքութիւնը գէպի նահատակութիւն: Թերեւս ձեր պարտուելովը վրիպիք այն կեանքէն զոր պիտի ունենաք: Յիշեցէք ձեր սիրելի բարեկամները: Գուցէ ոտնահար ըլլաք արտաքին թշնամիներէ և ողբակից ներքին սիրելիներու:

Նաև կը յիշատակէր անոնց շատ մը դաստիարակները, որոնք թէև պատերազմէն ազատեցան, բայց իրենց սուրբ մահուան վճիռը ընդունեցին:

Այս կ'ըսէր և կը սաստիկացնէր արքունի հրամանը. կը կազմակերպէր բոլոր զօրքերը, և կը տարածէր բանակը մեծ դաշտին երկայնութեան վրայ: Կ'ամրացնէր Մատենան գունդը իրրեւ հզօր աշտարակ կամ իրրեւ անմատոյց բերդ մը: Նշաններ կը բաշխէր, դրօշներ կը պարզէր, և մեծ փողի ձայնով պատրաստ ըլլալ կը հրամայէր: Իսկ Կաշտաց, Հոնաց և Գեղաց գունդերը և ուրիշ ընտիր պատերազմիկներ տեղ մը հաւաքելով կը պատուիրէր իր գունդին աջ կողմէն պատրաստ ըլլալ Հայոց գէմ:

Իսկ Քաջն Վարդան՝ աւագանիին խորհուրդով, և ամենուն միաբան համաձայնութեամբ հրամանատարներ կը կարգէր: Առաջին գունդը Արծրունեաց իշխանին տրամադրութեան տակ կը գնէր և անոր նիզակակից կը կարգէր Մոկաց մեծ իշխանը: Երկրորդ գունդը՝ Խորէն Խորխոռունիին կը յանձնէր և անոր նիզակակից կը կարգէր Ներսէս Քաջբերունին: Երրորդ գունդը կուտար Թաթուլ Վանանդեցիին, և անոր նիզակակից կը կարգէր Տաճատ Դնթունին, և քաջ մարտիկներէն շատեր անոնց աջ ու ձախ կողմերը կը զետեղէր: Իրեն համար կ'առնէր չորրորդ գունդը և իրեն նիզակակից քաջ Արշաւիրը և հարազատ եղբայր Համազասպ Մամիկոնեանը: Կը կարգաւորէր և կը կազմակերպէր ճակատը ամբողջ դաշտի երկայնքին, գէմ յանդիման Արեաց գունդին, Տղմուտ գետի եզերքը:

Եւ երբոր այսպէս պատրաստուեցան, երկու կողմերն ալ սրտմտութեամբ և բարկութեամբ լեցուած, գազանային զօրու-

թեամբ յարձակեցան իրարու վրայ, և երկու կողմերուն աղաղակներուն ձայները շփոթած ամպերու ձայնումներուն կը նմանէր և գոռում գոչումները լեռներու քարանձաւները կը շարժէր: Սաղաւարտներու և զէնքերու բազմութենէն արեգակի ճառագայթներն իսկ կը բեկանէին: Նաև բազմաթիւ սուրերու շփումը, և բազմախուռն նիզակներու ճօճը կարծես թէ երկինքէն թափող հրաձգութիւններ ըլլային: Քանզի ով կրնայ պատմել ահաւոր ձայներու մեծ տազնապները: Ինչպէս վահանաւորներու կոպիւնները և աղեղներու լարերուն ճայնութիւնները, որոնք ամենուն ականջները կը խլացնէին:

Հոն կարելի էր տեսնել մեծ տազնապին յառաջացուցած տարակուսանքն ու շտապը, և երկու կողմերու յանդուգն յարձակումէն յառաջ եկող աղէտը: Թանձրամիտները կը յիմարանային և վախկոտները կը փախէին, քաջերը կը յարձակէին և նահատակուողները կ'աղաղակէին: Բազմութիւնը խուճարու բաժնուելով փորձեց զետր իջնել, բայց Պարսից գունդը անձանթ ըլլալով տեղւոյն դժուարութիւններուն ցեխին մէջ սողալ սկսաւ: Իսկ Հայոց գունդը անցաւ զետր ձիերու վրայ նստած: Մեծ զօրութեամբ իրար բաղխելով երկու կողմերէն շատ մը վիրաւորներ ինկան դիաթաւ:

Այդ մեծ տազնապին՝ Քաջն Վարդան շուրջը նայելով տեսաւ Հայոց գունդի ձախ թեւին ընկրկելով տկարանալը պարսիկ զօրքերուն առջև: Յարձակեցաւ մեծ ոյժով այդ կողմին վրայ և պարսից գունդին աջ թեւը բեկանելով քշեց փիղերուն առջև և շրջանընելով կը կոտորէր մինչև նոյն տեղը: Եւ այնպէս շտապով տազնապի կը մատնէր զանոնք որ, մինչև իսկ Մատենան գունդի ամուր պատրաստութիւնները խորտակուեցան:

Ապա Մուշկան նիսաւաւորտ տեսաւ թէ ինչպէս Հայոց գունդէն շատերը բաժնուած ետ ֆնացած էին հովիտներուն մէջ: Չայնը բարձրացնելով կը քաջալերէր իր շուրջի զինուորները, որոնք Վարդանի խուճարին դիմաց զիրք բռնած էին: Եւ ինչպիսիք զիւղներու առատութիւնը զերբուկներու քարակոյտերուն կը նմանէին:

Մուշկան նիսաւաւորտ փիղերու վրայ

նստած կը դիտէր իր շուրջը, և իր մեծ գալարափողերու ձայնով իր գունդը յառաջ կը քշէր, ու յառաջամարտիկ զինուորներով Հայոց գունդը կը պաշարէր: Իսկ Քաջն Վարդան իր կորովի նիզակակիցներուն հետ ոչ նուազ նախճիրներ գործեց, և նոյն տեղւոյն վրայ արժանի եղաւ առնելու նահատակութեան պսակը:

Պատերազմը երկարելով օրը կը տարածամէր. շատերը մահուան օրհասին մէջ կը տուայտէին, իսկ զիակաները իրարու մօտ ինկած կը նմանէին կտրուած մայրի ծառերու:

Եւ որովհետեւ գարուն էր, ծաղկալից դաշտերը ողողուեցան շատերուն յորդհոս արիւնով: Երբոր մէկը տեսնէր ինկած գիականերու կոյտերը, սիրտը կը բեկանէր և աղիքները կը գալարուէին, մանաւանդ երբ լսէր վիրաւորեալներուն մնչիւնը, կոտորւողներուն մռնչիւնը, վիրաւորներուն սուղալը, վախկոտներուն փախուստը, կիններու ճիչերը, սիրելիներու և բարեկամներու ողբը: Վասնզի կողմերէն ոչ մէկը կարելի էր ըսել թէ յաղթական էր կամ պարտուած. քաջերը քաջերու գէմ ելլելով երկու կողմերն ալ պարտութեան մատնուեցան:

Բայց որովհետեւ ինկած էր Հայոց զօրավարը մեծ պատերազմին մէջ, ոչ ոք կար այնուհետեւ որ անոր փոխարէն զըլխաւորէր ու իր շուրջ հաւաքէր մնացեալ գունդը: Եւ թէ և ապրողները աւելի շատ էին քան մեռնողները սակայն, ցրուեցան փախչելով Հայոց Աշխարհին ապահով տեղերը: Իսկ պարսիկները կը բռնանային շատ մը գաւառներու և բերդերու վրայ զորս չէին կրնար զրաւել:

Հետեւեալները անուններն են քաջ նահատակներուն որոնք նոյն տեղը նահատակուեցան: Մամիկոնեաններու Տունէն Քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք մարդոցմով. Խորխոռունեաց Տունէն, կորովին Խորէն տասն և ինն մարդոցմով. Պալուսեաց Տունէն, Քաջն Արտակ, յիսուն և եօթ մարդոցմով. Գնթունեաց Տունէն, Տաճատ զարմանալին տասն և ինն մարդոցմով. Դիմաքսեանից Տունէն, իմաստունն Հմայեակ քսան և երկու մարդոցմով, արդարն Արսէն, և յառաջագէմն Գարեգին:

Այս երկու հարիւր ութսունը եօթը

նահատակներուն հետ մեծամեծ նախարարներ ալ նոյն տեղը մարտիրոսացան: Ինչպէս նաեւ Արծրունեաց արքունի տունէն և նախարարական տուներէ, ընդամէնը հազար երեսուն և վեց:

Իսկ Պարսից կողմէ այդ օրը ինկան երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորս մարդ, ինը անոնցմէ նախարարներ, որոնց համար շատ ցաւեցաւ Մուշկան Նիսալաւուրտ, մանաւանդ երբ տեսաւ իր գունդին հասած անդամանելի մնասը որ եօթը անգամ աւելի էր քան Հայոց գունդին մնասը, չէին հանդարտեր անոր մըտքին խորհուրդները վասնզի պատերազմին վախճանը իր ենթադրած էլքը չունեցաւ: Անիկա կը վախնար թագաւորին գրել այս բոլոր պատահարները ճշգրտութեամբ, սակայն չէր ալ կրնար պահել զազտնի, այսպիսի մեծ կոխ մը:

Այս խորհուրդներուն մէջ կը տուայտէր, երբ Վասակ ուրացողը որ ինքզինքը փիղերուն մէջ պահելով ողջ մնացած էր ներկայացաւ և մխիթարեց զինք ցոյց տալով իրեն խաբէական հնարքներ, զրաւելու համար Հայոց մնացեալ ամբողջները: Երգումներ կնքել կուտար արքունի հրամանով, խաբեբայ երէցներու և իր իսկ անձին վկայութեամբ, զանոնք իբրեւ պատգամաւորներ զրկելով, հաւատացնելով թէ ապստամբութիւնը պիտի ներուի և այդու իսկ պիտի շնորհուի եկեղեցիներու շինութիւնը, և թէ բոլոր նախկին կարգերը պիտի վերահաստատուին: Թէ և հրամանը թագաւորական վաւերացումով էր տրուած վասնզի անոր ոյժը շատ տկարացաւ, որովհետեւ երկու կողմերէն ալ կոտորուեցան. Հայոց զօրքերը շատ անգամ Վասակի խաբէութիւնները տեսած ըլլալով թագաւորի հրամանին ալ չհաւատացին:

Գ. Ս. Զ.



ՂԵԻՈՆԴԵԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Վերնագրի սահմանումին ներքև ընդհանրապես կ'իմացուին յանուն քրիստոնէութեան նահատակ այն ինը եկեղեցականները (*) որոնք եղան Ե. դարու Վարդանանց շարժումին զլիսաւոր եկեղեցական-կազմակերպիչները: Քիչ մը լայնելով սահմանումին չըջնակը, անկէ ներս կ'իմացուին նաև նոյն շարժումին բոլոր ուխտապահ եկեղեցականները: Այս յօդուածին մէջ առաւելաբար երկրորդ իմաստով իմացուած է վերնագրին տարողութիւնը:

Պատմական կարևոր դէպքեր, յաճախ կարելի է սեղմել պատմադէպքի մը տարեթիւով միայն երբ դէպքը հասունացնող ժամանակամիջոցը, պայմանները կ'երկարաձգուին տասնեակ մը տարիներ և երբեմն դարեր: Նոյն պայմաններու տակ Վարդանանց շարժումը կարելի է եզրաւորել 451 թուականով մը միայն, այլ պէտք է լայնել շարժումին տարածքը սկսելու համար նուազագոյնը գրոց գիւտի թուականէն, երթալու համար մինչև Վահանեան շարժումին յաղթական աւարտը, Նուար-սակի դաշնագրով (484): Ու չըջնա մըն է քսիկա ուր մեր երկրին ղեկավարող տարրն է հայ հոգեւորականութիւնը, որ իրրեւ գրոշակի մեծ ոգեկանութեան մը՝ մեր պատմութիւնը հարստացուց մեծութիւններով, որոնց ամենէն սխրալին եղաւ Վարդանանց շարժումը:

Թէ ինչպէս ընթացք առաւ նման վարչաձևի մը գոյութիւնը Հայ Աշխարհէն ներս: Ատոր համար անհրաժեշտ է համառօտ քաղուածք մը, ուր պիտի գտնենք քրիստոնէական առաջին դարերուն հին հեթանոս աշխարհը ծանրաբեռնուած ու պարտասած հեթանոս պաշտամունքի խորհուրդովը, որ զգալիօրէն կը դառնար անբաւարար, յառաջացած քաղաքակրթութեան մը հասնող Արեւմտեան աշխարհին ժողովուրդ-

ներուն մանաւանդ, որոնք տարապարհակ կերպով կ'ապրէին պահանջը «անձանօթ Աստուծոյ» մը որ յագեցնէր զիրենք նոր ու ըզձալի դարձած հոգեկանութեամբ: Քրիստոնէութիւնը ճիշդ այդ օրերուն կու գար իր հոգեկան հարուստ ու յաւիտեանական խորքով, իր գերազանց ճշմարտութեան բերումովը լեցնել մարդերը, միանգամ ընդ միշտ շօշափելի դարձնելով «անձանօթ Աստուծոյն» ինքնութիւնն ու ճշմարիտ պաշտամունքը:

Ներքամիտ Արեւմուտքը տեղի տուաւ այս հոգեկան նորութեան, մինչ Արեւելքը իր դաժան բռնութեան մէջ մնաց անհաղորդ Քրիստոնէական այն քաղցր հոգեկանութեան, որով գերի ու ստրուկ անհատը պիտի արժեւորուէր բարձրանալով գերագոյն իմաստաւորումի մը, իր հագնելիք հոգեկան գեղեցկութեան ընդմէջէն հասնելու համար մինչև աստուածացում: Աշխարհագրական, քաղաքական, մտաւոր, հոգեկան տեսակաւորումը որ դարեր շարունակ, մշտական պայքարի մը վերածած էր յարաբերութիւնները Արեւելքին ու Արեւմուտքին, Քրիստոնէութեան երևումով պիտի ստանար նոր թափ:

Հայ Աշխարհը, որ մինչև այն ատեն գրօշակիրն էր հեթանոս Արեւելքին, Քրիստոնէութեան իւրացումով միանգամ ընդ միշտ կը փոխէր իր կեցուածքը, ըլլալու համար Արեւմուտքին հետ, այս անգամ վերսկսելու համար իր գոյութեան արիւնոտ պայքարը Արեւմուտքի փոխան՝ ընդդէմ Արեւելքի նիզակ շարժելով: Այս փոփոխութեան առջև հայեցակէտերը երբեմն կը տեսակաւորուին, եթէ մէկ կողմէն ընթացք առնողը գովքն է պատմական այս դարձուածքին, միւս կողմէ սակայն կան մարդերը հակառակ տեսակէտէն: Ինչ ալ ըլլայ որակական և ընկերային արժէքը ու մանաւանդ կանխակալ դիտումը երկրորդ տեսակի մտածողներուն, և սակայն մըտքեր պղտորող իրենց տեսութիւնները անհրաժեշտ է որ զարնուին փորձաքարի, երևան բերելու համար անարժէքութիւնը իրենց մտածելակերպին:

Թէ կրնա՞ր Հայը չքրիստոնէանալ: Թէ կրնա՞ր Վարդանանց պատմաշրջանն ու կանխող ժամանակը չըլլալ Հայ եկեղեցականին: — Ժողովուրդ մը որուն միտքն ու

(*) Յօդակի կաթողիկոս, Ղևոնդ երէց Վահանդեցի, Սահակ Եպիսկոպոս Ռշտունեաց, Մուշէ երէց Աղբակեցի, Արշէն երէց Բաղրեանդեցի, Քաջաջ Սրկ, Ռշտունի, Թաթիկ Եպիսկոպոս, Սամուէլ երէց, Աբրահամ Սարկաւազ:

հոգին կը մնային սրբուած տախտակներ՝ անհաղորդ հեթանոս հոգեկանութեան, ժողովուրդ մը որուն համար աղաղակող պաշտօնը կը մնար գոհացումը իր հոգեկան ծարաւին, ժողովուրդ մը որ իր մտքի ու հոգիի խորին խաւերուն մէջ դաժան Արեւելքինը ըլլալէ աւելի ազնուացած Արեւմուտքինն էր՝ չէր կրնար մնալ անտարբեր քրիստոնեայ նոր ոգեկանութեան խուժումին, որուն առջև իսկապէս ալ ամենէն առաջ բացաւ իր ծարաւուտ հոգիին տարածքը:

Նոյնիսկ նախաքրիստոնէական արեւելականութիւնը հայ հոգիին իբրեւ խարուսիկ խաւ մը, մնաց անհաղորդ մասնաւորապէս արեւելականութեան ընկերային թերի ըմբռնումներուն: Հայ ընկերային գրոյթի մաքրութիւնը, համեմատած մեր շրջակայ ժողովուրդներու հեթանոս խենէշ զիցարանութեան՝ հայ զիցարանութեան զգաստութիւնը ու մեր կրակապաշտութեան, լոյսի վերացեալ ըմբռնումը մեզի հասած մտածելու յետնորդ ձեւեր են, որոնք կ'առաջնորդէին մեր ժողովուրդը ըլլալու քրիստոնէութեան հակամէտ, ու մերժելու Արեւելքի թանձրամիտ ըմբռնումը որուն ամենէն ցցուն արտայայտութիւնն էր ճըճիներու, մողէսներու, շան ու եզի հետաքրքրութիւններով յագեցուած, ոգեկանէն պարպուած ու սին ծիսակատարութիւններու վերածուած կրօնքը մազդեզին, ուր Հայը պիտի գտնէր իր հոգեկան և ընկերային ըմբռնումներուն անարդ բռնաբարումը:

Ու շատ բնականօրէն անգամ մը որ Հայը իր սեփականութիւնը դարձուց քրիստոնէութիւնը, ան զիտցաւ նոր այդ կրօնի մաքուր ներշնչումներուն ընդմէջէն հասնիլ թարգմանիչներու և վարդանանց նման հոգեկան ու մշակութային բարձունքներու, որոնց նմանները երբեք յայտնաբերած ըլլար հայոց պատմութիւնը տակէ առաջ:

Դէպի քրիստոնէութիւն հակող մեր հոգեկան կազմուածքի պարագայէն զատ կային ուրիշ ազգականներ, մեզ քրիստոնէութեան լոյսին մագնիսացնող: Մեր երկրին աշխարհագրական դիրքը պատճառ մըն էր որ, Արեւելքի և Արեւմուտքի յարատեւ պայքարին իբրեւ գետին, պարտասած մնար որպէս քաղաքական ամբողջ, որ առանց այդ պայքարին ալ կը տառապէր ներքին աւատական բաժան զրութեամբ: Մեր քա-

ղաքական իշխանութիւնը այս պայմաններու տակ հեռու էր մեր ժողովուրդի միաձոյլ ամբողջականութեան նշանակը ըլլալէ: Եւ հետեւաբար պիտի ըլլային մեր ֆիզիք գոյութեան աննպաստ պարագաներ:

Դիտուած է որ անհատներ թէ ժողովուրդներ յուսահատութեանց ծայրայեղ պարագաներուն, զիտակից կամ անզիտակից—բնազգական գործօններու յանկարծական պոթկուսներով թօթուեն վտանգին ծանրացող թաթը, վերականգնելու համար իրենց գէթ հոգեկան ամբողջութիւնը: Քաղաքականօրէն զառամած Հայութիւնը պէտք ունէր տարբերային ցնցման: Քրիստոնէութիւնը եղաւ այդ ցնցման ուժանակը: Ու եթէ Քրիստոնէութիւնը յանձին Ներսէսներու, Սահակներու, Մեսրոպներու, չի կրցաւ ի վերջոյ փրկել մեր քաղաքական ինքնուրոյնութեան, վերջին զառամեալ, հեշտացեալ մնացորդը — Արշակունին Արտաշիր — և սակայն Հայաստանի լուսաւոր Քրիստոնէութիւնը, Արեւելքի խաւարին մոկեզին շրջապատումին ընդգէմ, ստեղծեց այնպիսի հակադարձ մը որ Հայը — կարծէք երկնային հրաշալիքով մը — բռնադատուեցաւ գէթ իր հոգեկան-հոգեւոր—ազգային միաձոյլ ամբողջականութեան: Հոգեկան այս հզօր ամբողջականութեան անկաշառ թազաւորները եղան Հայաստանեայց Հայրապետները, անոր ամրակուռ բերդերը եղան մեր աշխարհի մեծ նաստաններն ու տաճարները ու անոր անպարտելի բանակին զօրքն ու զօրավարները եղան Հայ եկեղեցականներ, որոնց հրաշագործ խանդը, եղաւ աղբիւրը ոյժին որ պիտի վերբուէր քայքայուող Հայուն՝ Հոգեկան Միութիւնը:

Աննախընթաց այս բանական գերագոյն գէնքը եղաւ Մշակոյթը: Սահակ—Մեսրոպեան թարգմանչաց մտքի ու գործի զբաղողը ընտրեց զրահներուն ամենէն անխոցելին ու գէնքերուն ամենէն անճողոպրելին, ինչ որ կը կազմէ մեծ այդ հոգիններուն հրաշալի հեռատեսութեան փաստը: Աստուածաշնչական ու Քրիստոնեայ ամբողջ դաստիարակչական գրականութեան մը կազմակերպումը եղաւ Հայու հոգեկան ամբողջականութեան, միաձուլութեան հոգեպարար սնունդը: Այդ մշակոյթին տեսակ մը ամբողջական պատկերը տեսակ մը

եզրափակութիւնն է նոյն թարգմանչական սերունդէն եղնիկը, իր «եղծ Ազանդոց»ով: Որովհետեւ եղնիկը արտադրող աշխարհը եղնիկով կ'ունենայ անհերքելի փաստը իր մշակոյթին բարձրութեան, մշակոյթ մը ուրիշ գուրս վտարուելով խաւարակուռ նախապաշարունմանով լեցուն արեւելքը, կը փայլի Քրիստոնէական ոգեկանութեան, մեծ քաղաքակրթութեան անյաղթահարելի ամրութիւնը: Ու այս գիտակցութեամբ թափ առնող սլացքը Հայ աշխարհին անվարան որ եղնիկին քովիկը ստեղծէր ոսկեզրիչն եղիշէ մը որ բանաստեղծէր, փիլիսոփայէր, պատմագրէր յանուն Հայ Քրիստոնէութեան, Հայ ոգեկանութեան, խղճի մտածելակերպի ազատութեան (բան մը որուն երբեք հանգուրժէր բռնակալ արեւելքը), մէկ խօսքով յանուն մեր ինքնութեան կոռուողներու նահատակութիւնը, գերազանց, հերոսական, երկնային արժանիքները: Ո՛վ սիրտ պիտի ընէր պատուել զրահը Հայ Հոգիի այս հանդերձանքին, ու խորտակել Սահակ Մեսրոպեան դպրոցով պայմանաւորուած այս առանցքին կրանիթ ամրութիւնը, որուն յաւերժական կենսունակութեան անկաշառելի նահատակները ըլլալու վճռակամութիւնը կը սնուցանէին ոչ միայն թարգմանիչներ — Ղեւոնդեաններ — սպասարկուները այդ խորհուրդին — այլեւ անոնցմով գիտակից՝ զանգուածը ամբողջ Հայ Աշխարհին:

Պարսկաստան — հեթանոս արեւելքը — շատ ուշ միայն կրցաւ բուռն գործնականութեամբ անդրադառնալ Հայ աշխարհի այս այլափոխութեան, որով Արեւաց արքունիքի քաղաքականութիւնը միանգամ ընդմիջտ կը կորսնցնէր եփրատէն մինչև կողկաս ընդարձակուող իր մէկ պատուանդանը: Այս երկարաձգումին պատճառը եթէ մէկ կողմէն Սասանեաններու զբաղուած ըլլալն էր մեր քաղաքական ինքնակացութեան ջնջումով, միւս կողմէ պէտք է նրկատի ունենալ որ Սահակ — Մեսրոպեան դպրոցի մարդերը մտքին հետ գուզընթաց նաեւ մարդերն էին գործին, ու գիտցան գործնական ուժգին թափով կանխել պարսիկ չարամտութիւնը, Արարատեան բարձրաւանդակի հոգեւոր, անխորտակելի սպառազինումով:

Սասանեան քաղաքականութիւնը չի

կրցաւ ունենալ զիւանադէտի ճկունութիւնը, այլապէս իր քաղաքական մտածողներուն համար յստակ պիտի ըլլար թէ Քրիստոնէական բարձրագոյն քաղաքակրթութեան մը հասած ժողովուրդին համար բացարձակապէս խոտելի պիտի թուէր անկումը դէպի Մազդեզական բնութենապաշտութիւնը, որ իր տգիտութեամբ հազիւ անդրանցած ըլլար նախնական Ֆէդիշապաշտութիւնը, ուր մարդը պիտի ստորնանար իր բոլոր ընդունակութիւններով անբաններու պաշտամունքին: Քաղաքական անհեռատեսութեան միջոցառումներ կը մնան միայն Սահակ Մեսրոպեան դպրոցներու մէջ տարիներով թրծուած նախարարներու Տիգրան կանչուիլն ու սպառնալիքներու տակ անոնց կեղծուրացութեան պարագաները, որոնք պարսիկ արքունիքի միամտութիւնը կը հասցնեն անդր—հէքեաթային կշիռներու, ինչ որ շատ ալ զարմանալի իրողութիւն մը է բռնապետական կարգերու համար, մանաւանդ երբ նկատի ունենանք որ արքունական այդ ինքնախաբէութիւնը կրնար իր կարգին արդիւնքը ըլլալ նաեւ յայտնի վճռակամութեան մը, ուր Յազկերտ վերջնականապէս ու փութով կը ցանկար տմբողջացած տեսնել ուշացած անհրաժեշտութիւն մը:

Սասանեան արքունիքը տհաս քաղաքականութեամբ թերեւ, չի կրցաւ անդրադառնալ նաեւ որ քաղաքականապէս բաժան բաժան Հայոց Աշխարհին տէրն ու պաշտպանը այդ օրերուն՝ ոչ թէ Հայ նախարարն էր այլ նոյնինքն այն եկեղեցին որուն դատակնիքը կնքել կ'ուզէր:

Ու պատահեցաւ անխուսափելին. — օրհասականին զիմաց Հայաստանեայց Քրիստոնէութիւնը զինուորեցաւ եկեղեցւոյ ու Հայրենեաց բանակին: Կռուի առաքելդ իջաւ նոյնինքն Հայ եկեղեցականը — Ղեւոնդն ու Ղեւոնդեաններ — իրրեւ գերագոյն հրամանատարներ հոգեւոր այս բանակին, խօսեցան, ներշնչեցին, հրահրեցին, ու իրենց ամենահաս ներկայութիւնը երկրի բոլոր անկիւններուն, մէկ մարդու պէս ու վճռակամ ընդվզումով վեր բարձրացուց Հայաշխարհը իր բոլոր դասակարգերով, մահ սպառնալով ոչ միայն մեր այլազգի թշնամիներուն, այլեւ ի հարկին որդին՝ ու-

բացեալ հօրը, կինը՝ ուրացեալ ամուսնոյն, ու հայրը զաւկին։

Ձինուորեալ եկեղեցիին ու մոզական բանակին առաջին բաղխումը Անդր սահմանամերձ գիւղին մէջ եղաւ. բացումը՝ յետագայ բաղխումներուն, Հայաստանի շատ մը գլխաւոր քաղաքներուն մէջ ուր Մազդեզականները դաւաճան Վասակի ձեռնտուութեամբ ամբարշտութիւնը ունեցան Ատրուշաններու կանգնումին։ Իւրաքանչիւր քաղաք իր եպիսկոպոսին և կամ երէցին առաջնորդութեամբ ու ժողովրդական միահամուռ ճիգով, ընդլզեցաւ, խորտակեց ատրուշանները ու դուրս հալածեց Մազդեզական յետին մնացորդն իսկ Հայ Աշխարհէն։

Եկեղեցւոյ բանակը ստուարացաւ հետըզհետէ իրենց կեղծուրացութիւնը հրապարակող նախարարներով, ու պահ մը կարծես հաստատուեցաւ օտարի բռնութեան դէմ Համահայկական ճակատ, մանաւանդ երբ նոյնինքն՝ դաւաճան Վասակ նուաճուած ուխտապահ այս բանակէն քաշուեցաւ ատեանը եկեղեցականներու — նախարարներու խորհուրդին ուր ստիպուեցաւ տալ ուխտապահութեան ու Հայրենեաց հաւատարմութեան իր խոստումը, ինչպէս և հնազանդութիւն եկեղեցականաց — նախարարաց խորհուրդին որ կը փոխարինէր Հայաստանէն վտարուած պարսիկ կառավարչական կազմը։

Այնուհետեւ՝ մինչև Աւարայրի մարտը մեր դժբախտ աշխարհը պիտի ըլլար թատրներքին անհամաձայնութեանց, եղբայրասպան կռիւներու ու դաւաճանութեանց, կազմակերպուած Վասակի կողմէ, որ գերազոյն զոհողութեան ու նուիրումի այդ պահուն՝ օգտուելով իրեն նպաստաւոր պայմաններէ, կ'անջատուէր ու իրեն հետ կ'անջատէր կարգ մը նախարարութիւններ ալ Համահայկական ուխտապահութենէն, ստուարացնելու համար թշնամի բանակը որ քիչ ետք պիտի խոնուէր Տղմուտի ափերուն։

Բոլոր այս տկարացումներուն դէմ ծառացաւ երկրին ու բանակին իսկական տէրը՝ Հայ Հոգեւորականութիւնը, որ զիտցաւ չէզոքացնել ամէն տկարացումներքին ճակատի վրայ, ու նոյն տեսլականով ոգեղինացած սքանչելի Միութեան մը մէջ Աւա-

րայրինահատակութեան առաջնորդել զանդուածը բոլոր դասակարգի ուխտապահներուն՝ աղատ թէ շինական, կին թէ մանուկ, Ազգն համօրէն առանց սակարկութեան կ'ընծայարեբէր ինքզինք թարգմանիչներու շարժումին ու զաղափարականին — նոյնինքն Հայ ժողովուրդին Հոգեկան — Հոգեւոր — Ֆիզիքական Միութիւնը — ինքնամոռացման գերագոյն մէկ խոյանքի մը մէջ, ինչ որ շատ հազուադէպօրէն կրնայ պատահիլ ժողովուրդներու պատմութեան մէջ։ Դեւոնդեանք — Վարդանանք կերտեցին մեր ժողովուրդին — ու ժողովուրդներու — պատմութեան այդ սխալին։

Ընդհանրապէս ամբոխներու հոգեկան նկարագրին մաս կը կազմէ յեղեղեղութիւնը, մանաւանդ մեծ գործերու նախօրեակին։ Այսպիսի պարագաներուն յաջողութիւնները անվարան մեծ հոգիներու գործեր կ'ըլլան։ Եթէ Դեւոնդեանք կրցան յեղեղեղ կ'ամբոխներէն կերտել «Վարդանանց» սխալին, ատիկա եղաւ հմայքովը իրենց անձին մեծութեան։ Անոնք իբրեւ Մարդերը թարգմանիչներու խումբին և կամ իբրեւ անոնց անմիջական յաջորդներ իրենց հետ ունէին ժողովուրդին մեծ պաշտամունքը։ Իրենց հետ էր այդ պաշտամունքը շնորհիւ այն զաղափարականին ուրուն առաքեալներն էին իրենք, ու այդ զաղափարականը թանկարժէք էր մեր ժողովուրդին համար ու անուրանալի։ Եւ ինչպիսի կրօնը՝ կը նշանակէր պոկել իրմէ իր ինքնութիւնը, քանի Հայը իր հոգեկան կազմուածքով, բարքով ու կենցաղով կը հակէր ղէպի Քրիստոնէականը։ Կը բաւէր միայն որ սրբութիւնով օժուէ Հայնահապետական տունը անդրադառնար իր սրբազան յարկէն ներս ընթացք առնելիք պարսկական ապականած ըմբռնումներուն, շատ բնականօրէն ան պիտի ընդլզէր ինքնամոռացումովը հերոսին՝ որ բազմաթիւ թշնամիներով իր ճգնաժամային վայրկեաններուն պիտի գործէր արիւնոտ նախճիրներ, աւելի քան երբեք։

Դեւոնդեանց — ուխտապահ եկեղեցականներու հմայքը կը պաշտպանուէր ոչ միայն իրենց զաղափարականով, այլ մանաւանդ իրենց իսկ անվերապահ նուիրումովը այդ զաղափարականին։ Մեզի հասնող պատմութիւնը կենդանի վկայութիւն

մըն է, ուր անոնցմէ իւրաքանչիւրը մէկ մէկ տապանակներ են Աստուածային մաքրութեան ու անհուն նուիրումի, մինչև իսկ տալու չափ իրենց անձերուն անհաշիւ պատարագը, պատերազմի աւարտին Ապար Աշխարհի անապատներուն մէջ:

Կան չարախօսներ որոնք սովորութիւնը ունին ամէն արժէք վերածել անուայ կշիռներու: Հոս ևս Ղեւոնդեաններու ամբողջ ճիշդ վերածելով իբրև պարզ նախանձալուզութիւնը եկեղեցականներու, իրենց դասակարգային շահերու վտանգումին առջև: Չենք գիտեր թէ ինչ սրտով անոնք անտես կ'ընեն պարագան ուր այս մեծհոգի եկեղեցականները յանձն առին մօայլ նահատակութիւնը, որուն ահարկու պատկերին առջև չի նախընտրեցին երբեք վայելքը աշխարհի այն բարիքներուն, որ կը խոստանար իրենց առատօրէն Մազդեզի կրօնը: Եթէ անոնց ճիշդ պարզապէս հակադարձն էր իրենց դասակարգային շահերու վտանգումին, ինչո՞ւ ուրեմն ուրացումի մը զինովը բացուող հսկայական շահատակութեան սա բացայայտ մերժումը: Արժանիքի ի՞նչ անհամեմատ կշիռ ասոնց և հեթանոս կրօնաւորներու այն խումբին միջև որոնք մեր երկրէն ներս քրիստոնէական ծաւալումին ողի ի բռին հակառակելէ ետք, ճիշդ իրենց շահերու վտանգումին պատճառաւ, տեղի տուին, երբ Լուսաւորիչ գիտցաւ անոնց համար Քրիստոնէական եկեղեցիէն ներս կազմակերպել առանձնաշնորհումներու հին պայմանները: Անշուշտ կարելի է խորացնել պարագաները, եթէ ուզենք արժանիքներու մէկ հատուածը վերագրել Քրիստոնէական կրօնի կենսառողջ այն հոգեկանութեան, որմէ զուրկ էր հեթանոսականը, հետեւաբար, մարդիկ, հոն զիւրաւ միտէին հեթանոս պաշտամունքի ուրացումին, և սակայն կայ նաև արժանիքի բաժինը մարդերուն որոնք գիտեն իրենց հոգին բանալ լոյսին, զոհել լոյսին ու ասիկա անհատական արժանիք է ներսէն ընդառաջող:

Ու նոյնը չէ պարագան Ղեւոնդեանց դրպրոցակիցներուն, Թարգմանիչներու խումբին բոլոր անհատներուն, Ղեւոնդեաններէն առաջ կամ յետոյ, որոնց յանուն գաղափարականի նահատակութեանց սրտառուչ յաջորդութիւնը կը գտնենք Փարպեցւոյ՝

Վահան Մամիկոնեանի ուղղուած թուղթին մէջ: Հայ ժողովուրդը վաղուց կը ճանչնար այս համոզումի, նուիրումի մարդերը, անոնց մեծաքանչ գործերուն շինողը քառօրդ դարէ ասդին կը լեցնէր շարունակ իրենց ականջները:

Ու զոհողութիւնը, նուիրումը կը պըտզարեիր աննկուն կամքերով: Հայ ժողովուրդը գիտցաւ ըստ արժանւոյն ծագեցնել Ղեւոնդեան Հայ եկեղեցականին նուիրումը, աննախընթաց պատրաստակամութեամբ արձագանգելով Շաւարշանի կոչին, տոկալով խուժաստանի ամայքներու անօթի, ծարաւ, մերկ ու բոկոտն ահաւոր աքսորանքին, և կամ տասնեակ տարիներու հալածական ու սպառիչ կեանքը Հայրենի անմատոյց ծերպերուն, այսպէս գործնականապէս իսկ ցուցնելով թէ իզուր չէին նետուած արգասաբեր սերմերը Թարգմանիչներու քառօրդ դարեան հսկայական աշխատանքին:

Բոլոր անոնք որոնք այլընդայլոյ մտածումներով կը ճգնին տկարացնել Ղեւոնդեաններու գործին մեծութիւնը, քաղաքական իմաստութեան ճառերով, — հասկընալի որ ըլլայ ատիկա Հայաստանեայց եկեղեցւոյ մէկ մեծագործութիւնը ստուերի մէջ ձգելու չարամտութեամբ —, իրենց համար միանգամ ընդմիջտ յստակ ըլլալու է թէ ե. դարու Հայաշխարհը չէր կրնար յառաջ բերել տարբեր քան այն ինչ որ իրագործեց Հայց. Լուսաւորչածին եկեղեցւոյ առաջնորդութեամբ, պէտք է նկատի ունենան թէ իրագործուածը երբեք պաշտպանութիւնը չէր դասակարգի մը շահերուն այլ համայն Հայաստանեայց ժողովուրդի շահերուն: Ու եթէ այսպիսի համազգային ծառացումի մը նախաձեռնութիւնը սեպհականութիւնն է Հայաստանեայց եկեղեցիին, անոր համար որ Լուսաւորչի — Թարգմանիչներու սերունդ Հայ եկեղեցականութիւնը դարձած էր Հայ ժողովուրդի բիւրեղացած իմաստութիւնը, խղճմտանքի ձայնը, մանաւանդ անտիրութեան հատուածական բաժանումներու դրժբախտ այդ օրերուն: Հայ եկեղեցիին միակ լաստն էր, ուր Հայաշխարհի բոլոր տարակարծութիւնները կրնային լուծուիլ գաղափարականի մը միաւորութեան մէջ, որ վեր բռնէր այս ժողովուրդը դարերու մաշումին

գիմաց, Հայաստանեայց եկեղեցին անկուսակցական, համայնատես, իրատես այն միակ խարխոխն էր որ կրնար զատորոշել այս ժողովուրդին չարը բարիէն: Ու շատ բնականօրէն այս յատկութիւններով ու այսքան մեծ պատասխանատուութիւններու գիտակցութեամբ բեռնաւոր, մեծագոյն գաղափարականներու սլացիկ հոգիներու վաղքը ըլլար վճռական ու անզիջող, կապարածոյ միաւորութեամբ իր մէջ ընդելուզելու այն ինչ որ իրն է ու վանելու ինչ որ չէ իր աշխարհէն — Հայ ժողովուրդի Գերագոյն Բարին — որուն անվարան խորթ կրնային մնալ բոլոր Վասակները, մարդերը հպարտ, բիրտ, փառասէր անձնականութեան, որուն համար ըլլան պատրաստ զոհելու ամէն արժէք ու մեծութիւն:

Ու Ղեւոնդեաններու գերագոյն այս վճռակամութեան առջին ոչ միայն խորտակուեցան պատուարները ներքին դաւաճանութեանց, այլ նոյն ինքն մեր մեծ թշնամին, մինչև որ բարեղէպ օր մը ան կնքեց իր պարտութիւնը դաշնագրով մը (*), ուր ազատ կը հռչակուէր խիղճն ու պաշտամունքը, ուր կը սեւնային դաւաճանութիւնը զրքացած հոգիներուն, որոնք ինչ մութ հաշիւներով չէին վարաներ անաւոր օր մը խրել իրենց դաշոյնները իրենց համարին եղբայրներու կողքերուն:

Յաղթանակած էր ի վերջոյ Թարգմանիչներու — Ղեւոնդեաններու հոգին իրենց արիւնով իսկ ոռոգուած Հայրենի հողին բարձրացնելով սրբութեան խոյալի, պայքարի նահատակութեան յաղթական զօրը, որ չի ճանչնար ու չի ճանչցաւ երբեք, պարտութիւն: Ղեւոնդեաններէն յետոյ դարեր Հայաշխարհը ոտքին կոխանը եղաւ թշնամի վոհմակներուն, ու Հայը քալեց Ղեւոնդեանց լուսաւոր ուղիէն, բարձր բռնած իր նահատակներու արիւնէն իսկ յառնող՝ իր ազգային ֆիզիք ու մանաւանդ հոգեւոր գոյութեան յաղթական զօրը:

* * *

Որքան տեղին է և իմաստուն մեր սիրեցեալ Վեհափառ Կաթողիկոսին Հայրապետական հրամանը Ս. Վարդանանց և Ղեւոնդեանց նահատակութեան 1500ամեայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐԵՆԱՅԻ, ԵՂԻՇԷ

ԵՒ

Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ

Ա. ՄԱՍ

ԽՈՐԵՆԱՅԻ ԵՒ Հ. ԱԿԻՆԵԱՆ

Հ. Ակինեան չըսեր, թէ ինչէն գիտէ որ Ղեւոնդ երիտասարդական տարիքին գրած է առաջին գիրքը: Արդեօք Զօպանեանին պատասխանելու համար իր աշխոյժ միտքը անմիջապէս ձևակերպած է այս դիւրին բացատրութիւնը: Նման քեֆնիֆ Հ. Ակինեան յաճախ կը գործածէ իր գրութեանց մէջ, որուն քանիցս դեռ պիտի անդրադառնանք:

Այո՛, հնարամիտ Հայրը վստահ է որ Ղեւոնդ երիտասարդ տարիքին գրի առած է իր Պատմութիւնը: «Ուր ակնբախ է ոճի տարբերութիւնը, զգալի մասնաւորապէս Ղեւոնդի պարզութեան եւ Խորենացոյ խրթնաբանութեան մէջ, հոն պէտք է նկատի առնել, որ Ղեւոնդ յօրինած է իւր Պատմութիւնը երիտասարդական հասակին, անմիջապէս Ազաթանգեղոսի և Սերէոսի ազգեցութեան տակ» (204):

Ղեւոնդ երիտասարդական ո՞ր տարի-

Յորելինական տօնակատարութեան, երբ այսօր իր զաւակները Սփիւռքի ամայքներուն մէջ կ'ապրին աւերի, յուսահատութեան, պառակտումի, եղբայրատեցութեան եւ անխոստովանելի դաւաճանութեանց մութ օրեր: Որքան հրահանգիչ է Սրբազնատառ իր Կոնդակը ուր Ղեւոնդեաններու ոգին կը թելադրուի իբրև անպարտելի զրահ մեր օրերու փշուտին ու մեր պանդուխտի դառնութեանց գիմաց:

(*) Նուարթակի դաշնագիրը 484 ին:

քին գրած ըլլալու էր առաջին զիրքը, որ պէսզի յետագային հոյակապը և մեծ վայելուչը այնքան տարբեր ըլլար. ասկէ, հոյակապի և մեծ վայելուչի վրայ աւելցունելու է, ըստ վերի մէջբերման, նաև խըրթնաբանութիւն:

Ընդհանրապէս, երկարակեաց հեղինակի մը իրարմէ տարիներով զատուած գրքերու մէջ թէ շունչի և թէ ոճի հիմնական գծերը միեւնոյն կը գտնես: Առնենք կարկառուն քանի մը օրինակներ: Վիկտոր Հիւկոն քսանինն տարեկանին գրեց Նօր Ծամ սը Բարին, վաթսուն տարեկանին՝ Թեուաւները, և եօթանասուն եօթ տարեկանին՝ Ինցսուն Երեքը, սակայն մեծ դժուարութեան չես հանդիպիր ոճի և շունչի հիմնական միեւնոյն յատկանիշները գտնելու սոյն գրքերուն մէջ: Պարապ տեղ չէ որ ըստուած է թէ ոճը մարդն իսկ է:

Միեւնոյնը նաև Անգղիացի վիպասան Չարլզ Տիքընսի մօտ: Քսանհինգ տարեկանին գրեց իր հոգեկաւոր Փիկուիկ Թուդրերը, յիսուն տարեկանին՝ Մեծ Ակնկալութիւնները: Կամ Լէոն Թօլսթօն: Կօզակները գրեց զեռ երեսունը չհասած. քառասունին՝ Պատերազմ եւ Խաղաղութիւն, քառասուն իննին՝ Անցա Քարեմիկա, և եօթանասուն երկուքին՝ Յարութիւն:

Հետաքրքրուող ունէ մէկը կրնայ աւելի երկարել այս ցանկը:

5

Վստահօրէն կրնանք ըսել որ Հ. Ակինեան Չօպանեանի անմիջական պատասխան մը տալու մտահոգութեամբ գրեց Ղանդին երիտասարդ տարիքին գրած ըլլալու պարագան: Այլապէս ի՞նչպէս հաշտեցնել քիչ վերջ իր գրքին էջ 34ին գրածը.

«Այս պարագային ծնունդը (Ղանդի) կրնանք զետեղել 730-735ին, որով 790ին, երբ կը պատմագրէր, 50-60ամեայ հասուն տարիքի մը մէջ կ'ըլլար, և կ'ունենար զեռ ժամանակ վայելել լոյսը, թերևս մինչև իններորդ դարու առաջին քառորդը»:

Ո՞ւր է երիտասարդութեան գրի առած Արարական շրջանի Պատմութիւնը, եթէ 50-60 ամեայ հասուն տարիքին ձեռք դարկած էր սոյն պատմութեան: Թեոյ, պարզ

«թերևս» բառով գրեթէ Ղանդը հարիւրամեայ մը կը դարձնէ:

Ոչ մէկ փաստ նման ենթադրութեան, քանզի Հ. Ակինեան կը խոստովանի թէ բան մը չենք զիտեր Ղանդի կեանքի մասին: Բայց այդ գրքին 4րդ էջն էր. «Ղանդի հայրենիքի, ծննդավայրի, ծնողաց, ինչպէս և առհասարակ կեանքի պարագաներու մասին կը գտնուինք կատարեալ անտուգութեան մէջ»:

Հ. Ակինեան ինքն իսկ բացատրութիւնը կուտայ Ղանդի կեանքի մասին բան մը չգիտնալուն: Լսենք զինք.

«Որովհետեւ ինքը (Ղանդ) անչափ համեստ է և անփառասէր, կը զգուշանայ խօսիլ իւր անձին առաւելութիւններուն և կենսագրական գծերու վրայ» (104):

Հեղինակի մը համեստ և անփառասէր ըլլալը կրնաս ցոյց տալ միմիայն կամ իր գրութիւններէն մէջբերուած ցուցմունքներով կամ ուրիշ մատենագիրներու Ղանդի մասին ըրած ակնարկութիւններէն, ինչպէս, զոր օրինակ, Թովմա Արծրունի, Մխիթար Անեցի, Սամուէլ Անեցի, Ասողիկ, Կիրակոս, Մխիթար Այրիվանեցի: Ոչ մին և ոչ միւսը: Հ. Ակինեան կ'ուզէ Ղանդը համեստ և անփառասէր ցոյց տալ, և ահա այդպէս ալ կ'ըլլայ:

Հակառակ պատմագրի կեանքի մասին բան չգիտնալուն, Հ. Ակինեան սակայն յախուռն է այդ գաղտնապահ երէցի կեանքի մօտ չէջերուն հոս հոն լոյս ձգելու:

«Ղանդ որ այնպէս մանրամասնօրէն կը նկարագրէ շարժմանս (774ի ապստամբութիւնը) սկիզբն և ձախող կատարածը, ինչպէս ամէն տեղ, նաև այս անգամ ալ կը լռէ թէ ո՞ւր էր ինքը և ի՞նչ քաղաքական հայեացքի կը հետեւէր: Բայց քաջատես աչք մը ունենալ հարկ չէ երևան հանելու համար իր ամրածածուկ անձը մեծանիստ Դուռոյ պարիսպներէն ներս» (12):

Մենք քաջատես աչքով չկրցանք գտնել տող մը որ նոյնիսկ բռնադատութիւն վերլուծմամբ մեզի ըսէր թէ «ամրածածուկ» Ղանդը Դուռն կը գտնուէր:

Արդեօք Ղանդ Պոլիս ե՞րբ գնաց, քանզի Հ. Ակինեան իր գրքի էջ 31ին կ'ենթադրէ թէ Ղանդ Պոլիս էր, թերևս մէկ անգամը այն պատգամաւորութեան որ

գաղթականներու կողմէ ուղարկուեցաւ կայսեր։

Յամենայն դէպս 50-60ամեայ երիտասարդ Ղևոնդը, որ այնքան համեստ և անփառասէր է, երբ 90 կամ 100 տարեկանին Մովսէս Խորենացի կ'ըլլայ, արդէն բոլորովին փոխուած է և իր մասին ճառել կը սիրէ, կը պատմէ իր Աղեքսանդրիա ճամբորդութիւնը, յետոյ Աթէնք, Բիւզանդիոն, կը գովէ իր գերազաւ գիտութիւնը, և այլն։

6

Թովմա Արծրունին ծանօթ էր Ղևոնդի գրքին։ Հ. Ակինեան իր գրքի մէկէ աւելի տեղերու մէջ հակոտնեայ պատասխան կու տայ այս հարցման։

Էջ 4. «Կ'երևայ թէ նաև Արծրունի պատմագրին անծանօթ մնացած է Ղևոնդ»։

Էջ 51. «Բայց դժուար է հաստատել թէ Թովմայի ծանօթ եղած ըլլայ Ղևոնդի մատնանը»։

Էջ 76. «Թովմա ունի իր առաջ Ղևոնդի ժամանակագրութիւնը, բայց չատ տեղ կը չեղի անկէ»։

Էջ 124. Թովմա Արծրունի թէև յանուանէ չի յիշեր զՂևոնդ և պատմական քաղուածներ չի տար անկէ, բայց կարգացած կ'երևայ մատնան և ազգուած անոր բառամթերքէն»։

Միթէ չափազանց յանդգնութիւն պիտի համարուի մեր կողմէ եթէ պնդենք որ ներհուն բանասէրի վարկ վայելող գիտնականներ այս տեսակ անհեթեթ և իրարու զէնք քաշող տողեր չգրեն։ Ես և զու կը մեռնինք, գիրքը կը մնայ, ի՞նչ հարկ ապագայ քննադատներու արհամարհական քմծիծաղը հրահրելու։

Ի՞նչ կրնայ խորհիւ ընթերցողը երբ էջ 264ին կը կարդայ. «Այս գէպքէն հարկ է ենթադրել թէ Համազասպ ամուսնացած էր Աշոտի դստեր Հռիփսիմէի հետ 785էն յառաջ»։ Իսկ հազիւ 26 տող յետոյ այս. «Հռիփսիմէ եղած է հարս Արծրունիներուն. իրեն ամուսին Համազասպայ, ուստի մօտաւորապէս 800ին»։

Հեւ ի հեւ և առանց անպատասխանատու փութկոտութեամբ գրելու ալչեցուցիչ օրինակ մ'ալ կուտայ Հ. Ակինեան, որը

որքան ալ անյիշատի և հանդուրժող ողուով ընդունիս դարձեալ արդարացում չունի։

Իր գրքին վերջը գետեղուած «Ուղղելիք և Յաւելեալք» վերնագրին տակ կը հանդիպինք հետեւեալին.

Էջ 31 (տող) 21-27.

Տես այս մասին էջ 89, ուր փոխուած է մեր տեսութիւնը։

Կարդանք էջ 31ի ակնարկուած տողերը.

«Այս առթիւ ծանօթացած ըլլալու է Ղևոնդ այն կրօնական-դաւանաբանական թղթակցութիւններու, զորոնք փոխանակած են Օմար ամիրապետ և Լևոն Իսաւրացի 720ին։ Հաւանօրէն Ղևոնդ անձամբ հայացուց զանոնք, համարելով հետաքրքրական իր հայրենակիցներուն համար, իրր մահմետական կրօնի հերքման առաջին փորձ»։

Այժմ դառնանք էջ 89ին.

«Թէև վերնագոյն գրած էի 'հաւանօրէն Ղևոնդ անձամբ հայացուց' այս թըղթերը ի Կ. Պոլիս, բայց այժմ հիմնուած նոր քննութիւններու վրայ, կը հրաժարիմ այս ենթադրութիւնէս։ Թղթերս հասած են մեզի ընդարձակուած հայերէն խմբագրութեամբ և Ղևոնդի Պատմութեան մէջ ներմուծուած են՝ հեղինակէն անկախ, նա հաւանօրէն ոչ մէկ աղբիւս չունի թղթերու հետ»։

Երկու «հաւանօրէն»ներ, մէկը միւսին հակառակ։ Բայց քիչ վերջ «հաւանօրէն» ալ կը ձգէ և էջ 107, ծանօթութեան մէջ կ'ըսէ. «Լևոն Իսաւրացույ թուղթն առ Օմար. . . չի կազմեր Ղևոնդի Պատմութեան մաս»։

Ի՞նչ պատահեցաւ էջ 31էն դէպի էջ 89 կարճատե ճամբորդութեան ընթացքին, որ 89ին կանգ առաւ, յետագարձ ակնարկ մը տալով յայտարարեց թէ էջ 31ին ըսածները բանի չէին գար։ Յիսուն փոքրիկ էջերու ընթացքին, ուր այնքան տարբեր բաներու մասին կը խօսի, ի՞նչ նոր քննութիւններ են որոնք արմատապէս կը փոխեն ըսածը և որոնք մասին որեւէ մանրամասնութիւն չի տար։ Նոր աղբիւր մը արդեօք. եթէ ոչ նոր մեկնաբանութիւն միևնույն դէպքի։ Որն ալ եղած ըլլար, ի՞նչ հարկ կար էջ 31ի մերժուած տողերը պահելու։ Ան նախապէս որպէս յօդուածաշարք գրած ըլլալու էր «Հանդէս Ամսօր-

եայրի մէջ, և կրնանք ենթադրել որ յաջորդ ամսուայ մասը գրած տետն նոր լոյս մը տեսաւ: Ուրեմն պատշաճ չէ՞ր որ երբ գրքի ձեռք պիտի հրատարակուէր որպէս մնայուն տուրք բանասիրութեան, դուրս ձգուէին անընդունելի տողերը, և գրքի ընթերցողին խնայուէր անհաճոյ տպաւորութիւնը:

7

Հ. Ակինեանի ինքնափտահութիւնը ոչ միայն յախուսն է այլ նաեւ անգիջող: Երբեմն իր ենթադրութիւններուն կոռուան ծառայելիք փաստարկութիւն կամ վերլուծում գրի առնելու ձանձրոյթը յանձն չառնելու: Փոխանակ իրողութիւնը կամ դէպքը քննութեան ենթարկելէ վերջ իր կարծիքը յայտնելու, իր կարծիքին վրայ է որ կը ջանայ ձեւել իրողութիւնը:

Հետաքրքրական է իր Ղեռնդի Պատմութիւնը երկու մասով և իւրաքանչիւր մասը տարբեր ժամանակներ գրած ըլլալու տեսութիւնը: Համոզկեր և ոչ մէկ փաստ կը ներկայացնէ, բացի իր ենթադրութիւնները:

Ահաւասիկ Ղեռնդը կը տեսնենք 774 թուի ապստամբութենէն առաջ, քառասուն հինգ տարեկանին կը գրէ իր գրքին առաջին մասը, 134 տարուայ շրջան (640-774), ուր Արաբ իշխանաւորներու հարստահարութիւնները նկարագրելէ վերջ կը գրէ հետեւեալ բառերը. «զոր պատմել ոչ կարեմք զաղէտիցն պատմութիւն»: Այս բաներէն Հ. Ակինեան կ'եզրակացնէ թէ հեղինակը հոգ կանգ առաւ: Իր գործը կատարածի գոհունակութեամբ Ղեռնդ որպէս պատշաճ վերջաբան, միշտ ըստ Հ. Ակինեանի, գրի կ'առնէ այն նշանաւոր Ողբը, որ այժմ կը գտնուի Խորենացիի Պատմութեան վերջը:

Կ'անցնի տասնվեց տարի, որու ընթացքին Ղեռնդի զիրքը իր Ողբ վերջաբանով շատերէ կարդացուած էր և թերեւս բազմաթիւ ընդորինակութիւններէ անցած, այժմ քիչ մ'աւելի տարիքը առած և քիչ մ'աւելի վարժ ու խելացի, զրիչը ձեռք կ'առնէ և կը գրէ այս միևնոյն տասնվեց տարիներու պատմութիւնը: Երբ կը լմնցնէ,

հեղինակին կը մնայ, «վերջիչել 774ին հիւսած Ողբը և կցել անոր նոր կայլական արտասուքի, պատշաճեցնելու համար զայն Պատմութեան նոր մասին իբրեւ վերջաբան» (157):

«Նոր կայլական արտասուքի» արդեօք կը նշանակէ՞ թէ Ղեռնդ Ողբի մէջ նոր բաներ աւելցուց, փոխելով 774ի շարահիւսութիւնը: Ողբալի՜ Ողբ, որ շատ տարիներ վերջ չարագործ ձեռք մը պիտի հանէր իր երկրորդ կայանէն, և անոր մարմնոյն վրայ կատարէր անագորոյն փոփոխութիւններ և տանէր ազուցանէր զայն Խորենացիի Պատմութեան վախճանին, միշտ ըստ Հ. Ակինեանի:

Այդ մասին յետոյ:

Հ. Ակինեան կը մոռնայ ըսելու թէ Ղեռնդը իր Պատմութեան առաջին մասը գրեց Շապուհ Բագրատունի իշխանի խընդիրքով եթէ ոչ երկրորդը: Բժախնդիր չենք այս կէտին շուրջ, բայց նկատի ունենալով Հ. Ակինեանի մանրամասն ուշադրութիւնը երկրորդական և երրորդական մանրամասնութեանց, զարմացանք որ այս պարագան վրիպեր է իր խուզարկու գրչէն:

Ինչո՞ւ սակայն Ղեռնդի Պատմութիւնը բաժնելու այս քրտնաջան ճիգը, որը որքան ուսումնասիրես այնքան աւելի բռնագրօսիկ և կամայական փորձ մը դուրս կուգայ:

Ենթադրութիւն մը մինակ կրնամ ընել: Գր. Խալաթեանցի յայտնած մէկ կարծիքը թէ Ողբի վերջին մասին մէջ Հայաստանի զԺողակ կացութեան նկարագրութիւնը Ղեռնդի Արաբական խժոժութեանց նկարագրութեան հանգուանակ է, որով Խորենացին Ղեռնդէն վերջ եղած կրնայ ըլլալ, Հ. Ակինեան վեր առած է: Հոն տեսած է բանասիրական նոր գիւտ մ'ընելու առիթը: Անգամ մըն ալ կը կարգայ Ղեռնդը, կը տեսնէ թէ անոր Պատմութիւնը յանկարծական վերջաւորութիւն մը ունի, կիսաւարտ գործի մը պէս: Ահ, աչալուրջ Հայրը լոյս մը կը տեսնէ:

«Բայց ես չեմ կրնար հաշտուիլ այն մտքի հետ, թէ մեր խորհող և զգածող, խրատօրանող և ողբացող պատմիչը այնպէս յանակնկալս բաժնուէր իր ունկնդիրներէն, առանց վերջին հրաժեշտի խօսք մ'ուղղելու անոնց: Ինձ կը թուի թէ Ղեռնդ գրած ըլլալու էր հուսկ բան մը, որ թէև չտես-

նուիր այսօր իր Պատմութեան օրինակներուն մէջ, բայց այն կար երբեմն սկզբնազրին մէջ, ինչ կը թուի թէ այդ վերջաբանականը հասած ալ է մեզի, բայց փրցուած սկզբնազրէն, ենթարկուած փոփոխութեան և զետեղուած ուրիշ մեծ գործի մը վերջը, որուն հեղինակի համաբաւը թոյլ չէ տուած մինչև օրս անդրադառնալ գրուածքին իսկական պատճառին: Ինծի կ'երևայ թէ այն Ողբը, որ կցուած է Մովսէս Խորենացւոյ Հայոց Պատմութեան, իր նախնական ձևի մէջ վերջաբանականն էր Ղևոնդի Պատմութեան» (54-55):

Պրծաւ գնաց: Որովհետեւ Ղևոնդ առանց «Մնաք բարով» ի մը չէր կրնար բաժնուիլ իր ընթերցողէն, «ինչ կը թուի» ներու խրախուսիչ պատուանդանին վրայ կը բարձրացնէ յուզիչ հրաժեշտի ողջոյնը:

Հայր Ակինեան անշուշտ գիտէ թէ Խորենացիի Պատմութիւնն ալ յանկարծական և կիսատ վերջաւորութիւն մ'ունի: Խորենացին ալ նոյնքան զգայուն գրող կըրնա՞ր «այսպէս յանկակալս բաժնուէր իր ունկնդիրներէն, առանց վերջին հրաժեշտի խօսք մ'ուզելու անոնց»: Մանաւանդ որ Խորենացիի Պատմութիւնը անբաղդատելիօրէն ալ աւելի կարեւոր գործ մըն էր, հայ ժողովուրդի ամբողջական պատմութիւնը, քան Ղևոնդի 150 տարուայ ժամանակաշրջանը պատմադրող գիրքը: Թերևս Հ. Ակինեան պատասխանէ թէ Խորենացին արդէն ծերացած էր և կը թուի թէ մեռած է Մեսրոպի մահը արձանագրելէն վերջ:

Բայց կանգ առնենք հարցնելու թէ եթէ Ղևոնդ և Խորենացի միեւնոյն անձերն են, ինչպէս Հ. Ակինեան կը պնդէ, ի՞նչ հարկ կայ այս իրարանցումի ջանալ ապացուցանելու թէ Ողբը ուր գրուած կրնար ըլլալ:

Ըստ Հ. Ակինեանի տրամաբանութեան միթէ չե՞նք կրնար ըսել որ Ղևոնդ իր Պատմութիւնը լմնցնելէն վերջ երբ 15-20 տարի վերջ Սահակ Բագրատունիէն պատուէր ստացաւ հայ ժողովուրդի պատմութիւնը գրելու, և կը լմնցնէր իր Պատմութիւնը Մեսրոպի մահը և թաղումը նկարագրելով, հեղինակին կը մնայ վերջիշել 790ին «հիւսած Ողբը և կցել անոր նոր կայականը արտասուքի, պաշտօնացնելու համար զայն Հայոց Պատմութեան իրրեւ վերջաբան»:

Ողբի մասին իր այս 'զիւտ'ին առթած խանդավառութիւնն է որ թերևս — կ'ըսեմ թերևս, որովհետեւ ինք միայն գիտէ — Հ. Ակինեանը մղեր է յաջորդ խիղախ քայլին, այն է Ղևոնդի և Խորենացիի նոյնացում:

Այդ զաղափարը յղանալուն մեծարգոյ Հայրը առաջին իսկ րոպէէն ինքզինքը դէմ առ դէմ գտած է երկու հեղինակներու լեզուի և ոճի բացայայտ տարբերութեան գորգեան հանգոյցին:

Թէև քանիցս յառաջ քշեր էր երիտասարդ տարիքի և ծեր տարիքի վարկածը, սակայն ինքն ալ յայտնապէս գոհ չէ այս բացատրութիւնէն, և իր գրքին մէջ Ղևոնդի և Խորենացիի ոճերու մասին քրտաւորապէս յայտնութիւնները կը ստեղծեն խառնաշփոթ տպաւորութիւն ընթերցողի մտքին մէջ:

Որովհետեւ քաջածանօթ է Խորենացիի ճոխ, բազմագունի, կուռ և պերճաբան ոճին, մասնաւոր ջանք կը թափէ Ղևոնդի գրելակերպի մասին խօսելուն գործածել բառեր, որ Ղևոնդին ալ ոճը բարձր մակարդակի մը խտրութիւն է: Եւ այս, հակառակ հայ գրականագէտներու և քննադատներու ջանքախիչ մեծամասնութեան կարծիքին Ղևոնդի համեստ և նիհար բանահիւսական ձիրքի մասին: Սոյն կարծիքը կրնանք ներկայացնել Հ. Ղևոնդ Ալիշանի բառերով. «Թէև չունենայ տիրաբար և վսեմական ոճ մի . . . բայց դարձեալ խոհական կերպ մի ցուցնէ և բաւական յստակ շարադրութեամբ, ընդ մէջ Ե.-Զ. դարուց նուրբ ճաշակով գրողաց և ընդ մէջ Ժ. դարու չափազանց ճոխաբանից, ինչպէս Յովհաննէս Զ. կաթողիկոս»:

Հ. Ակինեան որպէս փրկութեան յաստ կը կառչի նոր Բաղդիրք Հայկազնեան Լեզուի (Ա. 14) Ղևոնդի լեզուի մասին «յստակ և ընտիր հայկաբանութեամբ» որակման և կը կատարէ իր մարդանքները: Ան մէկդի կը շարտէ Ալիշանի և անոր նման խորհողներու կարծիքները պարզապէս ըսելով թէ ինք Աւգերեանի (Հայկազնեան) վճիռը ուղղագոյն կը համարէ:

Հայկազնեանը Ղևոնդի մասին միմիայն այդ երեք բառերը կը գործածէ. «յստակ և ընտիր հայկաբանութեամբ», առանց ունէ

ուրիշ բացատրութեան: Որ Հ. Ակինեան այս վճիռը կը հակադրէ բոլոր յետագայ գրականագէտներու կարծիքներուն թէեւ քիչ մը զարմանալի թուի շատ շատերուն, սակայն նկատելով իր մեծ ճիշդ Ղևոնդի ոճը հարուստ տեսնելու որպէսզի Խորենացիի ոճին համազօր բան մ'ըլլայ, պահ մը իրաւունք կուտամ իրեն, որ Հ. Աւգերեանի գրադատական կարողութիւնը ամենաբարձրը համարէ և պնդէ անոր Հայկազնեանի մէջ արձանագրած վճիռի մասին:

Սակայն Հ. Ակինեանի ընտրած այս բարձր հեղինակութիւնը վախճամ զինք

անելի մը կը մատնէ: Բազմահմուտ հայրը որ Ղևոնդի և Խորենացիի միենոյն անձը ըլլալը ապացուցանելու քրտնաթոր աշխատատանքին կը մխրճուի, անշուշտ Հայկազնեանին գլխած ըլլալու է տեսնելու թէ Հ. Աւգերեան Խորենացիի մասին ի՞նչ վճիռ կուտայ:

«... Այս է զլիսաւորն յաշակերտս... յերկրորդ կարգի թարգմանչաց... բոլորից գերազանց, կատարեալ ի հայկաբանութեան» (Ա. 13):

Բացատրութիւնը կը ձգենք Հ. Ակինեանին:

ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ

(Ծառունակելի՝ 2)

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

1500-ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԻՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ԵՒ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ 1500-ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԻՆԱԿԱՆ

Համաձայն մեր սրբեցեալ և Վեհ. Հայրապետի բարձր հրամանին Ս. Վարդանանց տօնին առթիւ երեսօղէմի մէջ ևս սկսան 1500ամեայ Յորելեանի տօնակատարութիւնները: Հանդիսութեանց բացումը կատարուեցաւ 7 Մարտ Զորքաշարթի երեկոյեան, երբ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր՝ կատարուեցաւ եկեղեցւոյ մէջ տօնին մեծահանդէս նախատօնակը, ի ներկայութեան յոգնախառն բաղմութեան և համայն ուսանողութեան: Իսկ 8 Մարտ Հինգշաբթի առաւօտեան ժամերգութեան վերջ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ: Եպիսկոպոսական շաթալ թագի զլուխ պատարագեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Բէմահան: Ս. Պատարագի ընթացքին վառեալ մոմեղինօք բեմ հանուեցաւ Վեհ. Տ. Տ. Գէորգ Ամենայն Հայոց Հայրապետին սրբաբառաւ կոնդակը, որով 1951 տարին կը հռչակէր իրբն Վարդանանց 1500ամեայ յորելինական տօնակատարութեան տարին: Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահաման կարգաց սոյն կոնդակը ի լուր բովանդակ հաւատացելոց: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ նաեւ Ս. Վարդանանց տօնին յատուկ Հոգեհանգստեան կարգը, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր:

Գեր. Տեղապահ Հօր կարգադրութեամբ յա-

ռաջիկայ Ս. Զատիկի տօնակատարութեան յետոյ Ս. Աթոռի կողմէ պիտի տրուի շքեղ պատարատութեամբ գրական ղեկարուեալ տական ցերեկոյթ մը ի յարգանս Ս. Վարդանանց 1500ամեայ Յորելինական տարեդարձին:

Ստորեւ կուտանք մինչ այդ երեսօղէմի մեր վարժարաններուն և դանադան ժողովրդային կազմակերպութեանց այս առթիւ կազմակերպած հանդիսութեանց համառօտ նկարագրականը:

Ս. ԱԹՈՌՈՑ Ս. ԹԱՐԴՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆԵՐ

15 Մարտ Հինգշաբթի յ. մ. ժամը 4ին, ժառանգաւորաց վարժարանի մեծ հանդիսասրահին մէջ, Ս. Թարգմանչաց վարժարանի Տեսչութեան նախաձեռնութեամբ, Ս. Թարգմանչաց վարժարանի աշակերտութիւնը կատարեց ներկայացումը Սմբատ Բիւրատի Աւարայրի Արծիւը թատերախաղին: Սոյն հանդիսութիւնը ունէր աւելի ներքին հանգամանք, տրուած ըլլալով վարժարանի աշակերտութեան համար միայն ու այս առթիւ տարբուած էր նաեւ աշակերտութեան յատուկ բանախօսական, արտասանական և երգերու բաժիններ: Սրուան նախագահն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահաման որ իր շինիչ

ու կուռ արտայայտութեամբ ոգի որեց բովանդակ աշակերտութիւնը, վարդանանց սուրբ յիշատակով:

Սոյն հանդիսութիւնը երեսուղէմի հայ հասարակութեան համար կրկնուեցաւ նաեւ 19 Մարտ երկուշաբթի երեկոյեան ժամը 8ին, երեսուղէմացի Հայոց Բարեսիրական Միութեան ակումբին մէջ, հովանաւորութեամբ Գեր. Տեղապահ Զօր և նախագահութեամբ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Գողարեանի: Մեր պղտիկները յաջող խաղարկութեամբ յուզեցին ներկայ հասարակութիւնը, եկեղեցւոյ և ազգին սիրովը լեցուն պահեր պարտադրելով բոլորին:

Այս առթիւ գոհունակութեան զգացումներ ունինք վարժարանի Հոգ. Տեաչին, ուսուցչութեան և բովանդակ աշակերտութեան թափուած աշխատանքին իրենց սրտառու ճիգերուն համար:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆԿ 1500ԱՄԵԱՅ ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ

ՏՈՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Նախածնունդութեամբ Ամմանի ժրջան Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի և Ամմանի Տեղական Խորհուրդին, 11 Մարտ 1951, կ. ա. ժամը 10ին, Ամմանի Սինեմա Բէթրա-ի մէջ տեղի ունեցաւ Ս. Վարդանանց 1500ամեայ Յօրեւելեան տօնակատարութիւնը, նախագահութեամբ Ս. Աթոռոյ Պատրիարքական Տեղապահ Գեր. Զօր, որ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի երեսուղէմէն ուղղակի հանդիսարան կը ժամանէր ճիշդ ժամը 10ին և կ'ընդունուէր 1500ի մօտ ներկաներու ջերմագին ծափահարութիւններով:

Տօնակատարութիւնը եղած է շքեղ ապրումներու պահ մը բովանդակ ներկաներուն համար, որոնց մէջ եղած են նաեւ Յօրդանանի շքեղայնքազարներէն ու զիւղերէն ալ հրաւիրեալներ:

Հոգեշնորհ Հովիւին բացման խօսքէն ետք, հետեւեալէ զօրծաղուեցան գրական, զեղարուեստական ճոխ յայտագրին բոլոր մասերը, կենդանի պատկերներ, արտասանութիւններ, մեներգներ, խմբերգներ, տրամախօսութիւններ կատարուած Ս. Աթոռոյ Ամմանի Հեթումեան վարժարանի տղոց և զաղութին Հայ երիտասարդ-երիտասարդուհիներու կողմէն: Ապա բնաբարձրացաւ օրուան բանասօսը՝ Գեր. Տեղապահ Հայրը, որ իր կուռ և պերճախօս բանասօսութեամբ լեցուց ներկաները, եկեղեցւոյն ու ազգին խորհուրդովն ու սիրովը-Վարդանանց մեծ գաղափարականովը:

Յայտագրին վերջին մասը կը կազմէր «Վարդանանք» տրամախօսութիւն մը որ բնմի ետեւէն բարձրախօսով հաղորդուեցաւ հանդիսականներուն: Տրամախօսութիւնը քաղուած էր Ս. Բիւրատի «Աւարայրի Արժիւն» թատերական հատորէն, վ. Թէքէեանի լիորհուրդ Վարդանանց քերթուածէն ու ճոխացուած էր Վարդանի նուիրեալ եկեղեցական շարականներով ու երգերով:

Հանդէսը փակուեցաւ Տեղապահ Գեր. Զօր պահպանիչով ու աղօթքով:

Կրնանք ըսել որ Վարդանանց 1500ամեակի տօնակատարութիւնը պիտի մնայ հոգեկան խորունկ յուզումներով լեցուն անմոռանալի օր մը Ամմանի Հայութեան համար, որուն տարեգրութեան մէջ ցարդ աննախընթաց է այս ոգեւորութեամբ և այսքան յոգնախառն քաղմութեամբ ազգ. հաւաքոյթ:

ՏՈՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ Զ. Մ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ԵՐՈՒՍԱԸԼԵՍԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

Երեսուղէմի Զ. Մ. Ը. Միութիւնը Շաբաթ, 10 Մարտ յ. մ. ժամը 7-ին կազմակերպած էր գրական-զեղարուեստական երեկոյթ մը նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեանի, և ներկայութեամբ վարդապետ հայրերու և խուռներամ մերազն ժողովրդեան Մայրավանքի ժառանգաւորաց վարժարանի հանդիսասրահին մէջ:

Յայտագիրը կը բաղկանար արտասանութիւններէ, խմբերգներէ՝ որ կը վարէր ձեռնահասօրէն Տիար Համբարձում Գալայնեան և մեներգներէ, որոնք կատարուեցան կարելի խղճմտութեամբ: Իսկ օրուան բանասօսն էր Ս. Աթոռի Միաբաններէն Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան, որ վերահանց Ս. Վարդանանց կրօնական և ազգային նշանակութիւնը և վեհափառ ու ազգանուէր մեր կաթողիկոսին, Ս. Վարդանանց 1500ամեակի տօնակատարութեան Հայրապետական բարձր հրամանին բարերար նշանակութիւնը, Հայ ժողովուրդի այս վայրավատին օրերուն մանաւանդ, ուր մենք ամենէն աւելի պէտք ունինք Ս. Վարդանանց համերաշխ, Ազգին ու եկեղեցւոյն սիրովը փափաքող ոգին ներշնչումին:

Հանդէսը փակուեցաւ Գեր. Տեղապահ Զօր պահպանիչով և փակման խօսքով, որ այնքան պերճախօս արտայայտութեամբ վերահանց Մամիկոնեան Տունին նուիրումն ու ծառայութիւնները Հայ ժողովուրդի գերագոյն շահերուն, տալով նոյն ատեն օրուան պատգամը — նոյնինքն տօնակատարուող սուրբերուն կամքը — համերաշխութիւն, սէր և նուիրում մեր ժողովուրդի բոլոր տարրերուն աշխարհի որ անկիւնն և կամ ինչ վիճակի մէջ ալ ըլլան:

ՏՈՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ Զ. Ե. ՄԻՈՒԹԵԱՆ

ԵՐՈՒՍԱԸԼԵՍԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

11 Մարտ Կիր. յ. մ. ժամը 7ին Զ. Ե. Միութեան երեսուղէմի մասնաճիւղը իր ակումբի սրահին մէջ տուաւ ռատիօ բարձրախօսի հաղորդում մը ուր կը ներկայացուէր Ս. Վարդանանց տրամախօսութիւնը քաղուած Ս. Բիւրատի «Աւա-

բայրի Արմիւրը Թատերախաղէն, ու նախացուած վ. Թէքէեանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծութեամբ և մեր շարականներու ու ժողովրդային երգերու շարքով մը:

Տրամախօսութեան զանազան պահերուն ելեկտրական լոյսերու շողարձակումով կը զուգարուէր բեմին վրայ զետեղուած վարդանի մեծադիր կենդանագիրը, այսպէս աւելի ևս շնչտնով տրամախօսութեան զգացումներուն զնացքը, որ արդէն իսկ բաւական յաջող խաղարկութեամբ մը իր մէջ առած էր բոլոր ներկաներուն լարուած ուշադրութիւնն ու ամբողջ ուշադրութիւնը:

Աւարախօսութիւնը պարզայ մըն է մեզի համար տեսնել թէ ինչպէս երուսաղէմի գիտակից Հայ հասարակութիւնը իր բոլոր խաւերով ու կարելի ճիգերով կուզայ բերելու խոր յարգանքի բաժինը Վարդանանց սիրելի ու անմեռ յիշատակին, այսպէս բերելով նաև լաւագոյն ընդառաջումը մեր սիրելիքի և վեհափառ Հայրապետի ու աղագաւէր հոգիէն բղիթը բարձր տնօրինութեան:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

※ 4 փետր. կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն վերնատան մեր մատուռին մէջ: Պատարագիչն է Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

※ 5 փետր. Բշ. — Յ. մ. ժամը 3ին Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Հայրիկ վարդապետներ, ինչպէս նաև Տիար Կ. Հինգիւնի իւրայեւ մեկնեցան աթոռապատկան կալուածներու վերտացման գործով:

※ 7 փետր. Դշ. — Յ. մ. ժամը 3.30ին տեղւոյս բրիտանական ընդհանուր հիւպատոսը Sir Hugh Dow և երկու անդլիայի զբաղէտներ Պրեյք. Evelyn Waugh և Christopher Sykes և Պր. G. Taylor այցելեցին նախ Ս. Գաղութեանց Տաճար և ապա հիւրասիրութեան Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ, Գեր. Տեղապահ Հօր կողմէ:

※ 11 փետր. կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գաղութեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան:

※ 18 փետր. կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն վերնատան մեր մատուռին մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարուծիւն Վրդ. Մուշեան:

— Առաւօտեան ժամը 9ին Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Հայրիկ վարդապետներ և Տիար Կ. Հինգիւնի Մայրավանք վերադարձան իւրայեւ:

※ 19 փետր. Բշ. — Կ. ա. ժամը 10ին տեղւոյս Պեչիգայի ընդհանուր հիւպատոսը և Նոր կարգուած իր փոխանորդը այցելեցին պատրի-

արքարան. ի բացակայութեան Գեր. Տեղապահ Հօր, Գեր. Տ. Սուրէն Վրդ. ընդունեց զիրենք:

※ 23 փետր. Աւր. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տոնին նախատեսակը կատարուեցան Ս. Գաղութեանց Մայր Տաճարին մէջ, նախադահլիճեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան:

— Կէսօրուան ժամը 12ին ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր Գեր. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգիւնի փոխադարձ այցելութիւն տուաւ Պեչիգայի ընդհանուր հիւպատոսին:

※ 24 փետր. Եր. — Մերոյն Սարգիս Զօրավարին. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գաղութեանց Տաճարին Ս. Սարգիս հնազարեան մատուռին մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աւրաշամեան: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ հանգիստաւոր Հոգեհանգստեան պաշտօն Ս. Արքայ բարեւար Վանք. Դաւիթ Պէյ Կիլիկեկեանի ծնողաց Սարգիս և Տիւրմուշ ճոզիմեանի և ճանգիւս:

— Յ. մ. ժամը 4ին Գեր. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգիւնի ներկայ գտնուեցաւ հրաժեշտի թէյասեղանի մը, տրուած Ամերիկեան հիւպատոսարանին կողմէ: Ամերիկեան ընդհանուր հիւպատոսին և իր տիկնոջ մեկնումի առիթով, Y. M. C. A. ի սրահին մէջ:

※ 25 փետր. կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

※ 26 փետր. Բշ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան Տեսաւընդառաջի տոնին նախատեսակը և Տեսաւընդառաջի երեկոյեան հանգիստութիւնը կատարուեցաւ Ս. Գաղութեանց Մայր Տաճարին մէջ, նախադահլիճեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի, իսկ զիշերասկիզբին կատարուեցաւ եկեղեցի և Հակման արարողութիւն:

Ըստ հնամենի Հայկական սովորութեան երեկոյեան ժամերգութեանէն յետոյ վանքի բոլոր թաղերուն մէջ կը վառէին խառոյկներ, որոնց շուրջ ժողովուրդը սարքած էր խախնաւական տեսարաններ:

※ 27 փետր. Դշ. — Տեսաւընդառաջ. — Հանգիստաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գաղութեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան:

— Յ. մ. ժամը 5ին Ամերիկեան ընդհ. հիւպատոսը M. Gibson իր հետևորդներով հրաժեշտի այցելութիւն տուաւ պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի կողմէ:

※ 28 փետր. Դշ. — ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր Գեր. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգիւնի այցելեց երուսաղէմի Հարէմ-էլ-Շէրիֆի պահապան և Սուրբ Տեղեաց բարձր վերահսկիչ Վանք. Բաղդալ փաշա Նաշաշիպի իր հիւանդութեան առթիւ, Համբարձման Օկոստոս վերթօրիա հիւանդանոցին մէջ և բարեմաղթութիւններ ըրաւ իր շուտափոյթ ապաքինման համար:

✱ 4 Մարտ Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարին վերնատան մեր մատուռին մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյ Միաբաններէն Տ. Յովհաննէս Վրդ. Էթմէքեանի տարելիցին առթիւ: ապա Միաբանութիւնը իր շիրմին վրայ կատարեց Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն:

✱ 5 Մարտ Բչ. — Առաւօտեան Գալանտիայէն օդանաւով Պարսկաստան մեկնեցաւ իբրեւ Ս. Աթոռոյ նուիրակ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

✱ 7 Մարտ Դշ. — Կէսօրէ վերջ ժամը 4.30-ին Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգիեանի այցելեց Վսեմ. Բաղէպ փաշա Նաշաշիպի իր հիւանդութեան առթիւ: Համարձման լերան Օկոստա Վիգթորիա հիւանդանոցին մէջ:

✱ 9 Մարտ Ուրբ. — Իրաւական սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ քաղաքիս Ասորիներու Ս. Մարկոս եկեղեցւոյն մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան: Յետ Ս. Պատարագի վարդապետ հայրեր պատուատիրութեան Ասորեաց Տեսչէն իրենց Տեսչարանին մէջ: Արարողութեանց կը նախագահէր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան:

— Յ. մ. Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրիսիկեան որ արձակուրդով մեկնած էր Կ. Պոլիս վերադարձաւ Ս. Աթոռ:

✱ 10 Մարտ Շր. — Ըստ աւանդական կարգին Մեծ Պահոց երեկոյեան ժամերգութեան ընթացքին Գեր. Տեղապահ Հօր և Հոգ. վարդապետներու մասնակցութեամբ փակուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի բոլոր խորանները և զխաւոր սրբանկարները վարագոյրներով:

ԵԹՈՎՊՈՅ ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

ՈՒՆՏԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

17 փետր. Շարաթ առաւօտեան ժամը 8-ին Եթովպիոյ Գահաժառանգը — որ ուխտաւորաբար եկած էր Երուսղէմ — իր ուխտի այցելութիւնը տուաւ Զրիստոսի Ս. Գերեզմանին եւ Գողգոթայի խաչելութեան տեղոյն:

Երուսղէմի մէջ Հապէշ համայնքը ճինէն իվեր ճանչցուած է — ինչպէս նաեւ Ղաթի եւ Ասորի համայնքներ — իբրեւ Երուսղէմի Հայոց Պատրիարքութեան հետեւորդներ ու Ս. Տեղեաց իրաւակարգին մէջ ենթարկուած են մեր Պատրիարքարանի վերին հսկողութեան:

Հետեւաբար ի Ս. Յարութիւն Գահաժառանգին ընդունելութեան արարողութիւնը կատարուեցաւ

տեղոյն մեր Հոգեշնորհ Տեսչին կողմանէ, մասնակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ի եւ Հոգ. Տ. Մաշտոց Արեղայի եւ տեղոյն քարեշնորհ ուրարակիր Միաբաններուն: Իսկ ի դիմաց Գեր. Տեղապահ Հօր ներկայ էր Գեր. Տ. Սուրէն Վրդ. Զէմհանեան:

Վսեմ. Գահաժառանգը երբ հասաւ Տաճարին դուռը ողջունուեցաւ մեր, Յունաց եւ Հաւանաց Հոգ. Տեսչներէն ու առաջնորդուեցաւ Պատանաւ տեղոյն երկրպագութեան՝ ուր կը սպասէին մեր զոյգ ուրարակիր մոմակալներն ու լուսարար վարդիշուր ի ձեռին: Ապա Վսեմ. Հիւրը առաջնորդուեցաւ Ս. Գերեզման ու Գողգոթայ, ուր կատարելէ յետոյ իր ուխտը Զրիստոսեայ Թագաւորազունի մը խոր երկիւղածութեամբ, հրաժեշտ առաւ զճոռնակ արտայայտութեամբ իրեն ընծայուած պատուոյ այս ընդունելութեան համար:

ՏՈՔԹ. ՂԱԶԱՐՈՍ ՏԵՄԻՐՃԵԱՆ

Խոր վիշտ պատճառեց Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութեան եւ զինքը ճանչցող ու սիրող բարեկամներուն՝ մահը այս պատուական ազգայինին որ տեղի ունեցաւ 22 փետրուարին Եաֆայի մէջ:

Տօրթ. Տէմիրճեան իր անթեր, ուղիղ եւ ազնւական նկարագրով ու պատրաստակամ ողիմ ծանօթ էր ոչ միայն Հայ շրջանակներուն այլ նոյն իսկ օտարներուն, որոնց բոլորին սէրն ու յարգանքը կը վայելէր հաւասարապէս: Ան Պաղեստինի դէպքերու բերումով ստեղծուած դժուարին օրերուն տեսակ մը պատուոյ ներկայացուցիչը եղաւ Եաֆայի Հայ գաղութին եւ օժանդակը տեղոյն Հոգ. Հովիւ ու Ս. Աթոռոյ ներկայացուցիչ Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Ալպատեանին, որ յաւերժ ողբալի Տօրթորին մահով կը կորսնցնէ անձնուէր գործակից մը եւ հաւատարիմ բարեկամ մը:

Գեր. Տեղապահ Հօր մասնաւոր կարգադրութեամբ, ի դիմաց Ս. Աթոռին Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան ներկայ գտնուեցաւ իր Թաղման արարողութեան որ կատարուեցաւ Տոպալէի Ս. Նիկողայոս Եկեղեցւոյն մէջ ու մարմինը ամփոփուեցաւ տեղոյն վանապատկան գերեզմանատան մէջ: Այս առթիւ Ս. Աթոռոյ կողմէն մասնաւոր ծաղկեպսակ զետեղուեցաւ հանգուցեալի Թագաղին վրայ:

Երկնային հանգիստ իր հոգիին ու Ս. Հոգւոյն միւթթարութիւն իր սգաւոր աիկնոջ, անչափահաս փոքրերուն եւ բոլոր պարագաներուն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	երես
Կոնգակ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի՝ վասն Վարդանանց պատերազմի հերոսամարտի 1500-ամեակի առթիւ .	49
ՔՄԲԱԳԻՐԱԿԱՆ	
— Վարդանանց հերոսամարտի 1500-ամեակը .	58
Կարմիր շաւանը .	Ե. Վ. Տ. 63
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— Վարդանի սիրտը .	ԵՂԻՎԱՐԴ 66
— Խօսք ընդ Վարդանայ .	Գ. ՄՈՒՇԵՆՑ 69
Վարդանի ճառը .	Յ. ՕՇԱԿԱՆ 71
Էջ մը Եղիշեկէն .	» » 73
ՀԻՆ ԷԶԵՐ	
— Քարոզ Մեբոց Վարդանանց Հայոց .	Հրատ. Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ 75
ՊԼՏՄԱԿԱՆ	
— Եղիշեկ պատմագիր և Վարդանանց պատե- րազմը (1) .	ՊԼՐԳԵՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ 76
— Հայոց ընդդիմութիւնը պարսից թագաւո- րին դէմ .	Գ. Ս. Չ. 80
— Ղեւնդեան Բանաններ .	ԳԵՂԱՄ ՍՐԿ. ԳԱՐԻԿԵԱՆ 83
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Խորենացի, Եղիշեկ և Հ. Ներսէս Ակիմեան .	ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ 88
Մեբոց Վարդանանց նահապետութեան 1500-ամեայ Յոբելիական Տօնակատարութիւններ՝ Երուսաղէմի և Ամմանի մէջ .	93
Ս. ԶԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ	
— Ամսօրեայ լուրեր .	95
ՏԻՐՈՒՆԻ	
— Տոբ. Ղազարոս Տեմիրճեան .	96

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in
JERUSALEM